

**«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ  
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՍՈՒՄ»**

**«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ»**

**«ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»**



**ԳՂ ԶՈՒ-Ի ԶՕՊ-Ի ԵՎ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

**СОВЕРШЕНСТВОВАНИЕ ПВО И АВИАЦИИ ВС РА**

**THE IMPROVEMENT OF ANTI-AIRCRAFT DEFENSE AND AVIATION  
OF THE ARMED FORCES OF THE RA**

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԳԱՎԱՐԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՄԲ  
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի  
և Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը.

Մոսկվա, 2013 թ. սեպտեմբերի 3



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

1-2 (75-76). 2013

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Քոբանջյան Հ. Ս.**  
բաղաքական գիտությունների դոկտոր (Ռ-Դ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակահաղթելություն գծով փորձագետ (ԱՄՆ) (մախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.**  
(գլխավոր խմբագիր)
- Այդինյան Ռ. Ա.**
- Այվազյան Լ. Գ.**
- Ապրիանով Է. Ա.**
- Ավետիսյան Վ. Ն.**
- Գևորգյան Ն. Ի.**
- Դավթյան Ա. Մ.**
- Իսախանյան Մ. Ռ.**
- Խաչատուրով Յու. Գ.**
- Կարապետյան Մ. Ն.**
- Խաչատրյան Տ. Վ.**
- Մարգարյան Վ. Հ.**
- Մարտիրոսով Լ. Ա.**
- Միրզաբեկյան Ա. Ռ.**
- Մուրադյան Կ. Ռ.**
- Նազարյան Ա. Ս.**
- Շիրինյան Մ. Ա.**
- Սեդրակյան Ս. Գ.**
- Վարդանյան Ա. Գ.**
- Տեր-Գրիգորյան Ե. Գ.**
- Տոնոյան Գ. Է.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ ԶՈՒ-Ի ՀՕՊ-Ի ԵՎ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

- Յու. Գ. Խաչատուրով*, Օդային հարձակման միջոցներից Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության համակարգի զարգացման հեռանկարները պաշտպանական բարեփոխումների լույսով . . . . . 9
- Ա. Գ. Վարդանյան*, Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում հակաօդային պաշտպանության համակարգի արդյունավետության մեծացման հիմնական ուղղությունները . . 22
- Ա. Վ. Մուրադյան, Ս. Ա. Գասպարյան*, Հայաստանի մարտական ավիացիան երեկ, այսօր, վաղը . . . . . 31
- Դ. Կ. Բալայան*, Ռազմական ավիացիայի և ՀՕՊ-ի մասնագետների պատրաստման համակարգի զարգացումը պաշտպանական բարեփոխումների համատեքստում . . . . . 40
- Մ. Վ. Մարկոսյան*, ՀՕՊ-ի գործերի տարաշարժունության մեծացման տեսանկյունից արդիական ռադարների ստեղծման որոշ հարցեր . . 45
- Վ. Ն. Հակոբյան, Հ. Գ. Շեկյան*, Համաշխարհային ավիացիայի զարգացման հեռանկարները . . . 51
- Մ. Ռ. Բասիանյան, Ա. Կ. Միրզաբեկյան, Ա. Հ. Շապյան, Բ. Վ. Ոսկանյան, ՀՀ ՌԱՀ-ի ներդրումը ՀՕՊ-ի և ռազմական ավիացիայի զարգացման գործում . . . . . 59*
- Ա. Հ. Բաղդասարյան, Ս. Ա. Քոչարյան*, Վրագետնյա անշարժ նշանակետի ուղեկցումը թռչող սպարատներից . . . . . 68
- Մ. Վ. Եփրեմյան*, «Էրեբունի» օդանավակայանի շրջանում օդերևութաբանական պայմանների շրջանացումը՝ ըստ թռիչքների բարդության աստիճանի . . . . . 76

**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

*Մ. Մ. Մարգարյան*, «Լավ կառավարման» սկզբունքների ներդրումը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում խաղաղության մշակույթի հաստատման գործընթաց . . . . . 80

**ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

*Ս. Գ. Գալստյան, Հ. Մ. Դարբինյան, Ա. Վ. Նազարյան, Գ. Ռ. Վարդանյան, Ռ. Գ. Կիրակոսյան*, Պատերազմների ժամանակ ռազմական բժշկության և քաղաքացիական առողջապահության ինտեգրման որոշ հիմնախնդիրներ . . . . . 91

*Ռ. Գ. Խաչատրյան*, Ռազմաբժշկական ապահովման համակարգում կանխարգելիչ և սանիտարահալածահամաճարակային միջոցառումների նշանակությունը . . . . . 96

**ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

*Լ. Լ. Ուլուբաբյան*, ԱՊՀ շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև համագործակցությունը (1995–1997 թթ.) . . . . . 104

*Ա. Ա. Երիցյան*, Անկարալուծ Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցչության գործունեությունը . . . . . 111

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

*Հ. Հ. Ամիրջանյան*, Ցարական կառավարության ժողովրդագրական քաղաքականությունը Լոռու գավառում (19-րդ դ. առաջին երեսնամյակ) . . . . . 119

**ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Դ. Ա. Չիլինգարյան, Ա. Հ. Հակոբյան, Ա. Ա. Մարտիրոսյան, Լ. Հ. Պապիկյան, Թ. Վ. Փիրոսյան*, Համարի բառարան . . . . . 127

**ՀԱՆԳԵՍԻ ԳԻՏԱՆՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
*Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

*Լ. Ս. Արզումանյան*, բանասիրական գիտությունների դոկտոր,  
*Ս. Ա. Գալստյան*, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
*Ս. Գ. Գալստյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

*Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
*Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

*Ռ. Գ. Գևորգյան*, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
*Բ. Ն. Հարությունյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

*Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
*Հ. Հ. Մաթևոսյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
*Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

*Մ. Մ. Մարգարյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
*Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

*Մ. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
*Կ. Ա. Մոսոյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

*Յու. Ս. Չիլինգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
*Վ. Ս. Մարգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

*Ռ. Ա. Մաֆրասարյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

*Ա. Հ. Մինոնյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

*Հ. Ս. Միսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

# «АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА  
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ  
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА

МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 1 – 2 (75 – 76), 2013

Издается 4 раза в год

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

*Котангджян Г. С.*, доктор политических наук (РФ), Действительный член  
Российской Академии военных наук, научный эксперт  
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),  
*Аветисян В. Н.*, *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Априамов Э. А.*, *Варганян А. Г.*,  
*Георкян Н. И.*, *Давтян А. М.*, *Исаханян М. Р.*, *Карапетян М. Н.*, *Маргарян В. Г.*,  
*Мартirosов Л. А.*, *Мирзабекян А. Р.*, *Мурадян К. Р.*, *Назарян А. С.*, *Седракян С. Г.*,  
*Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Хачатрян Т. В.*, *Хачатуров Ю. Г.*, *Ширинян М. А.*

## СОДЕРЖАНИЕ

### СОВЕРШЕНСТВОВАНИЕ ПВО И АВИАЦИИ ВС РА

- Ю. Г. Хачатуров.* Перспективы развития системы обороны территории Республики Армения от средств воздушного нападения в свете оборонных реформ ..... 9 (19)\*
- А. Г. Варганян.* Основные направления повышения эффективности системы противовоздушной обороны в рамках оборонных реформ ..... 22 (29)
- А. В. Мурадян, С. А. Гаспарян.* Боевая авиация Армении вчера, сегодня, завтра ..... 31 (38)
- Д. К. Балаян.* Развитие системы подготовки специалистов в области военной авиации и ПВО в контексте оборонных реформ ... 40 (43)
- М. В. Маркосян.* Некоторые вопросы создания современных радаров с точки зрения увеличения маневренности войск ПВО ... 45 (49)
- В. Н. Акопян, Г. Г. Шекиян.* Перспективы развития мировой авиации ..... 51 (57)
- М. Р. Исаканян, А. К. Мирзабекян, А. А. Есян, Б. В. Восканян.* Вклад ВПК РА в развитие ПВО и военной авиации ..... 59 (66)
- А. А. Багиян, С. А. Кочарян.* Сопровождение наземной неподвижной цели с летательных аппаратов ..... 68 (74)
- М. В. Епремян.* Районирование метеорологических условий в районе аэродрома «Эребуни» по степени сложности полетов ..... 76 (79)

### ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ

- М. М. Маргарян.* Внедрение принципов «надлежащего управления» в качестве процесса утверждения культуры мира в Республике Армения ..... 80 (88)

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

## **ВОЕННАЯ МЕДИЦИНА**

*С. Г. Галстян, А. М. Дарбинян, А. В. Назарян, Г. Р. Варганян, Р. Г. Киракосян.* Некоторые проблемы интеграции военной медицины и гражданского здравоохранения во время войн . . . . . 91 (101)

*Р. Г. Хачатрян.* Значимость профилактических и санитарно-противоэпидемических мероприятий в системе военно-медицинского обеспечения . . . . . 96 (102)

## **ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ**

*Л. Л. Улубабян.* Сотрудничество между Республикой Армения и Российской Федерацией в рамках СНГ (1995–1997 гг.) . . . . . 104 (116)

*А. А. Ерицян.* Деятельность представительства Советского Азербайджана в Анкаре . . . . . 111 (117)

## **ИСТОРИЯ**

*А. О. Амирджанян.* Демографическая политика царского правительства в Лорийской области (первая треть XIX века) . . . . . 119 (125)

## **ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*Д. С. Чилингарян, А. А. Акопян, А. А. Мартиросян, Л. Г. Папикян, К. В. Пироян.* Словарь номера . . . . . 127 (128)

## **НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*Р. В. Агузумцян, кандидат психологических наук, доцент;*

*Н. У. Аракелян, академик НАН РА;*

*Л. С. Арзуманян, доктор филологических наук;*

*Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;*

*В. М. Арутюнян, академик НАН РА;*

*Г. Е. Багдасарян, академик НАН РА;*

*С. А. Галстян, доктор филологических наук, профессор;*

*С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;*

*Г. А. Геворкян, академик НАН РА;*

*Р. Г. Геворкян, доктор геологических наук, профессор;*

*А. А. Манташян, академик НАН РА;*

*М. М. Маргарян, доктор политических наук, профессор;*

*Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;*

*Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;*

*М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;*

*К. С. Мосоян, доктор технических наук, профессор;*

*В. С. Саркисян, академик НАН РА;*

*Р. А. Сафрастян, член-корреспондент НАН РА,*

*доктор исторических наук, профессор;*

*А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,*

*доктор исторических наук, профессор;*

*А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;*

*Ю. С. Чилингарян, академик НАН РА*

# «**HAIKAKAN BANAK**» («**ARMENIAN ARMY**»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,  
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,  
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 1–2 (75–76). 2013

Is published 4 times a year

## EDITORIAL BOARD

*Kotanjian H. S.*, Doctor of Political Sciences (RF), Fellow Member,  
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),  
*Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Apreamov E. A.*, *Avetisyan V. N.*, *Ayvazyan L. G.*,  
*Davtyan A. M.*, *Gevorkyan N. I.*, *Idnyan R. A.*, *Isakhanyan M. R.*, *Karapetyan M. N.*,  
*Khachatourov Yu. G.*, *Khachatryan T. V.*, *Margaryan V. H.*, *Martirossov L. A.*,  
*Mirzabekyan A. R.*, *Muradyan K. R.*, *Nazaryan A. S.*, *Sedrakyan S. G.*, *Shirinyan M. A.*,  
*Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*, *Vardanyan A. G.*

## CONTENTS

### THE IMPROVEMENT OF THE AIR DEFENSE AND AVIATION OF THE RA ARMED FORCES

- Yu. G. Khachatourov.* The perspectives of developing the defense system of the territory of the Republic of Armenia against the means of air attack in the light of defense reforms . . . . . 9 (20)\*
- A. G. Vardanyan.* Basic directions to increase the efficiency of the Air Defense system in the framework of defense reforms . . . . . 22 (30)
- A. V. Muradyan, S. A. Gasparyan.* Armenia's combat aviation yesterday, today and tomorrow . . . . . 31 (39)
- D. K. Balayan.* The development of the training system of specialists in the sphere of military aviation and Air Defense in the context of defense reforms . . . . . 40 (44)
- M. V. Markosyan.* Some issues on creating up-to-date radars from the perspective of increasing maneuverability of the Air Defense troops . . . . . 45 (50)
- V. N. Hakobyan, H. G. Shekyan.* The perspectives of developing the world aviation . . . . . 51 (58)
- M. R. Isakhanyan, A. K. Mirzabekyan, A. H. Yesayan, B. V. Voskanyan.* The contribution of the RA Military-Industrial Complex to the development of Air Defense and military aviation . . . . . 59 (67)
- A. H. Baghiyan, S. A. Kocharyan.* Ground stationary target tracking by aircraft . . . . . 68 (75)
- M. V. Yepremyan.* The zoning of meteorological conditions in the area of «Erebuni» airdrome by the degree of flights complexity . . . . . 76 (79)

### POLITICAL SCIENCE OF SECURITY

- M. M. Margaryan.* The implementation of the principles of «good governance» as a process of sustaining the culture of peace in the Republic of Armenia . . . . . 80 (89)

---

\* Numbers in brackets mean the page of the text in English.

## MILITARY MEDICINE

*S. G. Galstyan, H. M. Darbinyan, A. V. Nazaryan, G. R. Vardanyan, R. G. Kirakosyan.* Some problems of the integration of military medicine and civilian health care in times of war . . . . . 91 (102)

*R. G. Khachatryan.* The significance of preventive and sanitary-antiepidemic measures in the system of military medical support . . . . . 96 (103)

## MILITARY-POLITICAL HISTORY

*L. L. Ulubabyan.* The cooperation between the Republic of Armenia and the Russian Federation within the CIS framework in 1995–1997 . . 104 (117)

*A. A. Yeritsyan.* The activity of the mission of Soviet Azerbaijan in Ankara . . . . . 111 (118)

## HISTORY

*H. H. Amirjanyan.* The demographic policy of the Tsarist government in Lori region (the first third of the 19th century) . . . . . 119 (126)

## MILITARY TERMINOLOGY

*D. S. Chilingaryan, A. H. Hakobyan, A. A. Martirosyan, L. H. Papi-kyan, Q. V. Piroyan.* Volume Dictionary . . . . . 127 (129)

## SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

*R. V. Aghouzoumstian,* Candidate of Psychological Sciences, Docent;

*N. H. Arakelian,* Full Member, NAS RA;

*L. S. Arzumanyan,* Doctor of Philology;

*G. Y. Baghdassarian,* Full Member, NAS RA;

*Y. S. Chilingarian,* Full Member, NAS RA;

*S. A. Galstyan,* Doctor of Philology, Professor;

*S. G. Galstyan,* Doctor of Medical Sciences, Professor;

*H. A. Gevorkian,* Full Member, NAS RA;

*R. G. Gevorkian,* Doctor of Geological Sciences, Professor;

*B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor;

*V. M. Haroutyunian,* Full Member, NAS RA;

*A. H. Mantashian,* Full Member, NAS RA;

*M. M. Margaryan,* Doctor of Political Sciences, Professor;

*H. H. Matevosyan,* Corresponding Member, NAS RA;

*E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor;

*M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor;

*K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor;

*R. A. Safrastyan,* Corresponding Member, NAS RA,

Doctor of Historical Sciences, Professor;

*V. S. Sargsian,* Full Member, NAS RA;

*A. H. Simonyan,* Corresponding Member, NAS RA,

Doctor of Historical Sciences, Professor;

*H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor



**ՀՀ ՁՈՒ-Ի ՀՕՊ-Ի ԵՎ ԱՎԻԱՑԻԱՅԻ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

**СОВЕРШЕНСТВОВАНИЕ ПВО  
И АВИАЦИИ ВС РА**

**THE IMPROVEMENT OF THE AIR DEFENSE  
AND AVIATION OF THE RA ARMED FORCES**



ՕԴԱՅԻՆ ՀԱՐՉԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍՈՎ

ՅՈՒ. Գ. ԽԱՉԱՏՈՒՐՈՎ, գեներալ-գնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ պետ



Պատմության ընթացքում պետության և նրա բնակչության անվտանգությունը ընկալվել է որպես արտաքին զինված հարձակումից պաշտպանվածություն, այսինքն՝ ռազմական անվտանգություն: Հայաստանի Հանրապետության շուրջն ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրադրության պայմաններում ազգային անվտանգության ռազմական բաղադրիչը մեզ համար դարձել է առանցքային:

Մեր արևելյան հարևանի ռազմաքաղաքական դեկավարության բազմաթիվ ռազմատենչ հայտարարությունները և ռազմամոլական գործողությունները մեր պետությունների միջև առկա հակասությունները ռազմական ճանապարհով լուծելու նրա մտադրության վկայություններն են: Ունենալով զգալի ֆինանսական ռեսուրսներ՝ նա ձգտում է, ստեղծելով մեծ քանակությամբ ժամանակակից սպառազինության պաշարներ, հասնելու մեր նկատմամբ զգալի ռազմական գերակշռության և, միևնույն ժամանակ, փորձում է մեզ ներքաշել սպառազինությունների մրցակազմի մեջ՝ հյուծելով մեր տնտեսությունը: Վերջերս նա էապես հարստացրել է օդային հարձակման միջոցների (ՕՀՄ) իր զինանոցը՝ բանակը զինելով մարտավարական ավիացիայի ինքնաթիռներով ու բանակային ավիացիայի ուղղաթիռներով, անօդաչու թռչող սալարատներով, ձեռք է բերել գերձզգրիտ զենքի տարրերով օժտված հրթիռային համալիրներ և համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր:

Ընդունել մարտահրավերը և առանց համապատասխան ֆինանսական ու նյութական ռեսուրսների ներքաշվել սպառազինությունների մրցակազմի մեջ, մեզ համար նշանակում է տնտեսական և սոցիալական անկում՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ուստի մեր պետության դեկավարությունը, համակողմանիորեն գնահատելով ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը, իրագործում է պաշտպանական բարեփոխումների և զինված ուժերի զարգացման ծրագիրը, որի հիմնական էությունը պաշտպանունակությունը պահանջվող մակարդակի հասցնելու նպատակով իրագործվող համապետական և բուն ռազմական միջոցառումներով ոչ թե քանակական, այլ որակական պարամետրների բարելավումն է: Տվյալ ծրագրի իրացումը հնարավորություն կտա միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում համապատասխան կերպով արձագանքելու բոլոր հնարավոր ռազմական սպառնալիքներին:

Ռազմական գործողությունների վարման բնույթի, ձևերի և եղանակների

արմատական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել վերջին ժամանակներում, մեզանից պահանջում են զինված ուժերի կիրառման, շինարարության և կառավարման կազմակերպման ավելի ճկուն ռազմավարության մշակում: Դրա հետ մեկտեղ ի հայտ է եկել մարտական գործողությունների վարման ևս երկու կարևոր ոլորտ՝ օդատիեզերական և տեղեկատվական տարածությունները:

Ժամանակակից պատերազմներն արդեն չեն կարող տեղի ունենալ առանց ռմբակոծումների, հրթիռային ու ռադիոէլեկտրոնային հարվածների, որոնց թիրախն են, առաջին հերթին, հակառակորդի ավիացիան, հրթիռային զորքերը և հրետանին, նրա ՀՕՊ-ի համակարգը, կառավարման կետերը, ենթակառուցվածքի արդյունաբերական, էներգետիկ և այլ կարևոր օբյեկտները, ինչպես նաև ցամաքային զորքերի հիմնական խմբավորումները: Օդում գերազանցության ձեռքբերումը դարձել է ժամանակակից պատերազմի առավել կարևոր գործոններից մեկը:

Ավիացիան և հրթիռային զորքերը կարող են կատարել այս խնդիրները հեռավոր շրջաններից, ինչպես նաև առանց նախնական լրիվ կենտրոնացման, և խոցել նշանակետերը հակառակորդի տարածքի գործնականում ամբողջ խորությամբ: Առանձնահատուկ սպառնալիք են նաև հեռահար գործողության վրազետնյա և օդային բազավորման գերճշգրիտ զենքի առկայությունն ու զարգացումը:

Այս պայմաններում օդից հարվածների հետմղումը ձեռք է բերում առաջնակարգ, վճռորոշ նշանակություն, և դրա արդյունքներից են գործնականում կախված պատերազմի ընթացքն ու ելքը և ընդհանուր առմամբ պետության ճակատագիրը: Այսպիսով՝ հակաօդային պաշտպանությունը դառնում է պետության ռազմական անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչներից և նրա զինված ուժերի հիմնական խնդիրներից մեկը: Այդ պատճառով էլ օդային հարձակման միջոցներից ՀՀ տարածքի պաշտպանության համակարգի զարգացման հետ կապված հարցերը որպես գերակայություններ իրենց արտացոլում են ստացել պաշտպանական բարեփոխումներում և Ձինված ուժերի կատարելագործման ծրագրում:

Հակաօդային պաշտպանությունը՝ որպես համապետական և ռազմական միջոցառումների, զորքերի (ուժերի և միջոցների) օպերացիաների և մարտական գործողությունների համալիր, կազմակերպվում և իրականացվում է հակառակորդի օդային հարձակման կանխման, հետմղման, ինչպես նաև օդային հարվածներից պետության օբյեկտների, զինված ուժերի և բնակչության պաշտպանության նպատակով:

Ռազմական տեսանկյունից այս նպատակներին կարելի է հասնել հետևյալ հիմնական խնդիրների լուծմամբ.

1. հակառակորդի օդային տարածքի անընդհատ հետախուզում և օդային հարձակման նրա միջոցների խմբավորումների կազմի ու վիճակի մշտական վերահսկում, հակառակորդի օդային հարձակման նախապատրաստման պատեհաժամ բացահայտում և օդային հարձակման մասին պետության ռազմաբաղաբական ղեկավարության վաղօրոք իրազեկում,

2. օդային հակառակորդի հարձակման հետմղում և օդային հարվածներից զինված ուժերի խմբավորումների, արդյունաբերական շրջանների, վարչաքաղաքական կենտրոնների, բնակչության պաշտպանություն,

3. օդում և գետնի վրա հակառակորդի օդային հարձակման միջոցների խմբավորումների ջախջախում, դրանց կառավարման ու նշանառման համակարգերի խոցում և շարքից հանում,

4. համակողմանի ապահովում և անընդհատ կառավարում:

ՀՕՊ-ի նշված խնդիրներից առաջինի արդյունավետ լուծումը հնարավոր է օդային տարածքի հետախուզության և օդային հարձակման մասին նախագուշացման համակարգի՝ որպես պետության ՀՕՊ-ի միասնական համակարգի բաղադրիչ մասի որակական զարգացման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Չինված ուժերի միասնական հետախուզական-տեղեկատվական տարածքին դրա լրիվ ինտեգրման պայմանով:

Օդային հակառակորդի հետախուզման գործում ներկայումս ներգրավված են հիմնականում ՀՕՊ-ի զորքերի հետախուզության ուժերն ու միջոցները: Օդային հակառակորդի հետախուզման որակը և արդյունավետությունը անհրաժեշտ է բարելավել առկա միջոցների խելամիտ արդիականացմամբ և ՀՕՊ-ի զորքերի հետախուզության ուժերի հետևողական վերազինմամբ (անհրաժեշտ բավարարության սկզբունքով), ինչպես նաև մարտավարական օդակի գորային ՀՕՊ-ի կազմավորումները զինելով ռադիոտեղորոշումային և օպտիկա-էլեկտրոնային հետախուզության միջոցներով:

ՀՕՊ-ի հրամանատարական կետերում օդային հակառակորդի մասին տարբեր աղբյուրներից (ՀՕՊ-ի զորքերի, զորային ՀՕՊ-ի, Գլխավոր շտաբի, ավիացիայի և ՌԷՊ-ի հետախուզության ուժերից և միջոցներից) ստացված հետախուզական տեղեկույթի միավորումը և օդային երթևեկության կառավարման շրջանային կենտրոնների հետ սերտ փոխգործությունը հնարավորություն կտան ձևավորելու ՀՕՊ-ի միասնական տեղեկութային կառավարող տարածություն:

ՀՕՊ-ի երկրորդ խնդրի լուծումը՝ օդային հարվածներից կարևոր օբյեկտների ծածկապաշտպանությունը և բնակչության պաշտպանությունը, պահանջում է նախապես լուծել երկու պրոբլեմ: Առաջինը պետության այն կարևոր օբյեկտների ցանկի որոշումն է, որոնք խաղաղ և պատերազմական ժամանակ ենթակա են հակաօդային պաշտպանության, իսկ երկրորդը դրանց ծածկապաշտպանության կազմակերպման կատարելագործումն է:

Պետության բոլոր կարևոր օբյեկտների հակաօդային պաշտպանությունը պահանջում է զգալի ուժերի ու միջոցների ներգրավում և պետության տնտեսական հնարավորությունների հաշվառմամբ այսօր չի կարող լիովին ապահովված լինել: ՌԲստի հարկ է պետության բոլոր կարևոր օբյեկտների քվից որոշել այն կենսականորեն կարևոր օբյեկտների սահմանափակ համախումբը, որոնց հուսալի գործառնամբ պայմանավորվում են պաշտպանության ռազմավարական կայունությունը և հետագայում մարտական գործողություններ վարելու երկրի ունակությունը: Յուրաքանչյուր օբյեկտի կարևո-

րության և նշանակության հաշվառմամբ դրանց ծածկապաշտպանությունը պետք է կատարվի դեմ խաղաղ ժամանակ: Ընդամին ՀՕՊ-ի միջոցների քանակն ու հնարավորությունները պետք է համապատասխանեն հույժ կարևոր օբյեկտների տարածքային բաշխմանը և հակառակորդի՝ դրանք խոցելու հնարավորություններին:

Հարձակման մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռային միջոցների դեմ պայքարի մարտական խնդիրների կատարման համար զենիթային հրթիռային զորքերի մարտական կազմում պետք է լինեն միջին հեռահարության զենիթային հրթիռային համալիրներ, որոնք ունակ լինեն գործելու հակահրթիռային պաշտպանության բանեյակարգով:

Հակառակորդի կողմից խոցման գերճզգրիտ միջոցների կիրառմանը նպատակահարմար է հակադրել շարժուն զենիթային հրթիռային պաշտպանություն: Չենիթային հրթիռային պաշտպանության հիմքը պետք է կազմեն փոքր ու միջին հեռահարությամբ շարժական և ինքնավար զենիթային հրթիռային համալիրները և համակարգերը (արդիականացված «Օսա» և նոր «Տոր», «Բուկ»), ինչպես նաև գերճզգրիտ զենքից ակտիվ-պասիվ (մասնագիտացված) պաշտպանության համալիրները (ԱՊՊՀ):

Համագորային խմբավորումների անմիջական ծածկապաշտպանության համար նախընտրելի է համագորային զորամիավորումների և զորամասերի կազմում ունենալ գորային ՀՕՊ-ի կազմավորումներ, որոնք սպառազինված լինեն փոքր և սահմանային փոքր բարձրություններում արդյունավետ կերպով գործող, մերձահար գործողության և փոքր հեռահարությամբ օժտված արդիականացված շարժական զենիթային հրթիռային համալիրներով: Այս դեպքում համագորային խմբավորումների ծածկապաշտպանությունը կուժեղացվի ՀՕՊ-ի տարածքային խմբավորումների շնորհիվ:

ՀՕՊ-ի խմբավորումների ձևավորման տարածքային սկզբունքը ենթադրում է զենիթային հրթիռային պաշտպանության խնդիրների լուծման համար միևնույն շրջանում միասնական մտահղացմամբ և միասնական ղեկավարությամբ իրենց մարտական առաջադրանքները կատարող ՀՕՊ-ի տարատեսակ ուժերի և միջոցների համաձայնեցված կիրառում:

ՀՕՊ-ի տարածքային խմբավորումները, որոնց կազմում պետք է լինեն տարբեր զուգադրությամբ ռադիոտեղորոշումային համակարգեր և կայաններ, մերձահար գործողության, փոքր և միջին հեռահարությամբ շարժական զենիթային հրթիռային համալիրներ (համակարգեր), գերճզգրիտ զենքից ԱՊՊՀ-ներ, կարող են ծավալվել ինչպես կենսականորեն կարևոր, այնպես էլ մեծ մակերեսով օբյեկտների, օրինակ՝ համագորային խմբավորումների, ծածկապաշտպանության համար: Դրանք կապահովեն հակառակորդի բախստիկական նշանակետերի, օդաչուավոր և անօդաչու թռչող սպարատների, թևավոր և ավիացիոն հրթիռների կիրառման բարձրությունների և արագությունների ամբողջ տիրույթում դրանց խոցման մեծ մարտական արդյունավետություն, ինչպես նաև կրակային և ռադիոէլեկտրոնային ճնշման նկատմամբ կայունություն: Այս կան այն ուղղությամբ ՀՕՊ-ի ջանքերի վճռական աճումը կարճ

ժամկետներում կիրազորվի ՀՕՊ-ի կործանիչ ավիացիայի կենտրոնացված կիրառման շնորհիվ:

ՀՕՊ-ի տարածքային խմբավորումներում ռադիոէլեկտրոնային պայքարի ժամանակակից և արդիականացված միջոցների օգտագործումն զգալիորեն կմեծացնի կարևոր օբյեկտների հակաօդային պաշտպանության հնարավորությունները՝ ի հաշիվ օդային հակառակորդի կողային ռադիոէլեկտրոնային համակարգերի (Ռ-Է), կապուղիների, մարտական կառավարման հրամանների և տվյալների հաղորդումների, ՀՕՊ-ի վրագետնյա համալիրների, ինչպես նաև կառավարման համակարգի Ռ-Է-երի արդյունավետ ռադիոէլեկտրոնային ճնշման շնորհիվ:

ՀՕՊ-ի երկրորդ և երրորդ խնդիրները կարելի է լուծել Ձինված ուժերի բոլոր զորքերը, ուժերը և միջոցները համալիր կերպով կիրառելով ըստ միասնական մտահղացման ու պլանի, ընդամին դրանք պետք է ունակ լինեն ապահովելու հակառակորդի կենսականորեն կարևոր օբյեկտների երաշխավորված խոցումը և օդային հարվածներից յուրային օբյեկտների հուսալի ծածկապաշտպանությունը:

ՀՕՊ-ի կիրառման հետ մեկտեղ մեզ համար կարևոր նշանակություն կունենա օդային հակառակորդին հակազդեցության ուղղությամբ միջոցառումների համալիրը, որը իրագործելու են Ձինված ուժերի բոլոր զորքերը: Կրակային հակազդեցության միջոցառումների կատարման համար նպատակահարմար է ներգրավել հրթիռային զորքերը և հրետանին, հարվածային ավիացիան, մոտոհրաձգային, տանկային և հակատանկային ստորաբաժանումներ, իսկ ոչ կրակային հակազդեցության համար՝ Ռ-ԷՊ-ի, ինժեներական և հատուկ զորքերի ուժերն ու միջոցները, ինչպես նաև մարտակարգերի ապակենտրոնացման, ուժերով և միջոցներով տարաշարժի, քողարկման գծով միջոցառումներին՝ բոլոր զորքերը: Պլանավորման ժամանակ օդային հակառակորդին հակազդեցության միջոցառումների հաշվառումը և զորային օպերացիայի ընթացքում դրանց լիարժեք կերպով իրականացումը անգամ նվազագույն նյութական ծախսերի դեպքում զգալիորեն կբարձրացնեն ՀՕՊ-ի զորքերի արդյունավետության մակարդակը՝ ի հաշիվ օդային հակառակորդի ուղղությամբ կրակային ջանքերի և յուրային զորքերի կենսունակության մեծացման:

Այդուհանդերձ, երկրորդ և երրորդ խնդիրների լուծման գործում առաջնային դեր կխաղան Ձինված ուժերի պաշտպանական (ՀՕՊ-ի զորքեր, կործանիչ ավիացիա և ՀՕՊ-ի Ռ-ԷՊ) և հարվածային (հրթիռային զորքեր, հարվածային ավիացիա) բաղադրամասերը:

Հակաօդային պաշտպանության նպատակով հարվածային և պաշտպանական ուժերի համալիր ու միաժամանակյա կամ հաջորդական կիրառումը դրանց կենտրոնացված կառավարման դեպքում, ի վերջո, կկանխորոշի մարտական գործողությունների ընդհանուր առմամբ հաջող ընթացքը: Ընդ որում, մեր հարվածային ուժերի գործողությունները՝ նպատակաուղղված հակառակորդի ՕՀՄ-ների խմբավորումների թուլացմանը և նրա կառավարման համակարգի խաթարմանը, կապահովեն ՀՕՊ-ի արդյունավետության մեծացումը:

Հայաստանի Հանրապետության տարածքի մեկուսացվածությունը պահանջում է ՀՕՊ-ի համակողմանի ապահովման հարցերի արդյունավետ լուծում, ինչին կարելի է հասնել շնորհիվ մի շարք համալիր միջոցառումների, որոնք ուղղված լինեն՝

1) օպերատիվ և մարտավարական քողարկմանը, օպերատիվ սարքավորման օբյեկտների կատարելագործմանը և դիրքերի ինժեներական սարքավորմանը՝ հակառակորդի ՕՀՄ-ների ներգործության արդյունավետության նվազեցման և յուրային զորքերի ու օբյեկտների պահպանման նպատակով,

2) հնարավոր մեկուսացման պայմաններում մարտական գործողությունների հարկ եղած տևականությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսվող նյութատեխնիկական միջոցների ռազմավարական և օպերատիվ պաշարների պատեհաժամ ստեղծմանն ու ապակենտրոնացմանը,

3) այնպիսի արդյունավետ կերպով գործող ռազմարդյունաբերական համալիրի ստեղծմանը, որը կարողանա կատարել օդային հակառակորդի դեմ պայքարի բոլոր եղած միջոցների արդիականացում և նորոգում, ինչպես նաև մշակել ՀՕՊ-ի՝ մեծ արդյունավետություն ունեցող ժամանակակից սպառազինություն և տեխնիկա,

4) ՀՕՊ-ի խմբավորումների տեխնիկական և քիկունքային ապահովման համակարգի օպտիմալացմանը՝ դրա գործառնման արդյունավետության մեծացման և, դրա հետ մեկտեղ, սպասարկման ու ապահովման կազմավորումների թվաքանակի կրճատման նպատակով:

Հակաօդային պաշտպանության գծով գործող զորքերի, ուժերի և միջոցների կառավարման համակարգը պետք է ծավալվի ՀՕՊ-ի զորքերի, ավիացիայի և ՌԷՊ-ի կառավարման համակարգերի ինտեգրման հիմքի վրա և օժտվի ավտոմատացման միջոցների համալիրով: Կառավարման նման համակարգը կունենա պաշտպանական և հարվածային բաղադրամասերի տեղեկատվական, ապահովման ու կառավարման խնդիրների ամբողջ համալիրի միաժամանակյա լուծման լավագույն հնարավորություններ: Այն նաև կապահովի ավիացիայի գործողությունների կառավարումը թռիչքային վիճակից հակառակորդի ավիացիայի հարվածները հետ մղելիս կամ բազավորման վայրերում այն ոչնչացնելիս, հակառակորդի ռադիոտեղորոշումային կետերի, կապի ու կառավարման կենտրոնների, կենսականորեն կարևոր օբյեկտների կրակային ու ռադիոէլեկտրոնային ճնշման ժամանակ:

Կառավարման համակարգի զարգացման գործում անհրաժեշտ է ապահովել Ձինված ուժերի՝ ՀՕՊ-ին վերաբերող մասով խնդիրներ կատարող բոլոր զորքերի և ուժերի կենտրոնացված կառավարումը կենտրոնական հրամանատվական կետից, կատարել դրա համապատասխան լրասարքավորում և ՀՕՊ-ի զորքերի, ավիացիայի ու ՌԷՊ-ի ավտոմատացման միջոցների զուգակցում՝ կորորդիանատային տեղեկույթ ստանալու և ՀՕՊ-ի գծով գործող հարվածային ու պաշտպանական ուժերին ու միջոցներին նշանացուցման տեղեկույթ հաղորդելու համար:

Կարելի է անել այն անվերապահ եզրակացությունը, որ զորքերի կառավարման գործում տեղեկույթի և դրա հետ կապված տեխնոլոգիաների դե-



ըր անընդհատ աճելու է: Դրա ապացույցն է «ցանցակենտրոն» պատերազմների հայեցակարգը: Վերջին տասնամյակներում աշխարհի զարգացած երկրների մեծ մասի զինված ուժերը հիմնական շեշտը սպառազինության և ռազմական տեխնիկայի քանակի ու հզորության վրա դնող «կայանքակենտրոն պատերազմից» անցնում են «ցանցակենտրոն պատերազմի»: Այս անցումը դարձավ ռազմական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման հետևանքով մարտական գործողությունների վարման ռազմավարության և մարտավարության աստիճանական փոփոխության արգասիք:

«Ցանցակենտրոն» օպերացիաների վարման հիմնական տարրերից է զորքերի և զենքի կառավարման ավտոմատացված համակարգը, որի գործարկումը հնարավորություն կտա փաստորեն ժամանակի ռեալ մասշտաբում ստանալու յուրախին զորքերի (ուժերի) և հակառակորդի, հարվածի հավանական օբյեկտների և մարտական գործողությունների շրջանում տիրող իրադրության մասին անհրաժեշտ տեղեկույթ, այն պահելու տվյալների շտեմարանում ու հետևողականորեն ճշտելու և օգտագործելու որոշումների ընդունման, ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանական գործողությունների (օպերացիաների) պլանավորման համար:

Չորքերի «ցանցակենտրոն» կառավարումը նպատակաուղղված կլինի ոչ միայն (և ոչ այնքան) հակառակորդի մարտական դասավորության տարրերի խոցմանը, այլև դրա համակարգվածության խաթարմանը, դիմադրելու կարողության ընկճմանը, կպարտադրի ընդունել անհամապատասխան որոշումներ: Ըստ էության, դա նշանակում է, որ առաջին հարվածը հասցնելու ժամանակահատվածում ամբողջությամբ կազմակերպվում է երկրորդը՝ առաջինի արդյունքների և ընդդիմամարտող կողմի ձեռնարկած պատասխան գործողությունների հաշվառմամբ, երկրորդ հարվածը հասցնելու ժամանակահատվածում հանգամանալից կերպով կազմակերպվում է երրորդը, և այլն: Այսպիսով՝ մարտական գործողությունների ընթացքում գրավվում և հաստատուն կերպով պահպանվում է ռազմավարական նախաձեռնությունը:

Նախկինում զորքերում կիրառվող հաշվարկային խնդիրները որպես կանոն միմյանց հետ գրեթե կապված չեն և միշտ չէ, որ անհրաժեշտ են կառավարման այն օղակներում, որտեղ ներդրվում են: Դրանք բավական «կոպիտ» գործակցային մեթոդիկաներ են, որոնց կիրառմամբ հնարավոր չէ ապահովել գործողությունների արդյունավետ եղանակների մշակում:

Այս պրոբլեմի լուծման ուղիներից մեկը զորքերի (ուժերի) կառավարման ավտոմատացման միջոցների համալիրի «բանականության» մակարդակի բարձրացումն է՝ տեղեկութամոդելավորող միջավայրի (ՏՄՄ) և տեղեկութային տարածության մշակման ու ներդրման միջոցով:


ՏՄՄ-ի համար տեղեկույթի աղբյուր է տվյալների ինտեգրված տեղեկութային շտեմարանը, որում պահվում են զինված պայքարի ուժերի ու միջոցների մոդելները, աշխարհատեղեկատվական համակարգի մոդելը (էլեկտրոնային քարտեզներ) և այլ տվյալներ: Հակառակորդի, յուրախին զորքերի (ուժերի) և իրադրության վերաբերյալ տվյալները ինտեգրված շտեմարանում

արդիական վիճակում պահելու համար շտեմարանը պետք է համալրվի հետախուզության, յուրային ու նրանց հետ փոխգործող զորքերի և ուժերի միջոցներից ստացվող անհրաժեշտ տեղեկությով (ցամաքային, ծովային, օդային, տիեզերական, աշխարհատարածական, ուղեվարածամանակային և այլ իրադրությունների վերաբերյալ):



Նկ. 2. SUU կիրառման տարրերակ

Ներկայումս կատարվում են մի շարք գիտահետազոտական աշխատանքներ, որոնց նպատակն է ընդհանուր առմամբ սպառազինության «ցանցակենտրոն» համակարգի և դրա այն ենթահամակարգերի հայեցակարգի ձևավորումը, որոնք ապահովում են օդային հակառակորդի վրա անհամաչափ ներգործությունը՝ տեղեկությանից ցանցի (հրամանատվական կետեր, կապի հանգույցներ, հետախուզության և կառավարման միջոցներ և այլն) տարրերի կրակային և էլեկտրոնային խոցումը:



Նկ. 3. SUU գործառնության կառուցվածքը

Երկարաժամկետ հեռանկարում թվում է նպատակահարմար մեր հանրապետությունում ավիացիայի և ՀՕՊ-ի զորքերի միավորումը՝ Ձիմված ուժերի որակապես նոր տեսակի՝ Ռազմաօդային ուժերի և ՀՕՊ-ի զորքերի ստեղծմամբ: Այն պետք է ունենա օպտիմալ կառուցվածք, հաշվեկշռված մարտական կազմ, և նրա հիմնական խնդիրը պետք է լինի օդային տարածությունում պետության ռազմական անվտանգության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության համար անթույլատրելի սխալ կլիներ ռազմական անվտանգության ապահովումը զուտ իր ուժերով: Այդ է պատճառը, որ մեր պետության ռազմական անվտանգության ապահովման ոլորտի ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում այլ պետությունների հետ ռազմաքաղաքական համագործակցության սերտացմանը:

ՕՀՄ-ներից մեր պետության տարածքի պաշտպանության համակարգի զարգացման տեսանկյունից այլ պետությունների հետ ռազմաքաղաքական ինտեգրման առավել հեռանկարային ուղղությունը տեսանելի ապագայում կոլեկտիվ անվտանգության կովկասյան տարածաշրջանում Հակաօդային պաշտպանության միացյալ տարածաշրջանային համակարգի ստեղծումն է: Այն հիմնված է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև երկկողմ համաձայնագրի վրա և իրագործվում է Անկախ Պետությունների Համագործակցության ու Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում:

Հակաօդային պաշտպանության միացյալ տարածաշրջանային համակարգի ստեղծվում է կոլեկտիվ անվտանգության կովկասյան տարածաշրջանում կողմերի ազգային հակաօդային պաշտպանության համակարգերի արդյունավետության մեծացման նպատակով՝ նրանց ջանքերի միավորմամբ և հակաօդային պաշտպանության այն զորքերի (ուժերի) համատեղ կիրառմամբ, որոնք հատկացել են կողմերը:

Կոլեկտիվ անվտանգության տարածաշրջանում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության տարածքների տարանջատվածության, ինչպես նաև նրանց սահմաններում լուծվող օպերատիվ-ռազմավարական խնդիրների ծավալների հաշվառմամբ կոլեկտիվ անվտանգության կովկասյան տարածաշրջանի Հակաօդային պաշտպանության միացյալ տարածաշրջանային համակարգի կազմում առանձնանում է կոլեկտիվ անվտանգության անդրկովկասյան շրջանի (Հայաստանի Հանրապետություն) Հակաօդային պաշտպանության միացյալ համակարգը:

ՀՕՊ-ի տարածաշրջանային համակարգի ստեղծման և զարգացման խնդրի լուծումը մեծապես պայմանավորվում է Ռուսաստանի Դաշնության և Համագործակցության մյուս երկրների հետ ռազմական ու ռազմատեխնիկական համագործակցության ուղղությունների, ձևերի ու եղանակների ընտրության ճշտությամբ, ընտրված ուղղությունների հմուտ և ճկուն իրացմամբ՝ տարածաշրջանում եղած պայմանների և տարածաշրջանային համակարգի ստեղծման գործում ներգրավված կոնկրետ պետությունների առանձնահատկությունների հաշվառմամբ:

Կոլեկտիվ անվտանգության կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ-ի տա-

րածքային համակարգի ստեղծման և զարգացման նպատակով ներկայումս Հայաստանում ուսումնասիրվում են Համագործակցության պետությունների հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության հետևյալ տարբերակները:

1. ՀՕՊ-ի համակարգի կատարելագործում՝ գոյություն ունեցող ոչ թանկ տեխնիկայի ձեռքբերման, ՀՕՊ-ի եղած սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման միջոցով,

2. հուսալի ՀՕՊ-ի ստեղծում՝ մեծ արդյունավետություն ունեցող նոր սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման և մշակման միջոցով,

3. պետության ՀՕՊ-ի հզորացում՝ Հայաստանի տարածքում և կոլեկտիվ անվտանգության տարածաշրջանում Ռուսաստանի ՀՕՊ-ի խմբավորման ուժեղացման միջոցով:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր տարբերակ ունի իր առավելություններն ու թերությունները:

Առաջին տարբերակի առավելություններից է այն, որ ՀՕՊ-ի խմբավորման գումարային մարտական ներուժը կաճի բավական զգալի չափով՝ 8,8 %-ով, պահանջվող փոքր ծախսերի զուգադրությամբ, որոնք կկազմեն ՀՕՊ-ի համակարգի միջոցների ընդհանուր հաշվեկշռային արժեքի 2 %-ը: Առաջին տարբերակի թերությունը անձնակազմի անհրաժեշտ թվաքանակի բավական մեծ աճումն է՝ 8,8 %-ով:

Երկրորդ տարբերակի առավելություններից է ՀՕՊ-ի խմբավորման գումարային մարտական ներուժի բավական մեծ աճումը՝ 17,8 %-ով, առանց անձնակազմի թվաքանակն աճեցնելու անհրաժեշտության: Տարբերակի թերությունը խմբավորման միջոցների հաշվեկշռային արժեքի մեծ աճն է, որը կազմում է 12,1 %:

Երրորդ տարբերակը միավորում է առաջին և երկրորդ տարբերակների թերությունները, բացի այդ, չի նպաստում Հայաստանի ՀՕՊ-ի ազգային համակարգի կատարելագործմանը: Ըստ հաշվեկշռային արժեքի աճման՝ այն գործնականում համընկնում է երկրորդ տարբերակի հետ, իսկ անձնակազմի անհրաժեշտ թվաքանակի աճի նորմատիվային արժեքով զիջում է առաջին տարբերակին: Ըստ այս տարբերակի՝ Ռուսաստանի տարածքում կոլեկտիվ անվտանգության կովկասյան տարածաշրջանի ՀՕՊ-ի խմբավորման մարտական հնարավորությունների մեծացման համար անհրաժեշտ է օգտագործել առաջին հերթին կործանիչ ավիացիայի միջոցները, որոնց սպասարկումը պահանջում է անձնակազմի ավելի մեծ թվաքանակ, քան զենիթային հրթիռային սպառազինության սպասարկումը:

Հայաստանի Հանրապետության համար ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության առավել օպտիմալ ուղղություն է խառը ռազմավարության կիրառումը, ըստ որի՝ նախատեսվում է մոտավորապես հավասար համամասնություններով ինչպես միջոցների քանակական ավելացում, այնպես էլ դրանց որակական կատարելագործում՝ զուգակցված Հայաստանի տարածքում ՀՕՊ-ի ռուսաստանյան խմբավորման խելամիտ մեծացման հետ: Դա,

անշուշտ, կնպաստի կողեկտիվ անվտանգության կովկասյան տարածաշրջանի Հակաօդային պաշտպանության միացյալ տարածաշրջանային համակարգի ստեղծման ընթացքում ՀՕՊ-ի ազգային համակարգի կատարելագործմանը:

Կողեկտիվ անվտանգության անդրկովկասյան առանձին շրջանի Հակաօդային պաշտպանության միացյալ համակարգի կազմում Ռուսաստանի Գաշնության կողմից հատկացված զորքերի (ուժերի) և միջոցների ներգրավման շնորհիվ կբարելավվի օդային տարածքի հետախուզման որակը, կմեծանա հակաօդային պաշտպանությանը ծառայող հարվածային և պաշտպանական ուժերի քանակը և, որպես հետևանք, զգալիորեն կմեծանա Հայաստանի ՀՕՊ-ի համակարգի և Ձինված ուժերի արդյունավետությունը: Բացի այդ, մոտ ապագայում տվյալ Համաձայնագրի իրացումը հնարավորություն կտա ներառելու նաև Հայաստանի ռազմական անվտանգության՝ ներկայումս խոցելի օդատիեզերական ոլորտը (30–120 կմ բարձրություններ):

## ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ОБОРОНЫ ТЕРРИТОРИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ОТ СРЕДСТВ ВОЗДУШНОГО НАПАДЕНИЯ В СВЕТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ

*Ю. Г. ХАЧАТУРОВ, генерал-полковник, начальник Генерального Штаба  
Вооруженных сил Республики Армения*

### РЕЗЮМЕ

Современные войны не обходятся без нанесения бомбовых, ракетных и радиоэлектронных ударов прежде всего по авиации, ракетным войскам и артиллерии противника, его системе ПВО, пунктам управления, промышленным, энергетическим и другим важнейшим объектам инфраструктуры, а в последующем – и по основной группировке сухопутных войск. Завоевание господства в воздухе стало важнейшим фактором современной войны. Поэтому от эффективности отражения ударов с воздуха практически зависят ход и исход войны и судьба государства в целом. Противовоздушная оборона стала одной из важнейших составных частей военной безопасности страны и задач её Вооруженных сил.

В статье проанализированы военные аспекты обеспечения безопасности государства в воздушном пространстве, представлены проблемы и основные направления развития системы обороны территории Республики Армения от средств воздушного нападения (СВН) в условиях дальнейшего проведения реформы Вооруженных сил на современном этапе их развития.

С учетом изолированности территории Республики Армения эффективность решения вопросов всестороннего обеспечения ПВО достигается проведением ряда комплексных мероприятий:

1) по оперативной и тактической маскировке, совершенствованию объектов оперативного оборудования и инженерному оборудованию пози-

ций в целях снижения эффективности воздействия СВН противника и сохранение своих войск и объектов;

2) по заблаговременному созданию и расщеплению стратегического и оперативного запаса расходуемых материально-технических средств, обеспечивающих необходимую продолжительность ведения боевых действий в условиях возможной изоляции;

3) по созданию эффективно функционирующего военно-промышленного комплекса, способного производить модернизацию и ремонт всех имеющихся средств борьбы с воздушным противником, а также разрабатывать современное высокоэффективное вооружение и технику ПВО;

4) по оптимизации системы технического и тылового обеспечения группировок ПВО, направленной на повышение эффективности её функционирования с одновременным сокращением количества формирований обеспечения и обслуживания.

Обеспечение военной безопасности с опорой лишь на свои собственные силы было бы для Республики Армения непростительной ошибкой, поэтому военно-политическое руководство государства уделяет большое внимание развитию военно-политического сотрудничества с другими государствами.

В сфере защиты территории РА от воздушных ударов вероятного противника существенную роль играет Объединённая система противовоздушной обороны в Закавказском районе Кавказского региона коллективной безопасности.

## THE PERSPECTIVES OF DEVELOPING THE DEFENSE SYSTEM OF THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA AGAINST THE MEANS OF AIR ATTACK IN THE LIGHT OF DEFENSE REFORMS

*Yu. G. KHACHATOUROV, Colonel General, Chief of the General Staff of the Armed Forces of the Republic of Armenia*

### SUMMARY

Modern wars do not manage without bomb, missile and radio-electronic strikes first and foremost on the enemy's aviation, rocket forces and artillery, its Air Defense system, action centers, industrial, energy and other most important infrastructure facilities, and thereupon - on the main body of the ground forces. Air supremacy has become the most significant factor of a modern war. So, the course and outcome of a war and the state's fate, by and large, depend actually on the efficiency of repulsing air strikes. Air Defense has become one of the most important components of military security of a country and the missions of its Armed Forces.

The article analyzes the military aspects of ensuring the state's security in the air space and presents the problems and main trends of developing the defense system of the territory of the Republic of Armenia against the means of

air attack under the conditions of furthering reforms in the Armed Forces at the present stage of their development.

Given the isolation of the territory of the Republic of Armenia, the efficiency of solving the issues of comprehensive support to the Air Defense is achieved by implementing a number of integrated measures aimed at:

- 1) operational and tactical camouflage, update of operational equipment facilities and technical equipment of positions to reduce the effectiveness of the opponent's means of air attack and maintain own troops and facilities;
- 2) timely creation and deployment of strategic and operational stockpile of the consumable material and technical means ensuring the required time span for waging combat operations under the conditions of possible isolation;
- 3) establishment of effectively functioning military-industrial complex capable of implementing modernization and repair of all the available means of struggle against an air opponent, as well as developing up-to-date high-performance armament and equipment of Air Defense;
- 4) optimization of the technical and logistic support system of Air Defense force, targeted at increasing its efficiency with the simultaneous reduction of the quantity of the formations of service support.

Ensuring only self-reliant military security would be inexcusable mistake for the Republic of Armenia, that's why its state's military-political leadership pays a great attention to the development of military-political cooperation with other states.

The Unified Regional of Air Defense System of Collective Security for Transcaucasia plays a significant role in the protection of the RA territory from air strikes of a possible enemy.

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի ՀՕՊ-ի գործերի վարչության պետ



Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պաշտպանական բարեփոխումների հիմնական նպատակներից մեկը մեր պետության ռազմական կազմակերպվածքի համապատասխանեցումն է երկրի անվտանգության դեմ ուղղված առկա և հավանական ռազմական սպառնալիքներին և տնտեսական հնարավորություններին: Ընդամեն, ինչպես ցույց է տալիս արդի զինված

բախումների միջազգային փորձը, հակաօդային պաշտպանությունն այսօր ռազմական անվտանգության ապահովման կարևոր գործոններից մեկն է:

Ժամանակակից պատերազմների վերլուծությունը և առաջատար պետություններում ռազմական արվեստի զարգացման գծով տեսական մշակումների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ ռազմական գործողություններում նպատակների իրագործումն զգալի չափով պայմանավորված է օդային հարվածներից գործերի և պետության կարևոր օբյեկտների պաշտպանության արդյունավետությամբ: Չորքերի և օբյեկտների օդային պաշտպանության որոշակի աստիճանի հուսալիությանը համապատասխանում է ՀՕՊ-ի գործերի որոշակի մակարդակի արդյունավետություն, այսինքն՝ որքան ավելի հուսալիորեն պետք է դրանք պաշտպանված լինեն օդային հարվածներից, այնքան մեծ պետք է լինի հակաօդային պաշտպանության արդյունավետությունը: Այդ իսկ պատճառով պաշտպանական բարեփոխումների՝ ռազմական ոլորտում իրականացվող կարևոր ուղղություններից մեկը գործերի հակաօդային պաշտպանության կատարելագործումն է: Հակաօդային պաշտպանությունը համագործակցության օպերացիայի (մարտի) բաղկացուցիչ մաս է, կազմակերպական միջոցառումների և բոլոր ուժերի ու միջոցների մարտական գործողությունների համալիր՝ ուղղված օդային հարձակման հետմղմանն ու օդային հարվածներից գործերի և օբյեկտների պաշտպանությանը: Ընդամեն գործային օպերացիաներում իրենց խնդիրները հաջողությամբ կատարելու համար բոլոր օդակների ՀՕՊ-ի խնդիրները լուծող ուժերն ու միջոցները միավորվում են՝ գործերի հակաօդային պաշտպանության մեկ միասնական համակարգի ստեղծմամբ:

ՀՕՊ-ի համակարգի արդյունավետությունը կախված է դրա բաղկացուցիչների (ենթահամակարգերի) գործառության արդյունավետությունից, ընդ որում,



վերջինս ենթահամակարգերի արդյունավետությունների պարզ հանրագումարը չէ, քանի որ դրանց միջև կա բարդ կապ և փոխկախվածություն: Այդուհանդերձ, բաղկացուցիչ ենթահամակարգերի արդյունավետության մակարդակի բարձրացումն այս կամ այն չափով մեծացնում է ընդհանուր առմամբ ՀՕՊ-ի գորքերի համակարգի արդյունավետությունը:

Գնահատելով ՀՕՊ-ի գորքերի առկա համակարգի հնարավորությունները և զարգացման համաշխարհային միտումները՝ կարող ենք առանձնացնել մի շարք պրոբլեմներ, որոնց լուծումը անհրաժեշտ է ՀՕՊ-ի ժամանակակից հուսալի համակարգ ունենալու համար, քանի որ դրանց լուծման լիակատարությունն ու որակը ուղղակիորեն կապված են ՀՕՊ-ի համակարգի կատարելագործման և արդյունավետության մեծացման հետ:

Մեր հետազոտությունների արդյունքները և գործնական աշխատանքի փորձը հիմք են տալիս պնդելու, որ գորքերի հակաօդային պաշտպանության համակարգի արդյունավետությունը նպատակահարմար է մեծացնել՝ այդ համակարգը կատարելագործելով երեք փոխկապված համալիր ուղղություններով.

1. ռազմատեխնիկական քաղաքականություն,
2. գորքերի կազմակերպական կառուցվածք, կիրառում և ապահովում,
3. կադրային քաղաքականություն, ռազմական կրթություն և գորքերի պատրաստում:

ՀՕՊ-ի համակարգը նշված ուղղություններով կատարելագործելու դեպքում պետք է կատարվեն կոնկրետ գործնական քայլեր, որոնք էապես կհամակշռեն օդային հակառակորդի կարողությունը՝ ցանկացած ուղղությունից գործելու նշանակետերի (օբյեկտների) ամբողջ համախմբի նկատմամբ և հնարավորություն կտան նվազագույն ժամկետներում միաժամանակ և համալիր կերպով լուծելու հակաօդային պաշտպանության խնդիրները:

ՀՕՊ-ի գորքերի համակարգի կատարելագործման առաջին ուղղությամբ ենթադրվում է իրականացնել խելամիտ ռազմատեխնիկական քաղաքականություն: Լեռնային տեղանքում առավել նպատակահարմար է փոքր հեռահարությամբ զենիթահրթիռային համալիրների (ՁՀՀ) և հերթապահ բանեակարգով աշխատող ռադիոտեղորոշումային կայանների (ՌՏԿ) արդիականացումը, որով կմեծացվի դրանց աշխատանքի և մարտական հնարավորությունների հուսալիությունը, ինչը կապահովի օդային հարձակման ժամանակակից միջոցների դեմ պայքարի խնդիրների հաջող կատարումը: Ըստ այդմ, աշխատանքներ են կատարվում մի քանի տիպի ՁՀՀ-ների և ՌՏԿ-ների արդիականացման ուղղությամբ, ընդամին վերջիններս փոխադրվում են հերթապահ-մարտական բանեակարգով աշխատող կայանների շարքը:

Սահմանային փոքր և փոքր բարձրություններում պահանջվող որակի ռադիոտեղորոշումային դաշտի ստեղծման պրոբլեմների լուծման համար օպտիմալ միջոց է բազմադիրքային ռադիոտեղորոշումային համակարգի (ԲԴՌՏՀ) ստեղծումը:

Միադիրքային ՌՏԿ-ների համեմատությամբ ԲԴՌՏՀ հիմնական առավելությունները հետևյալն են.

– սպասվող ռադիոտեղորոշումային իրադրության հաշվառմամբ պատասխանատվության պահանջվող գոտի ձևավորելու և այն ճկուն կերպով ձևախախտելու կարողությունը,

– արագության ամբողջական վեկտորի չափման հնարավորությունը և նշանակետերի տարածական դիրքի որոշման մեծ ճշգրտությունը,

– օդային հարձակման սակավ նկատելի միջոցների հայտնաբերման ավելի մեծ հավանականությունը՝ ի հաշիվ դիտման մեծ անկյունների դեպքում ցրման արդյունավետ մակերևույթի (ՑԱՄ) մեծացման,

– պասիվ և ակտիվ խանգարումներից պաշտպանվածության մեծացումը,

– հուսալիության մեծացումն ի հաշիվ ավելցուկային թվով բաղկացուցիչ ինքնավար ավտոմատացված (ԻԱ) ՌՏԿ-ների,

– գոյունակության մեծացումը՝ ի հաշիվ տեղանքում բաղկացուցիչ ԻԱ ՌՏԿ-ների տարաբաշխման, ԻԱ ՌՏԿ-ների աշխատանքի դինամիկ բնույթի (տեղաշարժ և աշխատանք «առկայծման» բանելակարգով) և այն բանի, որ պասիվ բանելակարգով աշխատող ԻԱ ՌՏԿ-ները չեն ճառագայթում,

– ցածր արժեքը:

ԲԴՌՏՀ-ների կիրառման արդյունավետությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

– լեռնային տեղանքում սահմանային փոքր և փոքր բարձրություններում հոծ ռադիոտեղորոշումային դաշտի ստեղծում,

– տեղանքում բաղկացուցիչ ԻԱ ՌՏԿ-ների ապակենտրոնացմամբ նշանակետերի, այդ թվում՝ ցածրաթռիչ նշանակետերի, տեղադիրքի և արագությունների ամբողջական վեկտորների ճշգրիտ որոշման ապահովում,

– բաղկացուցիչ ԻԱ ՌՏԿ-ների շարժունությունը՝ զուգակցված «առկայծման բանելակարգով» աշխատանքով, ինչը դժվարացնում է հակառակորդի կողմից դրանց հայտնաբերումը և նվազեցնում ոչնչացման հավանականությունը,

– առանձին ԻԱ ՌՏԿ-ների կրակային խոցման դեպքում գործող ապարատուրայի շնորհիվ ԲԴՌՏՀ-ների բնութագրերի պահպանում տրված մակարդակում,

– մոդուլային կառուցվածքի շնորհիվ համակարգի արդիականացման հնարավորության և նորոգումապիտանիության ապահովում, ինչպես նաև մարտավարական օդակի ՀՕՊ-ի ստորաբաժանումների կառավարման շարժական կետերը ԻԱ ՌՏԿ-ներով օժտելու հնարավորություն,

– բազմօղակ կառուցվածքի շնորհիվ համակարգը փուլ առ փուլ գործարկվելու հնարավորություն (մեկ ռադիոտեղորոշումային օղակ — «գոտի», «օղակ» կամ կրկնակի «օղակ» տիպի բազմօղակ կառուցվածք),

– ԲԴՌՏՀ աշխատանքի ապահովում գործնականում առանց անձնակազմի մասնակցության,

– ԲԴՌՏՀ պատասխանատվության գոտում տեղաբաշխված ՀՕՊ-ի բոլոր օղակների կառավարման կետերի ապահովում պահանջվող որակի հետախուզական տեղեկությով (դրանք տեղեկույթի ընդունման և արտապատկերման ապարատուրայով օժտելու դեպքում):

Բազմադիրքային ռադիոտեղորոշումային համակարգով ՀՕՊ-ի գորքերի օժտումը հնարավորություն է տալիս համարժեք կերպով պայքարելու հեռանկարում կանխատեսվող օդային հարձակման միջոցների դեմ (ՕՀՄ), ապահովելու գորքերի և օբյեկտների արդյունավետ պաշտպանությունը հակառակորդի օդային հարվածներից:

Որպես ժամանակակից ՕՀՄ-ների դեմ պայքարի խնդիրների կատարմանը ՀՕՊ-ի միջոցների տեխնիկական պատրաստվածության պրոբլեմի լուծում, արդիականացման հետ մեկտեղ կարող է, դիտարկվել է նաև «Տոր» (ի լրումն փոքր հեռահարությամբ, արդիականացվող ՉՀՀ-ների) և «Բուկ» (միջին հեռահարությամբ, բարոյապես հնացած ՉՀՀ-ների փոխարեն) տիպերի փոքր և միջին հեռահարությամբ ժամանակակից շարժական և ինքնավար զենիթահրթիռային համակարգերը օպտիմալ քանակով (արդյունավետություն — արժեք նկատառումներից ելնելով) ձեռք բերելու հնարավորությունը:

Օդային հակառակորդի հետախուզման տեղեկատվական միջոցները միավորելու և կառավարման համակարգը ավտոմատացման միջոցների համալիրով օժտելու հետ կապված պրոբլեմների լուծման համար կարող է դիտարկվել ՀՕՊ-ի գորքերի միասնական տեղեկատվական տարածքի (ՄՏՏ) ստեղծման հայեցակարգը, որի շրջանակներում մշակվեն ՄՏՏ ավտոմատացման բազմօղակ միջոցներ: Դրանք պետք է ներառեն՝

- համապատասխան օդակի կառավարման մարմինների և կետերի ավտոմատացման միջոցների համալիր (ԱՄՀ),
- զենքի (ՉՀՀ-ներ, զենիթային հրետանային համալիրներ և ՌՏԿ-ներ) ավտոմատացված կառավարման մոդուլներ (ԱԿՄ),
- գուգակցման տեխնիկական միջոցների լրակազմ (ՉՏՄԼ):

Նշենք, որ ՕՀՄ-երն ամենաարագ շարժվող նշանակետերն են, ուստի ՀՕՊ-ի համակարգի հրամանատարները պետք է ունակ լինեն մյուս բոլոր զորատեսակների հրամանատարներից առավել արագ կողմնորոշվելու, գնահատելու իրադրությունը և որոշում ընդունելու:

Ըստ այդմ որոշման ընդունումը տեղի է ունենում ժամանակի սղության պայմաններում և ունի փուլաշրջանային բնույթ: Եղած ժամանակում հրամանատարը փաստացի ի վիճակի է ընդունելու և հիմնավորելու որոշման միայն մեկ տարբերակ, միջդեռ որոշումն օպտիմալ լինելու համար անհրաժեշտ է մշակել առնվազն երեք տարբերակ, գնահատել յուրաքանչյուրի արդյունավետությունը և ընտրել լավագույնը, ինչը ռեալ իրադրությունում բավական բարդ է, եթե չկիրառվեն ավտոմատացման միջոցներ և հատուկ մեթոդիկաներ ու մոդուլներ:

Ավտոմատացման համապատասխան միջոցներով կառավարման կետերի օժտմամբ ՀՕՊ-ի գորքերի ՄՏՏ ստեղծումը կապահովի ՀՕՊ-ի բոլոր ուժերի ու միջոցների ավտոմատացված կառավարումը և այլ զորատեսակների կառավարման մարմինների հետ փոխգործությունը: Մարտավարական օդակի ՀՕՊ-ի ստորաբաժանումների օժտումը ՄՏՏ ավտոմատացման միջոցներով և ԲԴ-ՌՏԿ համալիրի կազմում եղած ԻԱ ՌՏԿ-ով հնարավորություն կտա զգալիորեն մեծացնելու ընդհանուր առմամբ ստորաբաժանման մարտական կարողություններ:

րը և, մասնավորապես, մերձագործ զենիթային միջոցների մարտական արդյունավետությունը, այդ թվում կապահովի նաև դյուրակիր ՋՀՀ (ԴՋՀՀ) կիրառումը ոչ միայն ցերեկային, այլև գիշերային ժամերին:

Մեր երկրի տնտեսական հնարավորությունների հաշվառմամբ՝ նպատակահարմար է ՀՕՊ-ի գորքերի վերազինումը կատարել փուլ առ փուլ՝ ըստ ՀՕՊ-ի ՄՈՏ արդիականացման, մշակման և ձեռքբերման ծրագրերի իրականացման, ինչն իր հերթին կպահանջի ՀՕՊ-ի գորքերի կազմակերպական կառուցվածքի օպտիմալացում:

Խաղաղ ժամանակ կառավարման մարմինների կառուցվածքի անհամապատասխանությունը պատերազմական ժամանակաշրջանի խնդիրներին և կառուցվածքին որոշ չափով խանգարում է կառավարման մարմինների հիմնական պաշտոնատար անձանց աշխատանքում ապահովելու մեծ ներդաշնակություն և հասնելու իրադրության ցանկացած պայմաններում ենթակա ուժերի և միջոցների արդյունավետ դեկավարման: Ուստի կառավարման կետերը ԱՄՀ-ով զինելու հետ մեկտեղ կառավարման մարմինների կազմակերպահաստիքային կառուցվածքի օպտիմալացումը հնարավորություն կտա մեծացնելու կառավարման համակարգի արդյունավետությունը:

Կառավարման մարմինների աշխատանքի մինչ այժմ կիրառվող ձևերն ու մեթոդները հանգեցնում են գորքերի կառավարման գործում չափազանց մեծածավալ և նույնիսկ ավելորդ մարտական փաստաթղթերի օգտագործմանը, քանի որ դրանք հաճախ պարունակում են կրկնվող և ոչ անհրաժեշտ տեղեկություններ, ինչը նույնպես չի նպաստում կառավարման համակարգի արդյունավետության մեծացմանը: Ձորավարժությունների փորձը ցույց է տալիս, որ կառավարման օպերատիվ օղակում շտաբների պաշտոնատար անձանց՝ մարտական գործողությունների պլանավորման աշխատանքի ընդհանուր ծավալի 60–70 և ավելի %-ը ծախսվում է տեքստային և գրաֆիկական մարտական փաստաթղթերի մշակման վրա:

Բացի այդ, ինչպես ցույց է տալիս փորձը, գրավոր փաստաթղթերի մշակումը հիմնականում կատարվում է ձեռքով, իսկ մարտական կարգադրությունները և այլ տեքստային մարտական փաստաթղթեր մշակվում են մի եղանակով, որի հիմքում ձևարկված ձևաթերթերի օգտագործումն է, ինչը աննշան չափով է կրճատում փաստաթղթի մշակման ժամանակը: Մինևույն ժամանակ, ՀՕՊ-ի վերաբերյալ գրավոր փաստաթղթերը պահանջում են հատուկ տարրերի արտապատկերում, օրինակ՝ տեղանքի ռելիեֆի հաշվառմամբ տարրեր բարձրություններում հայտնաբերման և խոցման գոտիների նշագրում, ինչը պահանջում է (անգամ եթե հաշվի չառնենք հաշվարկումները) աշխատանքի և ժամանակի զգալի ծախս: Մինչդեռ նախապես մշակված ձևարկված փաստաթղթերը չեն կարող նախատեսել պլանավորվող գործողությունների բոլոր առանձնահատկությունները և, որպես կանոն, պահանջում են աշխատանքի ընթացքում լրախմբագրում: Ուստի անհրաժեշտություն կա մշակելու օպտիմալ ձևերի ձևարկված, այդ թվում՝ էլեկտրոնային, փաստաթղթեր և կրճատելու կառավարման յուրաքանչյուր օղակի համար մարտական փաստաթղթերի քա-

նակը՝ առանց մարտական գործողությունների պլանավորման որակի վատթարացման:

ՀՕՊ-ի կառավարման գործընթացի կատարելագործման համար, բացի կառավարման կետերը ԱՄՀ-ներով օժտելուց, անհրաժեշտ է կազմակերպել ակտիվ ռազմագիտական աշխատանք և դրա արգասիքը ներդրել շտաբների գործունեության պրակտիկայում: Ներկայումս հաջողությամբ մշակվում են տարբեր մեթոդիկաներ ու մոդելներ՝ օպերատիվ-մարտավարական հաշվարկումների ավտոմատացման, գրաֆիկական փաստաթղթերի նոր էլեկտրոնային ձևերի ստեղծման և այն մարտական գործողությունների արդյունավետության գնահատման համար, որոնք ավտոմատացման միջոցների առկայության և դրանց ներկայացվող բոլոր պահանջների առումով առավելագույնս համապատասխանեցված են շտաբների հնարավորություններին:

ՀՕՊ-ի գործերը այն սակավաթիվ գորատեսակներից են, որոնք խաղաղ ժամանակ էլ կատարում են մարտական խնդիրներ՝ իրականացնում են շուրջօրյա մարտական հերթապահություն: Քսան տարվա փորձը մեզ հնարավորություն է տալիս ձեռնամուխ լինելու ՀՕՊ-ի մարտական հերթապահության նորմատիվ-իրավական բազայի կատարելագործմանը՝ ղեկավար փաստաթղթերի քանակի կրճատմամբ:

Նպատակահարմար է ի հաշիվ հերթապահ դիրքերի ընտրության օպտիմալացման կրճատել ՀՕՊ-ի հերթապահ ուժերն ու միջոցներն՝ առանց մարտական հերթապահության կատարման որակի նվազեցման, ինչը կնպաստի ՀՕՊ-ի ՍՈՏ-ի ռեսուրսի պահմանմանը:

Որպես ՀՕՊ-ի գործերի կիրառման արդյունավետության մեծացման եղանակով նախընտրելի է ՀՕՊ-ի տարածքային խմբավորումների ստեղծումը: Ընդսմին նպատակահարմար է դրանց կազմում ներառել նաև տվյալ խմբավորման պատասխանատվության գոտում գործող համագորային միավորումների գորային ՀՕՊ-ի կազմավորումները:

Վերջիններս կիրականացնեն յուրային գործերի անմիջական ծածկապաշտպանություն՝ սահմանային փոքր և փոքր բարձրություններում: ՀՕՊ-ի օպերատիվ-մարտավարական գորամիավորումը տարածքային խմբավորմանը կապահովի օդային հակառակորդի մասին որակյալ տեղեկություն և բարձրությունների ամբողջ տիրություն կամրապնդի համագորային միավորումների ծածկապաշտպանությունը, ինչպես նաև կծածկապաշտպանի խմբավորման պատասխանատվության սահմաններում գտնվող կարևոր պետական և ռազմական օբյեկտները:

Ներկայումս գորային օպերացիաների կազմակերպման ժամանակ օդային հակառակորդին հակազդեցության միջոցառումների համալիրը հաշվի է առնվում միայն օպերացիայի ընթացքում հակաօդային պաշտպանության կազմակերպման ուղղությամբ ՀՕՊ-ի գործերի պետի առաջարկություններում, և գործերին դրանք հասցվում են սոսկ այն մասով, որը վերաբերում է օդային հակառակորդի կրակային խոցմանը և հրաձգային զենքով վարվող կազմակերպված կրակին:

Միջոցառումների ամբողջ համալիրի իրացման համար նպատակահարմար է՝

– օդային հակառակորդին հակազդեցության խնդիրները համազորային միավորումներին և զորատեսակներին առաջադրել համապատասխան հրահանգային փաստաթղթերում առանձին կետերով,

– միջոցառումների համալիրի նախապատրաստումն ու կատարումը ներառել օպերացիայի (մարտական գործողությունների) պատրաստման ընթացքում զորքերի վերահսկման և նրանց օգնության ցուցաբերման և կազմակերպման ժամանակ պարտադիր ստուգման ենթակա հարցերի ցանկում:

ՀՕՊ-ի զորքերի համակողմանի ապահովման հիմնական ջանքերը անրաժեշտ է կենտրոնացնել ՀՕՊ-ի ստորաբաժանումների կենսունակության, հրթիռատեխնիկական և հրետանային-տեխնիկական ապահովման արդյունավետության մեծացմանը նպաստող միջոցառումների կատարման վրա:

Չորքերի ՀՕՊ-ի համակարգի արդյունավետության մեծացման հարցերը սերտորեն կապված են նաև կադրային քաղաքականության, ռազմական կրթության և զորքերի պատրաստման համակարգի հետ:

Մեր կարծիքով այն բանից հետո, որ Ձինված ուժերի կազմում կրնդգրկվեն ՀՕՊ-ի ժամանակակից, մեծ արդյունավետությամբ օժտված սպառազինությունն ու ռազմական տեխնիկա և կստեղծեն ՀՕՊ-ի տարածքային խմբավորումներ, օպերատիվ օդակի կառավարման մարմիններում ի հյատ կգա համալիտանի մասնագետների պակաս: Խոսքը այն մասնագետների մասին է, որոնք գիտեն կառավարման ավտոմատացված համակարգերը, զենիթահրթիռային և ռադիոտեխնիկական զորքերը, ավիացիան և ՀՕՊ-ի ՌԷՊ-ը:

Ներկայումս ՀՕՊ-ի զորքերը, ավիացիան և ՌԷՊ-ը, լինելով առանձին կազմակերպակառուցվածքային տարրեր, իրենց մասնագետների պատրաստումը պլանավորում են առանձին-առանձին, իրար հետ համաձայնեցնում են միայն որոշ միջոցառումներ, որոնք անցկացվում են ամբողջ Ձինված ուժերի մասշտաբով, ինչն ինքնըստինքյան չի նպաստում մասնագիտական պատրաստման որակի բարելավմանը՝ կապված վերը նշված կազմակերպակառուցվածքային տարրերն ըստ նախանշանակման և համատեղ կիրառելու հետ:

Կադրային քաղաքականության, ռազմական կրթության և զորքերի պատրաստման տեսակետից ՀՕՊ-ի համակարգի կատարելագործման հիմնական ուղիներն են.

1. Հայաստանի և այլ երկրների ռազմական կրթական հաստատություններում մարտավարական և օպերատիվ մակարդակի կադրերի պատրաստման խելամիտ զուգակցումը,

2. Հայաստանում մարտավարական օդակի կադրերի պատրաստման որակի բարելավումն ի հաշիվ պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական վարպետության մեծացման, ինչպես նաև կառավարման և մարտական կիրառության հարցերի մշակման փուլում ուսումնական գործընթացում ՀՕՊ-ի զորքերի, ավիացիայի և ՌԷՊ-ի կառավարման կենտրոնական մարմինների սպաների ներգրավման,

3. հանգուցային ղեկավար պաշտոնների ամենաարժանի և իրազեկ սպաների առաջադրումը՝ բազմամակարդակ ընտրազատման, ինչպես նաև օպերատիվ օդակի պաշտոնների համար մրցութային հիմունքներով ընտրազատման միջոցով,

4. ծառայության ժամկետը լրանալու պատճառով բարձրակարգ մասնագետների համար պահեստագոր արձակվելուց հետո իրենց աշխատանքը զորքերում՝ ծառայողի պաշտոնում, շարունակելու հնարավորության ստեղծումը,

5. կառավարման մարմինների սպայական կազմի օպերատիվ և հրամանատարական պատրաստման կազմակերպում հետևյալ սկզբունքի հաշվառմամբ՝ ՀՕՊ-ի զորքերի մասնագետները յուրացնում են ավիացիայի և ՌԷՊ-ի, ավիացիայի մասնագետները՝ ՀՕՊ-ի և ՌԷՊ-ի, ՌԷՊ-ի մասնագետները՝ ՀՕՊ-ի և ավիացիայի ուժերի ու միջոցների կիրառման հարցերը,

6. օպերատիվ և մարտական պատրաստման որակի բարելավում՝ ՀՕՊ-ի, ավիացիայի և ՌԷՊ-ի զորամիավորումների (զորամասերի) համատեղ պատրաստման միջոցով,

7. զորքերի մասնագիտական մակարդակի բարձրացում՝ պայմանագրային զինծառայողներով զորամիավորումներն ու զորամասերը համալրելու և համապատասխան ուսումնական կենտրոններում նրանց պարտադիր պատրաստման (լրապատրաստման) միջոցով,

8. ուսումնանյութական բազայի անընդհատ կատարելագործում և զարգացում:

Այսպիսով՝ վերը նշված կոնկրետ քայլերի իրացումն ըստ ՀՕՊ-ի համակարգի կատարելագործման բոլոր ուղղությունների հնարավորություն կտա ստեղծելու զորքերի ՀՕՊ-ի՝ մեծ արդյունավետություն ունեցող համակարգ, որը կհամապատասխանի բոլոր ժամանակակից պահանջներին և կկարողանա համապատասխան ձևով արձագանքել հնարավոր օդային հակառակորդի բոլոր սպառնալիքներին:

## ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ СИСТЕМЫ ПРОТИВОВОЗДУШНОЙ ОБОРОНЫ В РАМКАХ ОБОРОННЫХ РЕФОРМ

*А. Г. ВАРДАНЯН, полковник, начальник Управления ПВО ВС РА*

### РЕЗЮМЕ

Представлены основные проблемы системы ПВО войск ВС РА в аспекте надежности и технической готовности средств ПВО к выполнению задач, направленных на борьбу с современными средствами воздушного нападения, организации и оснащенности войск ПВО, подготовки и применения сил и средств ПВО. Обоснованы три взаимосвязанных направления по совершенствованию системы ПВО войск: военно-техническая политика;

организационное устройство, применение и обеспечение войск; кадровая политика, военное образование и подготовка войск. Проанализированы и предложены пути и конкретные шаги по повышению эффективности системы противовоздушной обороны войск в свете оборонных реформ.

BASIC DIRECTIONS TO INCREASE THE EFFICIENCY  
OF THE AIR DEFENSE SYSTEM IN THE FRAMEWORK  
OF DEFENSE REFORMS

*A. G. VARDANYAN, Colonel, Head of the Branch of Air Defense  
of the Armed Forces of the Republic of Armenia*

SUMMARY

The major problems in the Air Defense of the RA Armed Forces are introduced in the aspect of reliability and technical availability of Air Defense means for performing the tasks targeted at the struggle against the up-to-date means of air attack, organization and equipment of Air Defense troops, preparation and use of forces and means of the Air Defense. Three interrelated directions on improving the system of Air Defense troops have been substantiated: military-technical policy; organizational structure, use and support of troops; staff policy, military education and troops preparation. The ways and concrete steps on increasing the efficiency of the troops system of Air Defense have been analyzed and offered in the light of defense reforms.



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՆ ԵՐԵԿ, ԱՅՍՕՐ, ՎԱԳԸ

*Ա. Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՁՈՒ-ի ավիացիայի պետ-  
ավիացիայի վարչության պետ, Ս. Ա. ԳԱՄՊԱՐՅԱՆ, փոխգնդապետ,  
ՀՀ ՁՈՒ-ի ավիացիայի վարչության օպերատիվ բաժնի ավագ սպա*



ՀՀ պաշտպանական բարեփոխումների գերակա խնդիրներից է ՁՈՒ-ի, մասնավորապես մարտական ավիացիայի մարտունակության մակարդակի բարձրացումը, ընդամին դա պետք է արվի ի հաշիվ կառավարման համակարգի և սպառազինման ոչ թե քանակական, այլ որա-

կական պարամետրների աճման՝ ՀՀ «Ռ-ազմական դոկտրինի» համատեքստում նրա առջև դրված խնդիրների հաշվառմամբ: Ժամանակակից զինված հակամարտությունների և պատերազմների վերլուծությունը ցույց է տալիս, որ օդային հարձակման միջոցներից (ՕՀՄ-ներ) օդային տարածքի պաշտպանության ապահովումը գերակա խնդիր է ցանկացած պետության զինված ուժերի համար: Առանց ժամանակակից մարտունակ ռազմական ավիացիայի հնարավոր չէ հաջողությամբ լուծել օդում հակառակորդի դեմ պայքարի խնդիրը, ապահովել պետության արդյունավետ պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության ռազմաօդային ուժերը և հակաօդային պաշտպանությունը (ՀՕՊ) պաշտոնապես կազմավորվել են 1992 թ., մինչև նրան ժամանակ հայտարարվել է զինված ուժեր ավիացիոն մասնագետների հավաքագրում: ՀՀ ավիացիայի կազմում ներառվել են առանձին ուղղաթիռային և գրոհային էսկադրիլյաներ: 1992 թ. հուլիսի 1-ին քաղաքացիական ավիացիայի ուսումնամարզական կենտրոնին կից կազմակերպվեց թռիչքային և ինժեներատեխնիկական կազմի ուսուցում:

Հայաստանի ավիացիայի կայացումը տեղի էր ունենում Լեռնային Ղարաբաղի անկախության համար նվաճված ռազմական գործողությունների բարդ ժամանակաշրջանում:

1992 թ. հունիսի 17-ին տեղի ունեցավ առաջին մարտական թռիչքը, մարտական գործողությունների ընթացքում կատարվեց մոտ 114 մարտական թռիչք, տեղափոխվեց 989 վիրավոր, տեղ հասցվեց 240 տոննա բեռ, տարահանվեց մոտ 4000 մարդ:

Անձնակազմերը աշխատում էին արտակարգ պայմաններում. թռիչքները կատարվում էին լեռնային տեղանքում, բարդ եղանակի և հակառակորդի կրակային ներգործության պայմաններում: Իրավիճակը բարդանում էր նաև ավիացիայի, ցամաքային զորքերի և ՀՕՊ-ի վատ փոխգործության, ջանքերի կենտ-

րոնացման ու համաձայնեցման թույլ կազմակերպման հետևանքով, չկային բավարար չափով կապի միջոցներ և անհրաժեշտ տեսակների ապահովումներ, պայմաններ, որոնք բնորոշ են զինված ուժերի կայացման փուլին:

ՌՕՌԻ-ի և ՀՕՊ-ի ղեկավար կազմի ջանքերով կարճ ժամանակահատվածում հաջողվեց երկրի օդային տարածքում ստեղծել համատարած ռադիոտեղորոշումային դաշտ և կազմակերպել ավիացիայի գործողությունների արդյունավետ կառավարում:

Հայաստանի Հանրապետության ժամանակակից ավիացիան ունի ավիաբազաներ (ավիագորակայաններ), սպառազինության մեջ (հիմնականում՝ խորհրդային արտադրության) Սու-25 հարվածային ինքնաթիռներ, տրանսպորտային Իլ-76, Մի-24 հարվածային ուղղաթիռների տարբեր փոփոխակներ, տրանսպորտային-մարտական Մի-8, Մի-171 և այլ ավիացիոն տեխնիկա: Երիտասարդ թռիչքային և ինժեներատեխնիկական անձնակազմը պատրաստվում է հիմնականում ազգային ռազմական ավիացիոն ինստիտուտում:

Հայաստանի Հանրապետության ավիացիայի և ՀՕՊ-ի զորքերի նախանշանակումն է հետևյալ խնդիրների կատարումը. խաղաղ ժամանակ՝ ուժերի և միջոցների մի մասը մարտական հերթապահություն է կատարում օդային տարածքում պետական սահմանը պաշտպանելու և հանրապետության օդային տարածքի օգտագործման կարգի պահպանումը վերահսկելու նպատակով, պատերազմական ժամանակ՝ ՀԱՊԿ-ի անդամ այլ պետությունների ՁՌԻ-երի հետ համատեղ մասնակցում է ՀՀ և Կազմակերպության անդամ այլ պետությունների պաշտպանությանը և տարածքային ամբողջականության, ինչպես նաև հակառակորդի օդային հարվածներից կենտրոնները, շրջանները, օբյեկտները (վարչական, արդյունաբերական, տնտեսական), զորքերի խմբավորումները պաշտպանելու (ծածկապաշտպանելու), հակառակորդի ռազմատնտեսական ներուժի օբյեկտները և զորքերը խոցելու, յուրային ցամաքային զորքերի մարտական գործողություններին կրակային աջակցություն ցույց տալու և դրանք ապահովելու համար:

Վերջին տասնամյակների զինված հակամարտությունների փորձը ցույց է տալիս, որ օդային տարածքը դարձել է զինված պայքարի հիմնական ոլորտ: Որպես օրինակ վերցնենք Լիբիայի ռազմարշավը, որը արևմտյան պետությունների դաշնադրությունը ձեռնարկեց 2011 թ.: Ռազմարշավի նպատակին հասնելու համար դաշնադրություն կազմած պետությունները հիմնականում շեշտը դրին ավիացիայի կիրառման և հրթիռային հարվածների վրա: Սպառազինությունը և ռազմական տեխնիկական կիրառվեցին գործնականում «հրաձգարանային պայմաններում»՝ Լիբիայի Ձինված ուժերի կողմից որևէ դիմադրություն չլինելու պարագայում, քանի որ երկիրը գործնականում չունեի ժամանակակից հակաօդային պաշտպանություն և ավիացիա: Ավիացիայի գործողությունների միջին ինտենսիվությունը կազմեց օրական 60–90 մարտական թռիչք: Ավիացիայի ուժերն ու միջոցները կիրառվեցին ընդդիմության ջոկատներին անմիջական աջակցության խնդիրներ լուծելու համար:

Ընդդիմության ուժերի հարձակողական գործողությունների համար ան-

հրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով Միջազգային ուժերի հրամանատարությունը ներգրավեց նաև հարվածային ուղղաթիռներ, որոնք տեղաբաշխված էին ուղղաթիռակիրների և դեսանտային նավերի վրա: Դրանց հիմնական խնդիրներն էին՝ կառավարական զորքերի շարժական և ոչ շարժական օբյեկտներին հարվածներ հասցնելը, օդային հետախուզությունը և հետախուզական խմբերի ավիահանումն ու տարահանումը, զորքերի ու բեռների փոխադրումը: Որպես կանոն, ուղղաթիռները կիրառվեցին օրվա մութ ժամերին և փոքր բարձրությունների վրա (50 մետրից ոչ ավելի)՝ գործարկելով հրթիռային և հրետանային սպառազինությունը: Այսպես. միայն մեկ գրոհի ժամանակ ամբողջությամբ ոչնչացվեց մի շարասյուն՝ կազմված 20 միավոր զրահատեխնիկայից: ՌՒՂաթիռները մարտական վնասներ չկրեցին:

Ընդհանուր առմամբ, գնահատելով Լիբիայի ռազմարշավի փորձը, հարկ է նշել, որ ռազմարշավի անցկացման ընթացքում գործնականում լրամշակվեցին գերճշգրիտ ավիացիոն միջոցներով և թևավոր հրթիռներով առանց շփման զինված պայքարի վարման եղանակները՝ ռադիոէլեկտրոնային պայքարի զանգվածային միջոցների կիրառմամբ:

Այդ գնահատումը ցույց է տալիս, որ եթե ՁՌԻ-ում կա պատերազմ վարելու համար բավարար քանակով միջին և մեծ հեռահարությամբ գերճշգրիտ զենք (կամ այն տեղափոխելու միջոց), ապա հակառակորդին հնարավոր է ջախջախել, ինչը բոլոր պատերազմների ամենագլխավոր նպատակներից է, նույնիսկ միայն նրա ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտներին և զորքերի կառավարման համակարգին կարևորագույն գերճշգրիտ զենքով զանգվածեղ հարվածներ հասցնելու եղանակով: Հարվածներ պետք է հասցվեն նաև պետական կառավարման և տնտեսության կարևորագույն օբյեկտներին՝ դիմակայող կողմի տարածքի ամբողջ խորությամբ:

Հետևաբար, օդային հարձակման միջոցներից օդային տարածքի պաշտպանության ապահովումը դառնում է ցանկացած պետության զինված ուժերի գերակա խնդիր: Հնարավոր է հաջողությամբ լուծել օդային հակառակորդի դեմ պայքարի խնդիրը, ապահովել պետության արդյունավետ պաշտպանությունը միայն համալիր եղանակով, զինված ուժերի տեսակների և զորատեսակների համատեղ ջանքերով: ՕՀՄ-ներին արդյունավետ դիմադրությունը ներկայումս և մոտ ապագայում հիմնված է հակաօդային պաշտպանության զարգացած համակարգի ու նրա շարժունակ բաղադրիչի՝ կործանիչ ավիացիայի վրա:

Կործանիչ ավիացիայի ներուժային առավելություններն են՝ որսման մեծ քննազծերի ապահովումը, երկրի տարածքի մեծ մակերեսների ծածկապաշտպանության, առավել վտանգավոր ուղղություններում օդային հակառակորդի սպառնալիքների հետմղման համար ՀՕՊ-ի միջոցների ներուժի մեծացման հնարավորություններն ու մեծ շարժունությունը, ինչը խիստ կարևոր է մեր պետության համար, եթե հաշվի առնենք երկրի գերակշռող լեռնային ռելիեֆը, բարդ, թույլ զարգացած ճանապարհային ցանցը, երբ ուժերի և միջոցների արագ տեղափոխումը մեկ ուղղությունից մյուսը կարող է բավական երկար տևել, իսկ որոշ հանգամանքների բերումով՝ դառնալ ընդհանրապես դժվար կատարելի:

Եթե ՀՀ ՋՈՒ-ում այդ համակարգի առաջին մասը (ՀՕՊ-ի գորքեր) բավական լավ է զարգացած և հիմնվում է ռազմական տեխնիկայի առավելագույն ժամանակակից նմուշներով զինվածության վրա, ապա երկրորդ մասի՝ կործանիչ ավիացիայի պրոբլեմը լուծված է ՀԱՊԿ-ի անդամ պետությունների ռազմական համագործակցության շրջանակներում, մեր երկրի տարածքում տեղակայված են ՌԴ 4-րդ սերնդի ավիացիոն համալիրներ:

4-րդ սերնդի ինքնաթիռներից սկսած՝ ավիացիոն համալիրները մարտական հատկությունների միասնականացման առումով ենթարկվել են զգալի փոփոխությունների, այսինքն՝ կործանիչը, որը նախկինում նախանշանակված էր միայն օդային նշանակետեր որսալու համար և գործնականում պիտանի չէր վրագետնյա օբյեկտներին հարվածներ հասցնելու համար, ներկայումս դարձել է որսալու և գերճշգրիտ ավիացիոն միջոցներով կետային հարվածներ հասցնելու համապիտանի օդային միջոց: Հենց «4+»-«4++» սերնդի այս ավիացիոն համալիրներով էլ կատարվել է Լիբիայում կառավարական գորքերի ջախջախման աշխատանքի մեծ մասը:

Օդային նշանակետերի որսման հնարավորության հետ հարվածային հատկությունների զուգակցումը մի շարք առավելություններ է ստեղծում ոչ միայն ռազմական, այլև տնտեսական առումով:

Փաստորեն, մեր առջև ծառանում է մոտ ապագայում մեզ համար նոր տեսակի՝ կործանիչ ավիացիայի ձևավորման խնդիր և, ինչպես ցանկացած նոր ձեռնարկման դեպքում, մեզ պետք կլինի հրատապ կերպով լուծել մի շարք պրոբլեմներ, որոնք են.

1. ինչպես նշել ենք, կայուն և հուսալի հակաօդային պաշտպանության կազմակերպումը հնարավոր է միայն կործանիչ ավիացիայի և ՀՕՊ-ի գորքերի սերտ փոխգործության դեպքում, ինչը նշանակում է, որ ավիացիայի և ՀՕՊ-ի գորքերի կառավարման համակարգը պետք է արդիականացվի:

2. 4-րդ սերնդի ավիացիոն համալիրները շահագործման և սպասարկման առումով մի քանի անգամ ավելի բարդ և «քմահաճ» են, քան ՀՀ ՋՈՒ-ի ավիացիայի սպառազինության մեջ առկա տեխնիկան, իսկ դա նշանակում է, որ կպահանջվի բարձր որակավորում ունեցող թռիչքային և ինժեներատեխնիկական կազմի պատրաստում:

Այս պրոբլեմները հաղթահարվում են պաշտպանական բարեփոխումների շրջանակներում և արդեն մոտ ապագայում կստանան իրենց լիակատար լուծումը:

Անհրաժեշտ է նշել ավիացիայի՝ որպես հակառակորդի կրակային խոցման միջոցի մարտական հատկությունները, որոնք առավել ցայտունորեն են բնութագրում նրա մարտական ներուժն այլ կրակային միջոցների համեմատությամբ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից պատերազմներում կրակային խնդիրների լուծմանը ավիացիայի մասնակցության բաժինը հրետանու հասանելիության գոտում (փողային՝ 20-35 կմ, ռեակտիվ՝ 40-80 կմ) կազմում է 18 %, իսկ հրետանու կրակի հասանելիության գոտուց դուրս՝ 80 %:

Ընդամենը, հարկ է նշել ավիացիայի մեծ կրակային հզորությունը: Այսպես, վրագետնյա նշանակետին մարտավարական կործանիչների օդակի հարվածը համարժեք է «Տոկլա-ՈՒ» կայանքի 10 հրթիռով հրակոծմանը, իսկ մարտական

ուղղաթիռների օդակինը՝ մեկ ժամվա ընթացքում 152-մմ Դ-20\* հաուրիցների՝ վեց հրանոթից կազմված մարտկոցների կրակին:

Քանի որ ինքնաթիռը և ուղղաթիռը կառավարում է մարդը (անձնակազմը), դրանց մարտական հատկությունների թվին հարկ է դասել նաև նշանակետի հետախուզումը ու խոցումը համատեղելու նրա ունակությունը, այսինքն՝ այստեղ լիովին իրացվում է «Տեսնում եմ՝ խոցում եմ» սկզբունքը, որը դրված է հետախուզական-հարվածային համալիրների հայեցակարգի հիմքում:

Եթե դիտարկենք տարածական-ժամանակային գործոնը, ապա, անշուշտ, չի կարելի չնշել ավիացիայի բարձր շարժունությունը և հակազդեցության փոքր ժամանակը:

Այսպես. օդային հերթապահության գոտիներից կանչով գործելու դեպքում ավիացիան կարող է չպլանավորված նշանակետի խոցումն սկսել 2-4 րոպե հետո, մինչդեռ հրետանու համար խոցմանը պատրաստումը տևում է մոտ 10 րոպե: Հակառակորդի վրա կրակային ներգործության կազմակերպման ժամանակի է՛լ ավելի մեծ շահում է ստացվում կրակային դիրքերի փոփոխման դեպքում (օրինակ՝ հիմնական ուժերը նոր ուղղության վրա կենտրոնացնելու անհրաժեշտության դեպքում), քանի որ ժամանակի տարբերությունը կկազմի արդեն ոչ թե րոպեներ, այլ ժամեր:

Ավիացիայի հնարավորությունները մեծացնում են սպառազինության մեջ եղած մարտական և տրանսպորտային-մարտական ուղղաթիռները: Հնարավոր չէ ռազմական գործողությունների ժամանակակից թատերաբեմը պատկերացնել առանց այս թևավոր ուղղաթիռների մասնակցության: Դրանց միջոցով կատարվում են օդային հետախուզություն, տեղանքի ականապատում օդից, հակառակորդի կրակային խոցում, ստորաբաժանումների տեղափոխում, վիրավորների տարահանում, զինամթերքի և պարենի մատակարարում և այլն:

Ուղղաթիռների համար կրակային խոցման տեսակետից տիպային նշանակետեր են՝ հակառակորդի զրահապատ տեխնիկան, տանկերը, հրետանին, կենդանի ուժը: Ուղղաթիռների արդյունավետ կիրառմանը նպաստում են նաև սպահովման գոտում դրանց գործառնման պայմանները.

- հակառակորդի նախամարտակարգերում և մարտակարգերում մեծ թվով չքողարկված տանկերի և այլ զրահապատ տեխնիկայի առկայությունը,
- չծածկապաշտպանված թևերի առկայությունը,
- ուղղաթիռների անձնակազմերի կողմից տեղանքի նախնական հետախուզման հնարավորությունը՝ դարանների համար հարթակներ ընտրելու և այդ հարթակներից գործելու համար,
- ականապատումն օդից:

Վերջին տասնամյակների ընթացքում ուղղաթիռների մարտական արդյունավետությունն աճեց 2-3 անգամ՝ ի հաշիվ կառավարվող սպառազինության քանակի ավելացման (4-8 կառավարվող հրթիռների փոխարեն՝ 16), հեռահա-

\* Համեմատությունը կատարվել է ըստ հաշվարկային զինամթերքով այդ կրակային միջոցների համաշափեյիության՝  $4 \times 400 = 10 \times 160$ ,  $4 \times 150 = 6 \times 100$ :

րության մեծացման՝ 4–6 կմ-ից մինչև 8–10 կմ, օպտիկական և ռադիոէլեկտրոնային սարքավորանքի տեղադրման, ինչը հնարավորություն տվեց հայտնաբերելու և գատորոշելու «տանկ» տեսակի նշանակետերը գիշերը, բարդ եղանակային պայմաններում, 4–6 կմ հեռավորության վրա, ինչն իր հերթին ուղղաթիռներին հնարավորություն տվեց կրակ վարելու՝ չմտնելով գորային ՀՕՊ-ի համակարգերի մեծ մասի խոցման գոտի: Նաև զգալի կերպով մեծացել են ուղղաթիռների գոյունակությունը և անձնակազմերի պաշտպանվածությունը:

Այս ամենի շնորհիվ ուղղաթիռները դարձել են զրահապատ տեխնիկայի դեմ պայքարի արդյունավետ միջոց, և հնարավորություն է ստեղծվել դրանք հաջողությամբ կիրառելու ՌԳԹ-ներում՝ պաշտպանական մարտի ընթացքում կամ գրոհին (հակագրոհին) աջակցելու ժամանակ ծածկապաշտպանելով ճեղքման հատվածը:

Ավիացիայի հիմնական խնդիրներից է նաև օդային հետախուզումը: Ժամանակակից զինված հակամարտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես լարվածության աճման պայմաններում, այնպես էլ մարտական գործողություններ վարելիս կարևոր դեր ունի գորքի խմբավորումների ապահովումը հետախուզական տվյալներով՝ կապված առաջին հերթին իրավիճակի կտրուկ և անկանխատեսելի փոփոխությունների հետ:

Ցանկացած զինված ընդդիմամարտություն սկսվում է հետախուզությամբ: Կարելի է ունենալ լավ պատրաստված բանակ, ուժերի և միջոցների գերազանցություն, սակայն տանուլ տալ մարտը՝ չունենալով լիարժեք տվյալներ հակառակորդի մասին: Պատերազմների փորձը ցույց է տալիս, որ՝ չկա հետախուզություն, ուրեմն չկա տեղեկույթ, չկա տեղեկույթ՝ չկա կառավարում, չկա կառավարում՝ չկա հաղթանակ:

Գոյություն ունի մի քանի տեսակի հետախուզություն, դրանց թվում կարևոր տեղ է զբաղեցնում օդային հետախուզությունը, որը որպես ինքնուրույն տեսակի ռազմական հետախուզություն ձևավորվել է դեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ներկայումս օդային հետախուզության դերի աճումը պայմանավորված է գորքերի շարժունության աճմամբ, փոքր չափերի շարժունակ օբյեկտների թվաքանակի ավելացմամբ, օբյեկտների, որոնք գերակա նշանակություն ունեն հակառակորդի կրակային խոցման տեսակետից (օպերատիվ-մարտավարական հրթիռների ԱԿ-ներ, համազարկային կրակի համակարգերի ԱԿ-ներ, և այլն):

Այժմ օդային հետախուզությունը ունակ է հակառակորդի մասին տվյալներ ձեռք բերելու գործնականում ցանկացած իրավիճակում, օրվա ցանկացած պահի և ցանկացած եղանակի պայմաններում: Միևնույն ժամանակ, օդային հետախուզումը վերածվել է վտանգավոր գործի, քանի որ հակառակորդը թաքցնում և պաշտպանում է իր կարևոր օբյեկտները կազմակերպական և տեխնիկական համալիր միջոցներով: Օդային հետախուզումը հատկապես վտանգավոր է մարտական գործողությունների սկզբնական շրջանում, երբ մի կողմի հակաօդային պաշտպանությունը դեռ ճնշված չէ, իսկ մյուս կողմը չի հաստատել իր գերիշխանությունն օդում:

Հետախուզական թռիչքի հաջողությունը մեծապես կախված է անձնակազմի հանգամանալից պատրաստումից, հակառակորդի ՀՕՊ-ի մասին տեղեկացված լինելուց, իրավիճակը ճիշտ գնահատելու, օբյեկտին ծածուկ կերպով մոտենալու, կարճ ժամկետներում այն ուսումնասիրելու և, ինչը ոչ պակաս կարևոր է, հայթայթված տեղեկույթը օպերատիվ կերպով հրամանատարությանը ներկայացնելու կարողությունից:

Վերը շարադրվածի հաշվառմամբ, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ հետախուզական ավիացիան 20-րդ դարի վերջին սկսեց կիրառել անօդաչու թռչող սպարատներ (ԱԹԱ-ներ), որոնց մարտավարատեխնիկական բնութագրերը հնարավորություն տվեցին դրանց վրա զետեղելու անհրաժեշտ հետախուզական, ռադիոտեխնիկական և տեղորոշումային սարքավորանք և, ինչն ամենակարևորն է, բացառելու անձնակազմի կորստի ռիսկը: Օդային հետախուզման անօդաչու ավիացիոն համալիրները կարելի է համարել քանկարժեք սպարատներ, սակայն այն տեղեկույթը, որը նրանք ունակ են հայթայթելու, անհամեմատ ավելի քանկ է, քան դրանց մշակման, արտադրման և շահագործման ծախսերը:

Ներկայումս ԱԹԱ-ները զորամիավորումների, զորամասերի, տարբեր գորատեսակների ստորաբաժանումների մարտական հնարավորությունների մեծացման կարևոր միջոցներից են: Օրինակ՝ ցամաքային զորքերի համար ԱԹԱ-ները կարող են օդային հետախուզում կատարել խոցման շարժական և ոչ շարժական օբյեկտների, այդ թվում՝ տանկային և մեքենայացված շարասյունների, հրետանու, համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի և օպերատիվ մարտավարական հրթիռների կրակային դիրքերի, հրամանատարական կետերի, պահեստների, ՀՕՊ-ի միջոցների, դաշտային օդանավակայանների հայտնաբերման ու կորդիինատների որոշման նպատակով:

Արդեն այսօր այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ականների հայտնաբերումը, կապի վերահաղորդումը, նշանացուցումը, ռադիոհետախուզությունը, ԱԹԱ-ները լուծում են ավելի հաջող կերպով, քան օդաչուավոր ավիացիան: Բացի այդ, ԱԹԱ-ները կարող են կատարել նշանակետերի լուսավորում լազերի ճառագայթով՝ ավիացիոն և հրետանային գերճզգրիտ զինամթերքի ուղղորդման համար, և, վերջապես, նորաստեղծ ԱԹԱ-ները կարող են ինքնուրույն կերպով իրականացնել առանձին նշանակետերի որոնում և ոչնչացում: Հարկ է հատուկ նշել, որ մեր երկրում կատարվում են ԱԹԱ-ների ինքնուրույն մշակումներ, և արդեն թողարկվել է մի քանի սերիական մոդել:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ՀՀ ՁՈՒ-ին հաջողվել է կարճ ժամանակում գործնականում զրոյից ստեղծել մարտունակ, ուժեղ ավիացիա, որը կարող է կատարել իր առջև դրված ցանկացած մարտական խնդիր: Սակայն չի կարելի բավարարվել ձեռք բերածով: Իր կազմավորման պահից (1914 թ. հոկտեմբերին տեղի է ունեցել առաջին օդային մարտը) մեկ հարյուրամյակից էլ պակաս ժամանակում մարտական ավիացիան անճանաչելի կերպով փոխվել է՝ վերածվելով համապիտանի, բազմագործառության ինքնավար ռադիո, որի կիրառումը կարող է վճռել ինչպես առանձին ճակատամարտերի, այնպես էլ ամբողջ

պատերազմի ելքը: Եվ չի կարելի հետ մնալ այս փոփոխություններից, անհրաժեշտ է քայլել համաշխարհային միտումներին և մշակումներին համընթաց՝ մեր երկրի անվտանգությանն ուղղված ռեալ սպառնալիքների հաշվառմամբ: Անհրաժեշտ է մշտապես կատարելագործել անձնակազմի պատրաստման համակարգը: Մինևույն ժամանակ, մարտական տեխնիկան սարքին վիճակում պահելու միջոցառումների հետ մեկտեղ պետք է կատարել աշխատանքներ՝ ուղղված այդ տեխնիկայի արդիականացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Авиация ВВС России и научно-технический прогресс: боевые комплексы и системы вчера, сегодня, завтра». Под ред. Е. А. Федосова. М., 2001.
2. «Беспилотные летательные аппараты (БЛА) зарубежных стран. Разработка и основные модели». «Современная армия», 07.04.2012 (<http://www.modernarmy.ru/article/152>).
3. «Боевое применение авиации в армейских (корпусных) операциях». Учебное пособие. М., 1998.
4. *О. Игнатьев*. Основные мероприятия оперативной и боевой подготовки ВВС европейских стран НАТО в 2011 году. «Зарубежное военное обозрение», 2012, № 1.

БОЕВАЯ АВИАЦИЯ АРМЕНИИ  
ВЧЕРА, СЕГОДНЯ, ЗАВТРА

*А. В. МУРАДЯН, генерал-майор, начальник авиации – начальник  
Управления авиации ВС РА, С. А. ГАСПАРЯН, подполковник,  
старший офицер оперативного отдела Управления авиации ВС РА*

РЕЗЮМЕ

В рамках оборонительных реформ приоритетной задачей является повышение боеспособности ВС РА, в том числе – военной авиации, за счет качественных изменений системы управления и технического оснащения. С этой точки зрения проанализированы роль и место боевой авиации в современных войнах, перспективы ее развития в РА. Представлены стоящие перед боевой авиацией задачи и пути их решения. В частности, предусматривается формирование нового рода авиации (истребительной авиации), повышение ее боеспособности за счет модернизации стоящей на вооружении авиационной техники и приобретения новой. В настоящее время ведутся работы по модернизации системы управления, навигации, связи, совершенствованию организационно-штатной структуры.



ARMENIA'S COMBAT AVIATION YESTERDAY,  
TODAY AND TOMORROW

*A. V. MURADYAN, Major General, Head of the Aviation –Head of the Department of Aviation of the RA Armed Forces, S. A. GASPARYAN, Lieutenant-colonel, Senior Officer at the Operations Section of the Department of Aviation of the RA Armed Forces*

SUMMARY

The priority task within the framework of defense reforms is to increase the fighting efficiency of the RA Armed Forces, including the military aviation, due to qualitative changes of the control system and technical facilities. In these terms, the role and place of combat aviation in modern warfares, the perspectives of its development in the Republic of Armenia have been analyzed. The tasks facing combat aviation and the ways to accomplish them are given. Particularly, it is envisaged to develop a new kind of aviation (fighter aviation), to enhance its fighting efficiency through modernizing the available aviation hardware and acquiring new one. At present, the activities on modernizing the control, navigation and signals system, and improving the organizational and staff structure are being carried out.

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՅԻԱՅԻ ԵՎ ՀՕՊ-Ի ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ  
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ  
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Դ. Կ. ԲԱԼԱՅԱՆ, գնդապետ, 1-ին կարգի օդաչու-հրահանգիչ,  
ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն  
ինստիտուտի պետ*



Վերջին երկու տասնամյակում տեխնոլոգիաների բուռն զարգացման հետևանքով ի հայտ եկան զինված պայքարի որակապես միանգամայն նոր միջոցներ, ինչը առաջ բերեց նաև ռազմական արվեստում հեղափոխական փոփոխություններ: Ներկայիս ռազմական գործողությունների վարման փորձը ցույց է տալիս, որ առաջին պլան են մղվել օդային հարվածները՝ գերճշգրիտ զենքի և զինամթերքի կիրառմամբ: Դրանց շնորհիվ՝ առանց կենդանի ուժի անմիջական շփման, շարքից հանվում են համապետական կարևորություն ունեցող պաշտպանական օբյեկտները, առաջին հերթին՝ կապի, հետախուզության և հրամանատրական հանգույցներն ու կետերը, հակաօդային պաշտպանության համակարգը: Հարձակողական և պաշտպանական օդային միջոցների զարգացումը հրամայաբար պահանջում է կատարելագործել ՀՕՊ-ի և ավիացիայի ոլորտի մասնագետների պատրաստման համակարգը՝ նրանց այնպիսի գիտելիքների փոխանցմամբ, որ նրանք ունակ լինեն համապատասխան կերպով արձագանքելու նաև ապագա սպառնալիքներին:

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը նշել է. «Կուրսանտները որակյալ սպաներ դառնալու համար պետք է կայուն գիտելիքներ ունենան, ֆիզիկապես ամուր լինեն ու նաև պիտի գիտակցեն, որ այդ ամենը պետք է կատարելագործեն առօրյա ծառայության ընթացքում»<sup>1</sup>:

Ըստ այդմ՝ ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտը, որը մասնագետներ է պատրաստում նշված ոլորտի համար, իր հիմնական նպատակն է համարում կուրսանտներին օժտել այնպիսի գիտելիքներով և հմտություններով, որ նրանք կարողանան հաջողությամբ կատարել օդային հարձակումից Հայրենիքի պաշտպանության գծով ամենաբարդ մարտական առաջադրանքները:

Միևնույն ժամանակ, չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ ընդհանուր առմամբ կրթությունը շարունակական գործընթաց է, որն իրականացվում է մի քանի փուլով՝ տարբեր ուսումնական հաստատություններում: Իսկ դա նշանակում է, որ ուսումնական ծրագրերը պետք է լինեն ըստ էության փոխհա-

<sup>1</sup> «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2013 թվականի տարեմուտի ուղերձը ՀՀ ԶՈՒ-ի ամենակազմին»: ՀՀ պաշտպանության նախարարություն, 2013:

մաձայնեցված: Դրան է նպատակաուղղված «Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգի»<sup>2</sup> այն պահանջը, որ բոլոր կրթական հաստատությունների, այդ թվում և ռազմական ավիացիոն ինստիտուտի ռազմական կրթական ծրագրերը պետք է համապատասխանեցվեն պետական կրթական չափորոշիչներին: Այսինքն՝ պետք է ներդրել ռազմակրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանության գնահատման և հավատարմագրման գործուն համակարգ: ՀՀ Կառավարության որոշումներով ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանփեդյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտի մասնագիտություններն ընդգրկված են «ՀՀ բարձրագույն կրթական մասնագիտությունների ցանկում»: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում 2013–2014 ուսումնական տարվանից ինստիտուտն անցնում է ուսումնառության կրեդիտային համակարգի:

Ռազմական ավիացիայի և ՀՕՊ-ի մասնագետների պատրաստման համակարգի զարգացումը ենթադրում է՝

- ռազմակրթական համակարգի կատարելագործման ուղիների մշակում,
- ժամանակակից չափանիշներին համապատասխան պրոֆեսորադասախոսական կադրերի ընտրության համակարգի մշակում ու ներդրում, ռազմակրթական ոլորտի համար պրոֆեսորադասախոսական կադրերի պատրաստում,
- բուհական և հետբուհական ռազմաճարտարագիտական բարձրագույն կրթության ամբողջական համակարգի ստեղծում,
- մասնագետների պատրաստմանը ներկայացվող պահանջների խստացում՝ ժամանակակից ՄՌ-S շահագործման առանձնահատկությունների հաշվառմամբ,
- առաջատար պետությունների փորձի ուսումնասիրում և տեղայնացում,
- մասնագիտական լսարանների ու լաբորատորիաների նյութատեխնիկական բազայի պարբերական համալրում և թարմացում, գրադարանային ֆոնդի հարստացում,
- կուրսանտներին համակարգչային տեխնիկայով ապահովում՝ Համացանցից օգտվելու հնարավորությամբ:

Հարկ է նշել, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող մեթոդական և մեթոդաբանական մոտեցումները հնարավորություն կտան կատարելագործելու Ռազմական ավիացիոն ինստիտուտում մասնագետների պատրաստման համակարգը, ինչը իր հերթին հնարավորություն կտա շրջանավարտի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, հմտություններն ու ունակությունները գործնականում կիրառելու ավելի նպատակային ձևով, հետևաբար և մեծացնելու մարտական առաջադրանքների կատարման արդյունավետությունը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջատար պետություններում առաջընթաց ունեն այն կրթական հաստատությունները, որտեղ

<sup>2</sup> «Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգ», ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի հմ. 9 արձանագրային որոշման հավելված 1 ([https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2012/03/MAR9-18\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf)):

կրթությունը ուղեկցվում է գիտահետազոտական և փորձարարական աշխատանքներով, ինչը կուրսանտների գիտելիքների հարստացման ու ամրապնդման կարևոր պայման է<sup>3</sup>: Այս նպատակով ՀՀ ՊՆ ռազմական ավիացիոն ինստիտուտում ստեղծվել է գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների բաժին, որը գիտատեխնիկական ոլորտում իրականացնում է համապատասխան ծրագրեր: Ընդ որում, այդ ծրագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական բնույթ: Այսպիսով՝ զուտ կրթական հաստատությունից ինստիտուտն աստիճանաբար կերպափոխվում է ռազմական ուղղվածությամբ գիտական հետազոտությունների կենտրոնի, որտեղ ավելի արդյունավետ կերպով կիրականացվեն ռազմական ավիացիայի և ՀՕՊ-ի մասնագետների պատրաստման աշխատանքները:

Հարկ է նշել, որ հանրապետության բարձրագույն կրթության համակարգին ՌՌԻՀ-երի ցածր մակարդակի ինտեգրվածության պատճառով զգալիորեն նվազում է ռազմական կրթության արդյունավետությունը: Դրա հետևանքով դժվարանում, հաճախ նույնիսկ անհնար է դառնում կրթության զարգացման այնպիսի կարևոր գործոնների ապահովումը, ինչպիսիք են հանրապետության մասշտաբով առաջավոր փորձի յուրացումն ու ներդրումը, արգասաբեր միջբուհական համագործակցությունը, դիմորդներից ապագա կուրսանտների ընտրագատման արդյունավետ մեխանիզմների մշակումն ու ներդրումը և այլն<sup>4</sup>:

Այս տեսակետից ռազմաուսումնական հաստատություններում ոչ միայն մասնագետների պատրաստման համակարգի, այլև ռազմական գիտության զարգացմանը խոչընդոտող պատճառների վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

1. մշակել ՀՀ և ռազմավարական գործընկեր պետությունների կրթօջախների հետ ռազմական կրթության և ռազմական գիտության բնագավառում փոխգործության այգորիքն, որոշել ռազմագիտական գործընկերության գերակա ուղղությունները ՀՕՊ-ին և ավիացիային վերաբերող մասով,

2. մշակել ԱՊՀ անդամ երկրների ռազմական ուսումնական հաստատությունների հետ ինչպես համատեղ գիտահետազոտական աշխատանքների կատարման ծրագրի, այնպես էլ անձնակազմի մասնագիտական պատրաստման կոնկրետ ծրագրերի իրականացման ճանապարհային քարտեզ:

Առաջավոր փորձի կիրառման ու տարածման տեսակետից կարևոր է ապահովել ՀՀ զորային կառույցի և ՀՀ ռազմակրթական օջախների սերտ համագործակցությունը, ինչը հնարավոր կդարձնի մասնագիտական գործունեութ-

<sup>3</sup> Сту, оппнակ, Д. А. Грдннев. Военное образование в России на современном этапе развития. «Философия образования», 2009, № 3(28); R. L. Davis, F. P. Donnini. Professional Military Education for Air Force Officers: Comments and Criticisms. Alabama, 1991:

<sup>4</sup> Այդ մասին տես Դ. Կ. Բալայան, Դ. Մ. Ալեքսանյան, ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանփեդյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում ռազմական կրթության զարգացման հարցի շուրջ: «ՀԲ» 2012, հմ. 3:

յան ու կրթության համակարգերի միջև մշտական արդյունավետ փոխադարձ կապը: Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ սպաների պատրաստման գործում գերակա խնդիր է ուսման և դաստիարակության շարունակականության ապահովումը ծառայության ամբողջ ընթացքում<sup>5</sup>:

Այսպիսով՝ ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում ինտենսիվ աշխատանքներ են տարվում ռազմական ավիացիայի և ՀՕՊ-ի մասնագետների պատրաստման համակարգի կատարելագործման ուղղությամբ՝ ժամանակակից ռազմական ավիացիայի և ՀՕՊ-ի համակարգի միջոցների զարգացման հեռանկարների, շահագործման առանձնահատկությունների և վերջին տասնամյակի զինված բախումներում դրանց կիրառության դերի ու նշանակության հաշվառմամբ:

<sup>5</sup> Steu В. Ф. Лазукин, А. К. Ботнев. К вопросу о многоуровневой подготовке военных специалистов. «Военная мысль», 2007, № 7:

## РАЗВИТИЕ СИСТЕМЫ ПОДГОТОВКИ СПЕЦИАЛИСТОВ В ОБЛАСТИ ВОЕННОЙ АВИАЦИИ И ПВО В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ

*Д. К. БАЛАЯН, полковник, летчик-инструктор I класса, начальник  
Военного авиационного института им. маршала А. Ханферянца МО РА*

### РЕЗЮМЕ

Темпы развития боевой авиационной техники и средств ПВО, возрастание их роли в современных вооруженных конфликтах обуславливают высокие требования к подготовке обслуживающих военных кадров. С учетом этих тенденций в Военном авиационном институте им. маршала А. Ханферянца проводится комплекс мероприятий по развитию системы подготовки специалистов военной авиации и ПВО. В качестве конечного результата планируется формирование целостной системы высшего военно-профессионального многоуровневого образования, сочетание образовательной и научно-исследовательской деятельности с привлечением к ней курсантов, внедрение комплекса методологических инноваций по подготовке способного заниматься исследовательской работой профессорско-преподавательского состава для ВВУЗов в соответствии с государственными стандартами Республики Армения.

THE DEVELOPMENT OF THE TRAINING SYSTEM OF SPECIALISTS  
IN THE SPHERE OF MILITARY AVIATION AND AIR DEFENSE  
IN THE CONTEXT OF DEFENSE REFORMS

*D. K. BALAYAN, Colonel, 1<sup>st</sup> Class Pilot-Instructor, Head of Marshal A. Khanperyants  
Military Aviation Institute*

SUMMARY

The development rates of combat aviation equipment and means of Air Defense, the increase of their role in contemporary armed conflicts stipulate high training requirements to service personnel. Taking into account these tendencies a set of measures for developing the training system of specialists of military aviation and Air Defense is used in Marshal A. Khanperyants Military Aviation Institute. As a final result the following is being planned: formation of comprehensive system of higher professional military multilevel education; combination of educational and academic-research activity with the involvement of cadets; inculcation of a set of methodological innovations on training research-capable faculty for higher military-educational institutions in conformity with the state standards of the Republic of Armenia.

ՀՕՊ-Ի ՁՈՐՔԵՐԻ ՏԱՐԱՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ  
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԱՐԴԻԱԿԱՆ ՌԱԴԱՐՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ  
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

*Մ. Վ. ՄԱՐԿՈՍՅԱՆ, փեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
«Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ  
տնօրեն, ԵրՃՇՊՀ ինֆորմատիկա, հաշվողական փեխնիկա  
և կառավարման համակարգեր ամբիոնի վարիչ*



Պետության անվտանգության ապահովման կարևոր նախապայմաններից են օդային սահմանների պաշտպանությունը և թռիչքների կարգավորումը: Դա իրականացվում է ռադարային տեխնիկայի միջոցով, որին, համաձայն լուծվող խնդիրների, ներկայացվում են տարբեր պահանջներ՝ կապված ոչ միայն ռադարների տեխնիկական, այլև մարտավարական պարամետրների հետ: Քաղաքացիական ռադարային համակարգերը ապահովում են օդային օբյեկտների գրանցումը և ուղեկցումը՝ գլխավորապես հիմնվելով այսպես կոչված երկրորդական ռադարների տվյալների վրա, որոնք աշխատում են օդային օբյեկտներից ստացված տեղեկությով: Մինչդեռ ռազմական նախանշանակման ռադարները կարողանում են հայտնաբերել և ուղեկցել թռչող օբյեկտներն առանց դրանցից որևէ ակտիվ ազդանշան ստանալու:

Ժամանակակից զինված բախումների փորձը ցույց է տալիս, որ հակամարտող պետությունների առաջնահերթ խնդիրն է հակառակորդի ռադարների հայտնաբերումը և ոչնչացումը, ինչի հետևանքով օդային տարածքը դառնում է անվերահսկելի, իսկ պաշտպանական գոտիները՝ խոցելի: Հնարավոր հարձակումներից ռադարային համակարգերի պաշտպանությունը կատարվում է տարբեր եղանակներով՝

Ժամանակակից զինված բախումների փորձը ցույց է տալիս, որ հակամարտող պետությունների առաջնահերթ խնդիրն է հակառակորդի ռադարների հայտնաբերումը և ոչնչացումը, ինչի հետևանքով օդային տարածքը դառնում է անվերահսկելի, իսկ պաշտպանական գոտիները՝ խոցելի: Հնարավոր հարձակումներից ռադարային համակարգերի պաշտպանությունը կատարվում է տարբեր եղանակներով՝

1. պասիվ ռադարների («Վերա-Ե», «Կոլչուգա» և այլն) օգտագործմամբ,  
2. կեղծ ազդանշանների գեներատորների (ԿՌ-ՏՁ-125-2Մ (KPT3-125-2M)) համակարգերի օգտագործմամբ,

3. պաշտպանական տարբեր գոտիների կիրառմամբ: Այսպես. առաջին գոտու ռադարները օդային տարածքի վիճակի վերաբերյալ տեղեկույթ են ստանում երկրի ավելի խորքում տեղադրված ռադարներից: Այդ ռադարները գործարկվում են շատ կարճ ժամանակահատվածով: Որպես օրինակ կարող են ծառայել զենիթահրթիռային համալիրները,

4. ՀՕՊ-ի զորքերի տարաշարժունության մեծացմամբ:

Որպես կանոն, շարժական (մոբիլ) ռադարների գները մի քանի անգամ գերազանցում են ոչ շարժական (ստացիոնար) ռադարների գները: Միևնույն ժամանակ, շարժական ռադարների աշխատանքային ռեսուրսը փոքր է: Այդ

պատճառով հաճախ նպատակահարմար է ունենալ մեծ ծածկույթով, վաղորոք զգուշացնող ոչ շարժական ռադարներ, որոնք պահանջում են սպասարկման ավելի փոքր ծախսեր և կարող են աշխատել խաղաղ պայմաններում՝ ապահովելով առաջադրված խնդիրների կատարումը և խնայելով շարժական ռադարների ռեսուրսները:

Հետազոտական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշակի պատրաստվածություն ունեցող հակառակորդը կարող է հայտնաբերել աշխատող ռադարը և միջոցներ ձեռնարկել դրա ոչնչացման ուղղությամբ: Դա կարող է տևել մինչև 30 րոպե: Ընդ որում, այդ ժամանակահատվածում անձնակազմը պետք է հասցնի ապաքացազատել ռադարային կայանը և տեղակայել մեկ այլ վայրում: Դա բավական կարևոր մարտական առաջադրանք է, որի կատարման արդյունավետությունը պայմանավորված է ռադիոտեխնիկական, մեխանիկական և մեքենաշինական համալիր խնդիրների լուծմամբ: Ռադարները աշխատում են ալիքի երկարության տարբեր տիրույթներում: Այդ իմաստով դրանց աշխատանքը, որպես կանոն, կատարվում է մետրային երկարալիք, մետրային կարճալիք, մետրային գերկարճալիք, դեցիմետրային, սանտիմետրային և միլիմետրային տիրույթներում: Ալիքի երկարությունից կախված՝ փոխվում են ռադարների եզրաչափերը, օգտագործվող հզորությունները և հսկման տարածքները: Ստորև բերված են տարբեր տիպի ռադարների վերլուծական տվյալները:

*Աղյուսակ*

Տեսակ	Աշխատանքային տիրույթը	Չափերը	Հզորությունը	Հայտնաբերման հեռավորությունը	ԴՉԳՐՆՈՒՄՅՈՒՆՆԵՐ	Գ-ինը	Սպասարկման ծախսը
ոչ շարժական	մետրային երկարալիք	շատ-շատ մեծ	շատ մեծ	հորիզոնից այն կողմ	նվազ	միջին	մեծ
	մետրային կարճալիք	շատ մեծ	մեծ	500–5000 կմ	միջին	միջին	միջին
	մետրային գերկարճալիք	մեծ	մեծ	500–5000 կմ	միջին	միջին	միջին
	դեցիմետրային	միջին	միջին	400 կմ	մեծ	բարձր	միջին
	սանտիմետրային	փոքր	փոքր	150 կմ	մեծ	բարձր	միջին
	միլիմետրային	չի օգտագործվում					
շարժական	մետրային երկարալիք	չկա					
	մետրային կարճալիք	չկա					
	մետրային գերկարճալիք	մեծ	մեծ	500 կմ	մեծ	բարձր	մեծ
	դեցիմետրային	միջին	միջին	400 կմ	մեծ	բարձր	մեծ
	սանտիմետրային	փոքր	փոքր	150 կմ	մեծ	բարձր	միջին
	միլիմետրային	շատ փոքր	փոքր	50 կմ	մեծ	բարձր	միջին




Ադյուսակից կարելի է եզրակացնել, որ շարժական ռադարների ընտրությունը հիմնականում պայմանավորված է դրանց եզրաչափքերով: Ընդ որում, անհրաժեշտ է պահպանել դրանց մարտավարատեխնիկական բնութագրերը:

Որոշակի կլիմայական պայմանների դեպքում օդերևութաբանական կայանը սովորաբար համապատասխան ծառայություններին տեղեկացնում է եղանակի փոփոխությունների մասին, ըստ այդմ ռադարային համակարգերի հրամանատարները որոշում են ընդունում համակարգի բացազատման կամ սպաքացազատման վերաբերյալ:

Մեծ շարժունակություն ունեցող, մետրային կարճալիք տիրություն աշխատող ռադարային համակարգերի օրինակ են «Նեբո» և «Վոստոկ» համակարգերը (նկ. 1 և նկ. 2):

Առաջարկվում է հայրենական արտադրության մետրային տիրություն աշխատող շարժական «ՄՇՈ-200» ռադարային համակարգ (նկ. 3), որը նմանակ համակարգերից տարբերվում է ավելի մեծ հաճախականային ընդգրկությամբ: Այդ հաճախականային տիրություն աշխատող ռադարը դժվարացնում է հակառակորդի աշխատանքը: Ավելին. բացազատման և սպաքացազատման ժամանակը կազմում է 20 րոպե: «ՄՇՈ-200»-ը քողարկվում է երկու տարբերակով՝ բեռնատարի ամրաշրջանակի և կցորդի վրա: Իհարկե, վերջին տարբերակի դեպքում ռադարային խմբում կարելի է կրճատել մի մեքենա, սակայն դա ցանկալի չէ, քանի որ շարժունակության տեսակետից կնվազեցնի համակարգի հուսալիությունը:




Նկ. 1. «Նեբո» ռադարային համակարգ




Նկ. 2. «Վոստոկ» ռադարային համակարգ

Գեցիմետրային և սանտիմետրային տիրություն աշխատող շարժական ռադարային համակարգերի օրինակ են ռուսական «Ս-300», «Գամմա-Գ», ԱՄՆ-ի Զինված ուժերում կիրառվող «Սենտինել» («Sentinel») կայանները (նկ. 4, 5, 6) և առաջարկվող՝ հայրենական արտադրության «ՄԵՍ-3» ու «ՄԵՍ-5» (նկ. 7, 8) տարբերակները, որոնք առանձնանում են ավելի մեծ ճշգրտությամբ և սպասարկման ճկունությամբ:



ա)



բ)

Նկ. 3. «ՄՇՌ-200» ռադարային համակարգը բացազատման տարբեր վիճակներում





Նկ. 4. «Մ-300» ռադարային համակարգը




Նկ. 5. «Գ-ամնա-Դ» ռադարային համակարգը



Նկ. 6. Շարժական ՖԱՑ-ով «Սենտինելը»



Նկ. 7. «ՄԵՄ-3» դեցիմետրային ռադար



Նկ. 8. «ՄԵՍ-5» դեցիմետրային ռադար

Այսպիսով՝ ժամանակակից զինված բախումների փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է կազմակերպել ոչ շարժական և շարժական ռադարների համալիր աշխատանք: Կարծում ենք, որ Հայաստանն ունի համապատասխան գիտական ներուժ՝ ռադարային համակարգերը ժամանակակից պահանջներին համարժեք կատարելագործելու և նոր մրցունակ համակարգեր ստեղծելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Комплекс защиты от противорадиолокационных ракет KPT3-125-2M». «RUSARMY.COM» (<http://www.rusarmy.com/forum/topic7210.html>).
2. «Станция радиотехнической разведки «Кольчуга»», 04.01.2011, «ФЛОТ 2017» (<http://flot2017.com/file/show/none/24581>).
3. Carlo Kopp. NNIIRT 1L119 Nebo SVU/RLM-M Nebo M Assessing Russia's First Mobile VHF AESAs. Technical Report APA-TR-2008-0402 (<http://www.ausairpower.net/APA-Nebo-SVU-Analysis.html>).
4. Carlo Kopp. Russian/PLA Low Band Surveillance Radars (Counter Low Observable Technology Radars). Technical Report APA-TR-2007-0901 (<http://www.ausairpower.net/APA-Rus-Low-Band-Radars.html>).
5. «VERA S/M Passive Surveillance System». «Ministry of Defence and Armed Forces of the Czech Republic» (<http://www.army.cz/scripts/detail.php?id=6159>); «Vera-NG by ERA». «ERA» (<http://era.aero/products/vera-by-era/>).

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОЗДАНИЯ СОВРЕМЕННЫХ РАДАРОВ С ТОЧКИ ЗРЕНИЯ УВЕЛИЧЕНИЯ МАНЕВРЕННОСТИ ВОЙСК ПВО

*М. В. МАРКОСЯН, доктор технических наук, профессор, директор ЗАО «Ереванский научно-исследовательский институт средств связи», заведующий кафедрой информатики, вычислительной техники и систем управления ЕГУАС*

РЕЗЮМЕ

Одной из важнейших задач организации противовоздушной обороны является правильный выбор средств и сил. С этой точки зрения немаловажную роль играют мобильные средства ПВО, к которым предъявляются более жесткие требования в аспекте времени развертывания, поскольку чем меньше время развертывания или свертывания, тем меньше вероятность обнаружения противником местонахождения радара и его уничтожения.

Приведены краткие сравнительные характеристики различных видов радаров. Представлены также отечественные варианты мобильных систем. Указаны целесообразные диапазоны частот и пути их реализации.

SOME ISSUES ON CREATING UP-TO-DATE RADARS  
FROM THE PERSPECTIVE OF INCREASING MANEUVERABILITY  
OF THE AIR DEFENSE TROOPS

*M. V. MARKOSYAN, Doctor of Technical Sciences, Professor, Director of the «Yerevan Telecommunication Research Institute», Head of the Chair of Informatics, Computer Science and Control Systems, YSUAC*

SUMMARY

One of the most important tasks of organizing air defense is a correct choice of means and force. In these terms, mobile means of Air Defense play an essential role, on which tougher requirements are imposed regarding the deployment time, as the less the time of deployment or curtailment, the less the possibility of revealing the location of a radar and destroying it by an enemy.

Brief comparative characteristics of different kinds of radars are given. Domestic variants of mobile systems are represented as well. This article specifies appropriate ranges of frequencies and the ways of their realization.

## ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Վ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,  
ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն,  
Հ. Գ. ՇԵԿՅԱՆ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Վերջին տասնամյակի ռազմական հակամարտությունների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ապագայի պատերազմները վարվելու են օդատիեզերական տարածությունում և ծովում՝ օպերացիաների անքակտելի փոխկապվածության պայմաններում: Տանկերին, հրետանուն և կենդանի ուժին կփոխարինեն ավիացիոն և հրթիռային խոցման գերճշգրիտ միջոցները: Եվ պատահական չէ, որ ռազմական ավիացիայի զարգացումը առաջատար երկրների կողմից դասվել է գերակա ուղղությունների շարքը:



Ավիացիայի զարգացումը ներակայորեն ենթադրում է երկու կարևորագույն խնդիրների լուծում՝ ապահովել թռիչքի առավելագույն բարձրություն և արագություն, ինչը նշանակում է տեխնոլոգիական նոր լուծումների միջոցով նոր բարձրությունների, արագության գերձայնային և հիպերձայնային տիրույթների յուրացում: Սակայն հարկ է նշել, որ թեև ավիացիայի ոլորտի զարգացման գործում մեծ դեր ունեն առաջադիմական տեխնոլոգիաների մշակումն ու կիրառումը, այդուհանդերձ նման մշակումների հաջողությունը պայմանավորված է այն շուկայական համատեքստով, որը որոշվում է տնտեսական զարգացման հարացույցով:

Մասնագետները նշում են, որ ավիացիոն արդյունաբերության զարգացման նոր հայեցակարգի էությունը առաջադրում է շուկայական հարաբերությունների ոչ սովորական կանոններ, որոնք ենթադրում են բիզնեսի համախմբում և հանրնդհանրացում համաշխարհային ավիատիեզերական արդյունաբերության բնագավառում: ՌՖՍՄԻ ավիացիայի ոլորտում նոր տեխնոլոգիական մշակումներն ու դրանց իրացումը, դրսևորվելով նոր բիզնես-մոդելներում, հանգեցնում են ավիաշինության շուկայի հանրնդհանրացմանը, նրա մասնակիցները միավորվում են՝ ձևավորելով այնպիսի արդյունաբերական դաշինքներ, ինչպիսիք են «Բոյինգը» («Boeing»), «Դասո Ավիասայոնը» («Dassault Aviation»), «Սուխոյ» («Sukhoi») ԲԲԸ-ն, և այլն:

Համաշխարհային պրակտիկայում ավիաշինությունը խիստ զգայուն, առավել բարձր տեխնոլոգիական հատվածներից է, որն ազդեցություն է գործում համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող զարգացումների վրա:

Այդ զգայունակությունը հանգեցնում է էական տեխնոլոգիական կերպավոր-  
 խումների՝ շուկան համալրելով արտադրանքի նոր նմուշներով:

Ավիացիոն տեխնոլոգիաների զարգացման դինամիկայի վերլուծությունը  
 ցույց է տալիս, որ ներկայումս ինտենսիվորեն զարգանում են «երկակի նա-  
 խանշանակման» տեխնոլոգիաները:

Ավիաարդյունաբերության զարգացման ընդհանուր միտումների վերլու-  
 ծությունը՝ ըստ Մ. Ի. Բայկովի, Ս. Գ. Գավրիլովի և Ն. Ա. Գավրիլիչևի, ցույց  
 է տալիս, որ ռազմական ավիաշինության տեխնոլոգիաների զարգացման կա-  
 րևոր ուղղություններից են գերձայնային, հիպերձայնային թռչող ապարատ-  
 ները (ԹԱ), անօդաչու թռչող ապարատները (ԱԹԱ) և չորրորդ ու հինգերորդ  
 սերունդների ինքնաթիռները:

Արդեն ձևավորվում են նաև ռազմական ավիացիոն համալիրների 6-րդ  
 սերնդի կոնցեպտները: Այդ սերնդի ինքնաթիռները բնութագրվում են մեծ  
 ռազմական հզորությամբ, գոյունակությամբ, բազմաֆունկցիոնալությամբ և  
 բարձր մակարդակի ավտոմատացմամբ: Դրանց նմուշները կցուցադրվեն  
 2020 թվականից հետո:

Մասնագետները նշում են, որ օդային հարձակման միջոցների տեսա-  
 նելիության նվազեցման «Ստելս» («Stealth») անվանումն ստացած համալիր  
 տեխնոլոգիան ԱՄՆ-ի օդատիեզերական համակարգերի զարգացման գե-  
 րակա ուղղություններից է: «Ստելսի» շրջանակներում ներկայումս արդեն  
 ստեղծվել են կամ մշակվում են այնպիսի ԹԱ-եր, ինչպիսիք են հարվածային  
 կործանիչ Ֆ-117Բ-ն, Ֆ-22-ը, Ֆ-35-ը (*F-117B, F-22, F-35*) բազմապատա-  
 կային մարտավարական կործանիչները, Բ-2 (*B-2*) ռազմավարական ռմբա-  
 կոծիչը, Էքս-47Ա (*X-47A*) և Էքս-45Ա (*X-45A*) մարտական ԱԹԱ-ները, ՌԱՀ-  
 66 (*RAH-66*) հետախուզական-հարվածային ուղղաթիռը: Նոր տեխնոլոգիա-  
 ների օգտագործմամբ դրանց կառուցվածքներում կիրառված նորագույն  
 լուծումները հնարավորություն տվեցին նվազեցնելու ապարատի տեսանելի-  
 ությունը ռադիոտեղորոշումային, ինֆրակարմիր, օպտիկական և ձայնային  
 ռադիոալիքների տիրույթներում:

Հայտնի է, որ ձայնի արագության հաղթահարման գաղափարը իրակա-  
 նացվեց նախ՝ գերձայնային, այնուհետև՝ հիպերձայնային ինքնաթիռներում:  
 Հիպերձայնային ԹԱ-երի մշակման գործում ներկայումս նկատելի է էական  
 առաջընթաց՝ կապված հիպերձայնային ԹԱ-երի և դրանց ուժակայանքների  
 փորձարարական նմուշների հետ, որոնց հիման վրա առաջիկա տասնամ-  
 յակում պլանավորվում է ստեղծել մեծ հեռահարության տարբեր դասերի  
 կառավարվող հրթիռներ, իսկ հետագայում նաև հեռանկարային օդանավա-  
 վարման համակարգեր:

Փորձագետների գնահատմամբ՝ ռազմավարական հիպերձայնային ռմբա-  
 կոծիչ ստեղծման նպատակով անհրաժեշտ է կատարել նոր տեխնոլոգիական  
 մշակումներ՝ կապված սկզբունքորեն նոր ձուլվածքների ու պոլիմերների ստեղծ-  
 ման և արդյունաբերական արտադրության հետ:

Ներկայումս եզակի հատկանիշներով օժտված նոր նյութերը հնարա-

վորություն են տալիս ինքնաթիռաշինության և շարժիչաշինության բնագավառներում որակական անցում կատարելու նախագծման միանգամայն նոր մակարդակի: Ոլորտի առաջատար մասնագետների կարծիքով՝ առաջիկայում անհրաժեշտ է լուծել մի շարք պրոբլեմներ, որոնց շարքում գերակա է հիպերձայնային բանելակարգում կայուն կերպով աշխատող և մեծ արդյունավետություն ունեցող շարժիչի նախագծումը:

Այդպիսի մշակում կատարվել է ԱՄՆ-ում, մասնավորապես՝ առաջին անգամ փորձարկվել է Էքս-43Ա «ՆԱՍԱ» (X-43A «NASA») ջրածնային վառելիքով աշխատող հիպերձայնային ուղղահոս օդային-ռեակտիվ շարժիչով փորձարարական սուպերինքնաթիռը, որի թռիչքի արագությունը փորձարկման ընթացքում հասել է մինչև 11200 կմ/ժ-ի, ինչը գրեթե տասն անգամ գերազանցում է ձայնի արագությունը: Ինքնաթիռն առանձնահատուկ է այն առումով, որ նրա շարժիչը աշխատում է ջրածնային վառելիքով՝ միևնույն ժամանակ օգտագործելով շրջապատող օդի թթվածինը, ինչը նրան հնարավորություն է տալիս կատարելու մեծ արագությամբ պտույտներ: Նոր շարժիչներն ստեղծվում են լավ շահագործական բնութագրեր ունեցող ածխաջրածնային վառելիքով աշխատող գերձայնային ուղղահոս հրթիռային շարժիչների փորձարկված բաղադրատարրերի հիմքի վրա:

Վերը նշված մասնագետների գիտավերլուծական աշխատություններում իր ուրույն տեղն է զբաղեցնում նաև ռուսական «Այաքս» («Аякс») հիպերձայնային ինքնաթիռների հայեցակարգը, որը հիմնված է իրեն շրջահոսող օդի հոսանքի հետ ԹԱ-ի ակտիվ էներգետիկ փոխազդեցության վրա, ենթադրում է վառելիքի նախնական էներգիայի լրիվ օգտագործում, ինչը նպաստում է թերմոդինամիկական փուլաշրջանի արդյունավետության մեծացմանը: Ներկայումս ռուսաստանյան մասնագետների կողմից հայեցակարգի հիմնական դրույթները խորացված տեսական լրամշակում են անցնում, անցկացվում են նաև փորձարարական հետազոտություններ՝ վերջին տարիներին ստացված նոր տեխնոլոգիական լուծումների հաստատման նպատակով: 1970 թվականից աշխարհի առաջատար երկրները աշխատում են հինգերորդ սերնդի կործանիչի մշակման ուղղությամբ:

Մասնագիտական գրականությունում հինգերորդ սերնդի կործանիչները ներկայացված են որպես բազմաֆունկցիոնալ ինքնաթիռներ, որոնք ռադիոտեղորոշումային և ինֆրակարմիր տիրույթներում գրեթե աննկատելի են: Այդ սերնդի ինքնաթիռներն ունեն կառավարման ավտոմատացված համակարգ:

Մակայն հինգերորդ սերնդի ինքնաթիռների զարգացումը հնարավոր չէ պատկերացնել առանց նոր նյութերի կիրառման, որոնք հնարավորություն կտան ինչպես նվազեցնելու զանգվածային, այնպես էլ մեծացնելու շահագործական բնութագրիչները:

Լե Բուրժե (*Le Bourget*) ավիասրահում ցուցադրվեց չորրորդ սերնդի Սու-35 Ս (*Cy-35 C*) ինքնաթիռը, որը համալրված է կառավարման՝ «Իրբիս» (*«Ирбис»*) կոչվող նորագույն ռադիոտեղորոշումային համակարգով (ՌՏԿՀ): Այդ համակարգը մշակել է «Ռադիոէլեկտրոնային տեխնոլոգիաներ» կոնցեռնը:

Այն համարվում է աշխարհում ամենահզոր Ռ-SԿՀ-ն և հնարավորություն է տալիս օդային օբյեկտը հայտնաբերելու մեծ հեռավորության վրա (մինչև 400 կմ), միաժամանակ ուղեկցելու մինչև 30 նշանակետեր և կրակ արձակելու 8 օբյեկտների ուղղությամբ: Ինքնաթիռը հակառակորդի համար գործնականորեն անխոցելի է: Սու-35 Ս-ն ամենամեծ արագություն ունեցող կործանիչն է: 11000 մետր բարձրության վրա արագությունը հասնում է 2400 կմ/ժ-ի: Այդ ինքնաթիռը համարյա երկու անգամ գերազանցում է ժամանակակից ֆրանսիական և շվեդական կործանիչների թռիչքային հեռավորությունը (3600 կմ՝ առանց կախովի բաքերի):

Հինգերորդ սերնդի Ֆ-22 «Ռ-ապտոր» (*F-22 (Raptor)*) առաջին կործանիչն ստեղծվել է 2001 թ. ԱՄՆ-ում: Նա աննկատելի է ռադարների համար, ունի թվային կառավարմամբ շարժիչ և նորագույն ավիոնիկա, որոնք արդի մշակումների արդյունք են:

Այսօր համաշխարհային պրակտիկայում հայտնի են հինգերորդ սերնդի ինքնաթիռների երկու շարժիչներ. ամերիկյան Ֆ-119ՊԴ-արվՅու-100-ը (*F-119PW-100*), Ֆ-22 ծանր կործանիչի համար և Ֆ-135-ի ընտանիքը՝ Ֆ-35 «Լայթինգ» II (*F-35 Lighting II*) թեթև կործանիչի համար:

Բացառիկ նախագծերից մեկը դարձավ «Սուխոյ Սուպերջետ 100» (*Cyxoï Cynepծաձեմ 100, Sukhoi Superjet 100*) ինքնաթիռի ստեղծման համատեղ նախագիծը, որում առաջատար դերը պատկանում է Ռուսաստանին: Ինքնաթիռի համար հատկանշական է այն, որ կիրառվում են ճախրասավառնակի ազդեցատների և թևի, պոչաթևերի համակարգերի, ամրաշրջանակի, ուժակայանքի, անձնակազմի խցիկի, ինքնաթիռի հիմնական համակարգերի և համալրող պատրաստվածքների առավելագույն միասնականացման սկզբունքները: Ըստ տեխնիկական բնութագրերի՝ ինքնաթիռն ունի նվազեցված թռիչքային կշիռ և օժտված է աննախադեպ հուսալիությամբ, շահագործման և տեխնիկական սպասարկման համար պահանջում է ավելի փոքր ծախսեր:

Ներկայումս ավարտված է Բոյինգ-787 (*Boeing-787*) սերիայի ինքնաթիռի մշակումը: Այն հայտնի է որպես առաջին քաղաքացիական ԹԱ, որը 50 %-ով կառուցված է կոմպոզիտային նյութերից: Դրանք ապահովում են հիմնամասի և թևերի միատարրությունը՝ յուրաքանչյուր ինքնաթիռի համար տնտեսելով մինչև 1500 ալյումինե թերթեր և ամրակցման 50000 դետալներ: Կշռի նվազեցման հաշվին վառելիքի ծախսը նվազել է 20 %-ով, իսկ բեռնունակությունը՝ աճել 45 %-ով:

Մասնագետները «երկակի նախանշանակման» տեխնոլոգիաների զարգացման տեսակետից նշում են, որ միայն վերջին չորս տարիներին Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի 20 ինստիտուտների և Դաշնային պետական միացյալ ձեռնարկության (ԴՊՄՁ) «Ավիացիոն նյութերի համառուսական ինստիտուտի» հետ համագործակցության շնորհիվ կատարվել են հարյուրից ավելի համատեղ գիտատեխնիկական աշխատանքներ, կատարելագործվել են երեսուրկ ավիացիոն նյութեր, ստեղծվել են դրանց ստացման ծրագրային ապահովման նոր մեթոդիկաներ:



«Սայլուտ» ԴՊՄՉ և Կառուցվածքային մակրոգենետիկայի ինստիտուտի գործընկերության արգասիք էր ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային համադրմամբ նյութերի ստացման նոր տեխնոլոգիաների մշակումը, որոնք հնարավորություն կտան լուծելու ավիաշարժիչաշինության մի շարք խնդիրներ:

Ավիացիայի ներկայիս զարգացումը հնարավոր չէ պատկերացնել առանց նանոտեխնոլոգիաների: Օրինակ, ինչպես նշում են մասնագետները, նանոտեխնոլոգիաների հիմքի վրա առաջիկա տասը տարիներին հնարավոր կլինի ստեղծել հակասառցապատման ծածկույթներ, 6-8 անգամ բարձրացնել թռիչքների անվտանգության մակարդակը, տասնյակ տոկոսներով նվազեցնել վառելիքի ծախսը, մեծացնել բնապահպանականությունը և հարմարավետությունը: Նանոտեխնոլոգիաների շնորհիվ կարող են արտադրվել ավիաարդյունաբերության համար անհրաժեշտ կոմպոզիտային նյութեր, գալվանական ծածկույթներ, հակաստատիկ ծածկույթներ, հերմետիկ ստահնձներ և այլն:

Այսօր ավիացիայի համար առանձնահատուկ հրատապություն են ձեռք բերել նոր կոմպոզիտային նյութերը: Տու-214 (*Ty-214*) ավիալայներում կառուցվածքային տարրերի մոտ 25 %-ը պատրաստված է կոմպոզիտային նյութերից, իսկ նորագույն Բոյինգ-787 Դրիմլայներում (*Boeing-787 Dreamliner*)՝ 50 %-ը:

«Սուխոյ Սուպերջետ» և ՄՍ-21 (*MC-21*) նոր ինքնաթիռներում Տու-214-ի համեմատությամբ ավելի շատ կոմպոզիտային նյութեր են օգտագործվելու, պլանավորվում է դրանց վրա տեղակայել այսպես կոչված «սև թև», որի կառուցվածքի բոլոր տարրերը պատրաստված կլինեն ածխածնային կոմպոզիտից:

Գիտնականներին հաջողվել է նանոկառուցվածքների կիրառմամբ երեք անգամ մեծացնել սովորական սիլիցիումի կարբիդի հիմքի վրա ստեղծված նյութերի կարծրությունը: Արդեն ստեղծվել է թափանցիկ պոլիմերային մակերեսների համար մի ծածկույթ, որը մի քանի անգամ մեծացնում է պլաստիկական զանգվածի ամրությունը՝ ձևավորելով մակերևութային գերկարծր շերտ: Այն պաշտպանում է ոչ միայն կենսաբանական և քիմիական ակտիվ նյութերից, այլև հրազենային գնդակներից:

Հեռանկարում նախատեսվում է ռազմական ինքնաթիռները պատել հատուկ «էլեկտրամեխանիկական ներկով», որը կազմված կլինի մեծ թվով նանոմեխանիզմներից: Պատվածքը հնարավորություն կտա նրանց քամելեռնի պես փոխելու իրենց գույնը, կկանխի քայքայումը և կկարողանա «փակել» մեքենայի իրանում առաջացած փոքր վնասվածքները: Հետազոտողները ձգտում են օպտիկական մատրիցների համակարգի կիրառմամբ հասնելու ինքնաթիռի անտեսանելիության ապահովման: Սա ավիացիոն արդյունաբերությունում ընդամենը մեծ նանոդարաշրջանի սկիզբն է:

Մինչ այսօր ոչ մի ինքնաթիռ չի բարձրացել 40 կմ-ից բարձր: Թռիչքի բարձրության և արագության տեսակետից բալիստիկական հրթիռների ակնհայտ գերազանցությունը կոնստրուկտորներին մղեց թռիչքի մեծ արագությամբ:

յամբ և բարձրությամբ օժտված նոր օդաչուավոր ինքնաթիռների հայեցակարգի ստեղծմանը: Դրանք հիմնված կլինեն ժամանակակից հրթիռային տեխնիկայի և ավիացիայի նվաճումների վրա:

Բալիստիկական հրթիռապլանը (հրթիռաթևը) կկարողանա թռչչի ժամանակ զարգացնել մինչև 20000 կմ/ժ և ավելի հիպերարագություն, ինչը չեն կարող անել ժամանակակից ռեակտիվ ինքնաթիռները: Ըստ թռչչի հեռավորության՝ այն ունակ է գերազանցելու սովորական բալիստիկական հրթիռները:

Ներկայումս առաջատար պետություններում ինտենսիվ աշխատանքներ են կատարվում կենսանմանարկող (բիոմիմետիկական) տեխնոլոգիաների, կամ ինքնավերականգնվող համակարգերի մշակման ուղղությամբ:

Այդ հետազոտությունների շրջանակներում դիտարկվում է այնպիսի հեռանկարային տեխնոլոգիա, ինչպիսին է ինքնավերականգնվող համակարգը, որի կիրառմամբ մեքենային հնարավորություն կընձեռվի «հոգալու» իր վիճակի մասին: Համակարգը կկարողանա մանրամասնորեն ներկայացնել խնդիրը և դրա լուծումը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ժամանակակից ավիացիան գտնվում է դինամիկ զարգացման փուլում, և ինտենսիվ աշխատանքներ են կատարվում թռչող սպարատների հաջորդ սերունդների ստեղծման ուղղությամբ՝ սկզբունքորեն նոր տեխնոլոգիական մշակումների ներդրմամբ:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով ՀԱՊԿ-ի անդամ, հնարավորություն ունի իրացնելու ամենամասշտաբային նախագծերը: Ներկայումս «Միավորված ավիաշինարարական կորպորացիա» (ՄԱԿ) ԲԲԸ-ն համագործակցում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի հետ ինքնաթիռաշինության բնագավառում մի շարք առաջնային տեխնոլոգիաների մշակման ոլորտում:

Մշակվող տեխնոլոգիաները հնարավորություն կտան ինքնաթիռաշինության բնագավառում էապես կրճատելու առանձին դետալների արտադրության ժամկետներն ու ծախսերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Авиастроение: летательные аппараты, двигатели, системы, технологии». Под ред. А. Г. Братухина. М., 2000.
2. С. Б. Багдасаров, А. Н. Чавушьян. Военный и военно-экономический потенциал стран Ближнего и Среднего Востока. Информационно-аналитический справочник. М., 1998.
3. «Беспилотные летательные аппараты военного назначения зарубежных стран». Аналитический обзор. Под ред. А. Т. Силкина, Ф. Чельцова. Тверь, 2002.
4. М. И. Бойкова, С. Д. Гаврилов, Н. А. Гавриличева. Авиация будущего. «Форсайт», 2009, №1 (9) (<http://ecsocman.hse.ru/data/119/769/1223/aviation.pdf>).
5. С. Григорьев. Су-30МКМ против P/A-18E/3. «Независимое военное обозрение», 7 сентября 2001 г.
6. В. Е. Ильин. Боевые самолеты зарубежных стран XXI века. М., 2000.

## ՀՀ ՁՈՒ-Ի ՀՕՊ-Ի ԵՎ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ



ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտի կազմավորման և գործունեության 20-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառում. կենտրոնում՝ ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյան

Երևան, 2013 թ. ապրիլի 6



Ս-125 զենիթահրթիռային համալիր



Ս-300 զենիթահրթիռային համալիր



«Կոր» զենիթահրթիռային համալիր



Ուսումնամարտական պարապմունք  
Օսա-ԱԿ զենիթահրթիռային համալիրով



Գրվազ Հայաստանի Հանրապետության 20-ամյակին նվիրված զորահանդեսից.  
ՍՈՒ-25 գրոհային ինքնաթիռներ



Ուսումնամարտական պարապմունք.  
ՄԻ-8 ռազմատրանսպորտային ուղղաթիռ

7. *В. Е. Ильин.* Многоцелевые истребители России. М., 2000.
8. *Д. Мантуров.* Новые вызовы и перспективы развития авиации, 26.03.2013 (<http://www.minpromtorg.gov.ru/press/news/113/>).
9. «Резолюция по результатам обсуждения программы РФ «Развитие авиационной промышленности»», 10 сентября 2012 г. (<http://d.minprom.gov.ru/ministry/fcp/14>).
10. *С. Сокут.* Дорога к пятому поколению. «Авиация и космонавтика: вчера, сегодня, завтра...». 2001, № 1.
11. *С. Сокут.* Истребитель пятого поколения поступит в войска через 8–10 лет. «Независимое военное обозрение», 2 февраля 2001 г.
12. *Р. Фарамазян, В. Борисов.* Военная экономика: этапы развития и контуры будущего. «Мировая экономика и международные отношения», 2001, № 9.

## ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ МИРОВОЙ АВИАЦИИ

*В. Н. АКОПЯН, доктор физико-математических наук, директор Института механики НАН РА, Г. Г. ШЕКЯН, доктор технических наук, профессор, ведущий научный сотрудник Института механики НАН РА*

### РЕЗЮМЕ

Авиастроение, как один из наиболее высокотехнологических секторов, сегодня претерпевает серьезные трансформации, обусловленные динамическим изменением технологического сектора. При этом характерной тенденцией современного этапа развития авиационных технологий является их миграция из военного сектора в гражданский и наоборот, что способствует развитию технологий «двойного назначения», хотя и военные разработки являются основным источником идей для создания новых технологий в гражданской авиации.

Перед авиастроением сегодня стоят две основные задачи: повысить высоту полетов (до 40 и более км), достичь гиперзвуковых скоростей (порядка 20–30 тысяч км/ч). Решение этих задач возможно только при использовании принципиально новых технологий и технологических решений, поскольку традиционные подходы исчерпали себя и дальнейшее их применение даст незначительные результаты при существенных дополнительных затратах.

Для авиации сегодня особую актуальность приобрели новые композитные материалы. Они позволяют перейти к принципиально новым концепциям летательных аппаратов. В настоящее время ОАО «Объединенная авиастроительная корпорация» совместно с институтами Национальной академии наук РА осуществляет сотрудничество по ряду приоритетных технологий в области авиации, охватывающих вопросы нанотехнологий, развития методов инновационного моделирования, производственных технологий и т. д.

THE PERSPECTIVES OF DEVELOPING THE WORLD AVIATION

*V. N. HAKOBYAN, Doctor of Physical and Mathematical Sciences, Director of the Institute of Mechanics, NAS, RA, H. G. SHEKYAN, Doctor of Technical Sciences, Professor, Leading Research Fellow at the Institute of Mechanics, NAS, RA*

SUMMARY

Today aircraft building industry, as one of the most high-tech sectors, is undergoing serious transformations, due to the dynamic change of technological sector. In this case, a characteristic tendency of the present stage of developing aircraft technologies is their outflow from the military sector to the civilian one, and vice versa. It contributes to the development of «dual-purpose» technology, although military developments are the major source of ideas for the creation of new technologies in the civil aviation.

Today aircraft building industry faces two major problems: to increase flight altitude (up to 40 km or more), and to reach hypersonic speeds (about 20–30 thousand km/h). The solution to these problems is possible only when using fundamentally new technologies and technological solutions, as far as traditional approaches have been exhausted and their further application will give small results at considerable additional costs.

New composite materials have become topical for aviation today. They make it possible to proceed to entirely new concepts of flying vehicles. At present JSC «United Aircraft Corporation» together with the Institutes of the RA National Academy of Sciences is cooperating on a number of priority technologies in the sphere of aviation, covering the issues of nanotechnology, development of innovative modeling techniques, production technologies, etc.



## ՀՀ ՌԱՀ-Ի ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՕՊ-Ի

### ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Մ. Ռ. ԻՍԱԽԱՆՅԱՆ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական, ՀՀ ՊՆ Ռազմասարդյունաբերական վարչության պետ, Ա. Կ. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ Ռազմատեխնիկական ծառայության ավագ սպա, Ա. Հ. ԵՍԱՅԱՆ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական, ՀՀ ՊՆ ռազմատեխնիկական ծառայության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ, Բ. Վ. ՈՍԿԱՆՅԱՆ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող, ՀՀ ՊՆ Ռազմասարդյունաբերական վարչության առաջատար մասնագետ*



Համաշխարհային փորձի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակում սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՄՌՏ) զարգացման գործում մեծ տեղ է հատկացվում ՀՕՊ-ի և ռազմական ավիացիայի բնագավառում գերճշգրիտ զենքի ու զինամթերքի մշակումներին:

Հաշվի առնելով ժամանակակից հակամարտություններում ՀՕՊ-ի ու ավիացիոն միջոցների կարևորությունը՝ առաջատար պետություններում դրանց նոր նմուշների մշակում և առկա ՄՌՏ արդիականացում կատարվում են առաջավոր տեխնոլոգիաների ներդրմամբ, համակարգված գիտահետազոտական աշխատանքների արդյունքներով, հատուկ մասնագիտացված գիտական կենտրոններում՝ ըստ տվյալ պետության համար բնորոշ ռազմատեխնիկական միջոցների մշակման և կատարելագործման յուրահատուկ մշակույթի:

Հայաստանի Հանրապետության ռազմասարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) գործունեությունը նպատակաուղղված է զինված ուժերի ապահովմանը համապատասխան որակով և քանակով սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և գույքով, զորքերի և զենքի կառավարման արդյունավետ համակարգերով ու նյութական միջոցներով՝ հավանական հակառակորդի ուժի և նրա հնարավորությունների հաշվառմամբ:

Ներկայիս տարածաշրջանային ռազմաքաղաքական իրավիճակը, այն է՝ ռուս-ադրբեջանական ռազմատնտեսական համագործակցության ակտիվացումը և Ադրբեջանի տարածքային նկրտումները, ՀՀ-ից պահանջում է վարել այնպիսի ռազմատեխնիկական և ռազմասարդյունաբերական քաղաքականություն, որը հնարավորություն տա ՀՀ ՁՌԻ-ն սպառազինելու ՀՕՊ-ի և ռազմական ավիացիայի արդիականացված պաշտպանական միջոցներով:

Այս տեսակետից ՌԱՀ-ի ընկերություններում կատարվել է ՀՕՊ-ի միջոցների ամբողջական համալիրների, առանձին հանգույցների, համալրող մասերի

(Պ-14, Պ-15, Պ-18, Պ-19 ռադիոտեղորոշումային կայանների և «Կրուգ», «Օսա-ԱԿ» զենիթահրթիռային համալիրների համար) ամբողջական կամ մասնակի արդիականացում: Ջորային փորձարկումներից հետո փոփոխակներն ընդունվել են զանգվածային արտադրության մեջ և տարիներ շարունակ ՀՕՊ-ի համապատասխան միջոցների կազմում հուսալիորեն մասնակցում են մարտական հերթապահության՝ անառիկ պահելով մեր պետության օդային սահմանները:

Արդիականացվել և պատրաստվել են շարժվող նշանակետերի ընտրման թվային համակարգեր, որոնք ընտրում են շարժվող նշանակետերը՝ ճնշելով տեղային մարմիններից առաջացող պասիվ խանգարումները, ինչպես նաև մոտակայքում աշխատող նմանատիպ ՌՏԿ-ների առաջացրած ոչ համաժամանակյա խանգարումները: Այդ համակարգերի միջոցով որոշվում են ազդանշանների տարբերությունները: Այն նաև շահագործման ընթացքում չի պահանջում սպասարկման որևէ աշխատանք:

«Կրուգ», «Օսա-ԱԿ», Ս-125 ՁՀՀ-ների համար արդիականացվել և պատրաստվել է հեռուստաօպտիկական սարք, որի նպատակն է բարոյապես մաշված հեռուստաօպտիկական դիտողի էկրանը փոխարինել ժամանակակից հեռուստաօպտիկաէլեկտրոնային սարքավորանքով:

«Կրուգ», «Օսա-ԱԿ», Ս-125 ՁՀՀ-ների համար արդիականացվել են ընդունիչ համակարգերի մուտքային ուժեղարարները, որոնք պատրաստված են կիսահաղորդչային ռադիոէլեկտրոնային տարրային հիմքի վրա: Ընդ որում, այդ ուժեղարարների աշխատանքից առաջացած աղմուկների մակարդակը բավական ցածր է: Արդիականացման շնորհիվ աճել է ուժեղարարների աշխատունակության ժամանակը, դյուրացվել է նշանակետերի արագ հայտնաբերումը շրջանաձև տեսածրի ցուցասարքին, ինչը հնարավորություն է տալիս ավելի կարճ ժամանակամիջոցում խոցելու նշանակետը:

Պ-18, Պ-15 և Պ-19 ՌՏԿ-ների ալեցիր-ալեհավաքների հորիզոնական հարթություններում ուղղորդվածության բնութագրերի ստուգման համար մշակվել և պատրաստվել են մետրային ու դեցիմետրային տիրույթներում ճառագայթման դյուրակիր ցցային զենեատորներ:

Պ-18 և Պ-14 ՌՏԿ-ների համար մշակվել և պատրաստվել են նոր կառուցվածքով բարձր հաճախականության հոսանքահանիչներ, ինչի շնորհիվ մեծացել է անխափան աշխատունակության ժամանակահատվածը: Այժմ նշված բոլոր կայանները համարված են բարձր հաճախականության հոսանքահանիչներով:

«Կրուգ» ՁՀՀ-ների համար մշակվել և պատրաստվել են՝

– հեռավորության չափման և ընդունման համակարգի, անկյունային ավտոմատիկայի, սխալի ազդանշանի առանձնացման, հաշվիչ-որոշիչ սարքերի աշխատունակության հսկման երկրորդային սնուցման նոր աղբյուրներ, որոնք գործում են ժամանակակից տարրային հիմքի վրա և շահագործման ընթացքում սպասարկման որևէ աշխատանք չեն պահանջում,

– աղմուկից պաշտպանող համակարգի համար հսկիչ ազդանշաններ ձևա-

վորող բլոկ, որը նախատեսված է արդիականացված շարժվող նշանակետերի ընտրման թվային բլոկի հետ համատեղ աշխատելու համար: Այն մեծացնում է բլոկի աշխատունակության ժամանակը և, քանի որ այդ բլոկը չունի կարգաբերող տարրեր, ավելի պարզ է դարձնում դրա շահագործումը:

«Օսա-ԱԿ» զենիթահրթիռային համալիրների համար արդիականացվել և պատրաստվել է ռադիոտեղորոշումային ազդանշանի մշակման թվային համակարգ, որի նախանշանակումն է համալիրի ռադիոտեղորոշումային ազդանշանի ուղու թվային մշակումը՝ ժամանակակից ռադիոէլեկտրոնային և համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ:

Մ-125 զենիթահրթիռային համալիրների համար կատարելագործվել է ալեհավաքային համակարգի և ալեհավաքային կետի կառուցվածքը, ինչի շնորհիվ մեծացել են կայանի տեղաշարժման հնարավորությունները, կրճատվել է բացազատման և ապածավալման տևողությունը, մեծացվել է հրթիռներով շարժունակությունը և դյուրացվել է մալուխային տնտեսության տեղափոխումը, հնարավոր են դարձել ինքնավար էլեկտրասնուցումը և հեռակառավարումը, արձակման կայանի տեղակայումը մեկ ընդհանուր համապարփակ համակարգում:

Պ-15 և Պ-19 դեցիմետրային տիրույթի Ռ-ՏԿ-ների համար կատարելագործվել և պատրաստվել են՝

– մուտքային կիսահաղորդչային էլեկտրաստատիկ ուժեղարար՝ օժտված արտաքին ազդակներից պաշտպանության համակարգով: ՌԻժեղարարը պատրաստված է որպես մեկ մոդուլ և փոխարինում է բարոյապես մաշված էլեկտրավակուումային սարքերը, ինչի շնորհիվ մեծացել է անխափան աշխատանքի ժամանակահատվածը,

– ալեհավաքային փոխարկիչ, որն ստեղծվել է ժամանակակից տարրային հիմքի վրա և փոխարինում է Պ-15 Ռ-ՏԿ-ի պարպիչն ու Պ-19 Ռ-ՏԿ-ի շրջապտտիչը, ինչը հնարավորություն է տալիս մեծացնելու Ռ-ՏԿ-ների աշխատանքի հուսալիությունը, արտաքին ակտիվ աղմուկներից պաշտպանվածությունը և նվազեցնում է սպասարկման ծախսերը,

– ժամանակակից տարրային հիմքի վրա մշակվել է անդրադարձված և ընդունված բարդ տիպի փուլամոդուլացված թվային ազդանշանների համահարաբերակցման ապարատածրագրային համալիր:

Պ-18 մետրային տիրույթի Ռ-ՏԿ-ների համար արդիականացվել և պատրաստվել է հեռակառավարման և վերահսկման կառավարման նոր կետ, որը համալիրներից ընդունում է, մշակում և արտապատկերում ռադիոտեղորոշումային տեղեկույթը:

Ռ-ԱՀ-ի բազային ընկերություններից մեկում մշակվել և պատրաստվել է նոր Պ-18 ռադիոտեղորոշումային կայան: Պ-18 Ռ-ՏԿ-ի մշակմամբ լուծվել են հետևյալ խնդիրները՝

ա) հին լամպային իմպուլսային հաղորդիչը փոխարինվել է նոր սարքով՝ կիսահաղորդչային տարրային հիմքի վրա,

բ) կիսահաղորդչային տարրային հիմքի վրա ստեղծվել է մետրային տիրույ-

թի փուլամանիպուլացիոն ազդանշանի ընդունման և ուժեղացման ռադիո-ընդունիչ,

զ) ստեղծվել է անդրադարձված ազդանշանի թվայնացված համահարաբերակցային մշակման համակարգ՝ նոր կիսահաղորդչային տարրային հիմքի կիրառմամբ ստեղծված բարդ փուլամանիպուլացիոն զոնդավորված ազդանշանի օգտագործմամբ,

դ) ստեղծվել է ալեհավաքի պտտման կառավարման նոր համակարգ՝ անհամաժամյա շարժիչի կիրառմամբ,

ե) դյուրացվել է կայանի շահագործումը, որը կատարվում է համակարգչային «մկնիկով» մոնիտորին\* համապատասխան հրամանի ընտրությամբ:

Կայանի նորոգման աշխատանքների վրա ծախսվող ժամանակի կրճատման նպատակով մշակվել և պատրաստվել են ՋՀՀ-ների և ՌՏԿ-ների բլոկների և հանգույցների շարժական և ոչ շարժական նորոգման ստենդներ: Կայանը հաջողությամբ անցել է համեմատական փորձարկումները:

Նշենք, որ ՌԱՀ-ի կազմակերպություններում յուրացվել են նաև ՀՕՊ-ի հետևյալ միջոցների, հանգույցների ու բլոկների արդիականացման, նորոգման և սպասարկման աշխատանքները՝

– ՉՍՈՒ 23-4, «Օսա-ԱԿ», «Կրուգ», «Ստրելա-10» ՋՀՀ-ներ,

– Պ-14, Պ-15, Պ-18, Պ-19, 35Ն6 ՌՏԿ-ներ,

– ՊՌՎ-13, ՊՌՎ-16 ռադիոբարձրաչափներ,

– 1Լ22 վրագետնյա ռադիոտեղորոշման համակարգի հաղորդիչներ,

– «Օսա-ԱԿ» ՋՀՀ հրթիռների ստուգման 9Վ242-1, ալեհավաքների ստուգման և ճշտադրման 9Վ21 կայաններ,

– Ս-300 ՋՀՀ-ի և 19Ժ6 ՌՏԿ խրամաբջիջներ:

Յուրացվել է նաև Պ-18 ՌՏԿ-ների ալեհավաքի շարժաբերի անհամաժամյա շարժիչով պտտման կառավարման արդիականացված համակարգի սերիական արտադրությունը:

Կոնստրուկտորական բաժիններում ստեղծվել են մեծ թվով ոչ ստանդարտ դետալների և հանգույցների կոնստրուկտորական փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս մեր ձեռնարկություններում պատրաստելու մինչ այդ ներկրվող համալրող մասեր:

Ստեղծվել է ՀՕՊ-ի թեթև գրահապատ մարտական զենիթահրետանային ինքնագնաց, որն ունի մեծ անցունակություն, տեղաշարժման արագություն, խուսավարման հնարավորություններ և խնայողաբար է ծախսում վառելիքը:

ՀՕՊ-ի համակարգի կառավարման արդյունավետության մեծացման նպատակով կատարվել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝

– ստեղծվել է ձայնային տեղեկույթի գրանցման բազմակապուղային ապարատածրագրային սարք, որը նախատեսված է մարտական հերթապահության ընթացքում կապի միջոցների օբյեկտիվ հսկման համար,

\* Մոնիտորին արտապատկերվում է օպերատորին անհրաժեշտ ամբողջ տեղեկույթը: Ընդ որում, օդային տարածության իրադրության վերաբերյալ ռադիոտեղեկույթը արտապատկերվում է գունավոր էկրանի վրա:

– ստեղծվել է ավիացիայի Ռ-ՏԿ-ներից տեղեկույթը ՀՕՊ-ի կառավարման համակարգ փոխանցելու, մշակելու և արտապատկերելու ապարատածրագրային միջոցների համալիր,

– ստեղծվել է ՀՕՊ-ի գորքերում նշանացուցման ավտոմատացված համակարգ, որն ապահովում է նշանացուցման տեղեկույթի ձևավորումը և ՀՕՊ-ի կրակային միջոցներին հաղորդումը հետևյալ գործընթացների ավտոմատացմամբ՝ ա. նշանացուցման և կառավարման տեղեկույթի ձևավորում,

բ. տեղեկույթի երաշխավորված փոխանցման՝ տեղեկույթի ընդունման-հաղորդման օպերատիվության և կառավարման քողարկման ապահովմամբ,

– ստեղծվել է ՀՕՊ-ի միջոցների և ուժերի ղեկավարման համար շարժական կառավարման կետ, որը բազմագործառնության կիրառման շարժական համալիր է,

– մշակվել է տեղանքի թվային քարտեզի հենքի վրա ՀՕՊ-ի տեղեկատու հաշվարկային խնդիրների ավտոմատ լուծման ծրագրային փաթեթ,

– մշակվել են ՀՕՊ-ի խմբավորումների օպտիմալ մարտակարգի որոշման ավտոմատացված ծրագրային փաթեթներ,

– մշակվել են ՀՕՊ-ի խմբավորումների գորավարժությունների անցկացման ծրագրային փաթեթներ, որոնց նպատակն է ՀՕՊ-ի գորքերի խմբավորումների ղեկավարման հիմնական խնդիրների լուծման ավտոմատացումը:

Նշված աշխատանքների հիման վրա մշակվում են ՀՕՊ-ի կառավարման ավտոմատացված համակարգի ստեղծման սկզբունքները և գնահատվում է դրանց հետագա իրացման նպատակահարմարությունը:

Ռ-ԱՀ-ի գործունեությունը նպատակաուղղված է նաև վարժասարքերի ստեղծմանը, որոնցով նախատեսվում է կահավորել զորամասերի և ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական դասարանները, ինչը կնպաստի՝

– զենիթային հրաձիգների ուսուցմանը, նրանց մասնագիտական պատրաստմանը (վերապատրաստմանը),

– տարբեր մարտական իրավիճակների մնանարկմանը և այդ պայմաններում հրաձիգների գործողությունների գնահատմանը,

– հրաձգության արդյունքների ստուգմանը, հրաձիգների մասնագիտական ունակությունների գնահատմանը:

ՀՀ ռազմատեխնիկական քաղաքականությունից բխում է, որ Ռ-ԱՀ-ի գործունեությունում մեծ տեղ հատկացվի.

1. ՀՕՊ-ի միջոցների սպասարկման շարժական մասնագիտացված արհեստանոցների (ՇՄԱ) ստեղծմանը, որոնց միջոցով արտագնա խմբերի կողմից կատարվում են ԶՀՀ-ների և Ռ-ՏԿ-ների գորային նորոգումներ, անհրաժեշտության դեպքում նաև որոշ անհրաժեշտ պահեստամասերի պատրաստում տեղում: ՇՄԱ-ի կիրառմամբ մեծանում է կատարվող աշխատանքների արդյունավետությունը,

2. ռադիոազդանշանների հաճախականությունների չափման շարժական լաբորատորիաների ստեղծմանը՝ հաղորդիչների և զեներատորների ելքային ռադիոազդանշանների բնութագրերի չափման համար,

3. ՀՕՊ-ի միջոցների հանգույցների և բլոկների արատորոշման ու նորոգման ստեղծման ստեղծմանը, որոնք հնարավորություն են տալիս լաբորատոր պայմաններում կատարելու մարտական մեքենաների հանգույցների ու բլոկների արատորոշում և ըստ այդմ կազմակերպելու նորոգման աշխատանքները:

Ռազմական ավիացիային վերաբերող մասով ՀՀ ռազմաարդյունաբերությունը մշակել և պատրաստել է՝

– ուղղաթիռների համար դիտման և հետախուզման օպտիկաէլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն է տալիս դիտելու տեղանքը, հայտնաբերելու և առանձնացնելու շարժվող ու անշարժ նշանակետերը, չափելու առանձնացված նշանակետերի անկյունային կողորդինատները և հեռավորությունը, հարողելու առանձնացված նշանակետերի պատկերները և կողորդինատները,

– ավիացիոն հրթիռների արձակման սարքեր՝ միջին հեռահարությամբ չկառավարվող ավիացիոն հրթիռի տեղադրման և ինքնաթիռի հեծանային բռնիչներից արձակման համար,

– չկառավարվող ավիացիոն հրթիռներ՝ համապատասխան զենիթային հրթիռների մեկնարկային շարժիչների կիրառմամբ: Այդ հրթիռները նախատեսված են հակառակորդի կենդանի ուժի, թռչող սարքերի, վրագետնյա զորակայանների, հրետանու, թեթև զրահապատ մեքենաների, երկաթգծային շարժակազմերի, հրթիռների մեկնարկային կայանների դիրքերին հարվածներ հասցնելու համար:

Արտերկրի որոշ փորձագետների կարծիքով՝ 2020 թ. ավիացիայի 9 տոկոսը լինելու է անօդաչու: Ժամանակակից անօդաչու թռչող սպարատները (ԱԹԱ) հանդերձավորված են նորագույն մմուշի շարժիչներով, կապի և ռադիոկառավարման համակարգերով, հետախուզական սարքերով և տեսատեղեկատվական համակարգով (այն տեղեկույթը ժամանակի ռեալ մասշտաբում հարողում է կառավարման վրագետնյա կետերին), բարձր ճշգրտությամբ զենքով (կառավարվող հրթիռներով և ռումբերով), «յուրային-հակառակորդ» որոշարկման սարքավորանքով, ռադիոէլեկտրոնային ճնշման, վերադարձի և վայրէջքի համակարգերով:

Առաջանցիկ մշակումներ են համարվում ծանր ԱԹԱ-ները, որոնք սպառազինված են կառավարվող հրթիռներով և ռումբերով, ինչպես նաև հակատանկային կառավարվող հրթիռներով:

Փոքր և միկրո- ԱԹԱ-ները պլանավորվում է կիրառել մարտական գործողությունների ընթացքում՝ հակառակորդի կառավարման համակարգերի ոչընչացման և հետախուզության նպատակով: Դրանցում որպես խոցման միջոց կարող են կիրառվել փոքր հեռահարությամբ և մերձագործությամբ զենիթային համալիրները:

Ներկայումս աշխատանքներ են կատարվում Հայաստանում մշակված ԱԹԱ-ները կատարելագործելու ուղղությամբ՝ ՀՕՊ-ի համակարգի կողմից լավ պաշտպանվող թիրախների բացահայտման և ոչնչացման հետ կապված թռիչքային առաջադրանքների արդյունավետության մեծացման նպատակով:

ՀՀ պաշտպանության նախարարության ռազմատեխնիկական քաղաքական

նության հիման վրա մշակված և ՀՀ Նախագահի կարգադրությամբ գործողության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգի» համաձայն՝ ՀՀ ՊՆ-ն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը»: Նշված միջոցառումների կատարումը և ՌԱՀ-ի զարգացման նկատմամբ իշխանությունների առանձնակի ուշադրությունը ռազմական արդյունաբերությանը հնարավորություն են տալիս դառնալու ՀՀ արդյունաբերության զարգացման խթանիչ միջոց: Այժմ հիմքեր են ստեղծվում ոչ միայն ՀՕՊ-ի միջոցները և ռազմական ավիացիան, այլև ՀՀ ՉՈՒ-ի մյուս զորատեսակները տեղական ձեռնարկություններում արտադրված սպառազինությամբ ապահովելու համար:

Այսպիսով՝ ՌԱՀ-ը անընդհատ զարգացող տեխնիկատնտեսական և նպատակային ծրագրային միջոցների համալիր է, որի վերակազմավորումը և կատարելագործումը անմիջականորեն կապված են պետության ընդունած ռազմատեխնիկական քաղաքականության հետ: ՀՀ ՀՕՊ-ի և ռազմական ավիացիայի բնագավառում արձանագրված հաջողությունները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ համաշխարհային փորձի հաշվառմամբ ՀՀ-ում իրականացվող ռազմատեխնիկական և ռազմարդյունաբերական քաղաքականությունը ՉՈՒ-ի մարտունակության մակարդակի բարձրացման գործուն մեխանիզմ է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4:
2. «Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգ», ՀՀ Նախագահի 2011 թ. դեկտեմբերի 29-ի հմ. ՆԿ-231-Ն կարգադրության հավելված (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73263>):
3. «Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիր», ՀՀ Կառավարության 2012 թ. ապրիլի 12-ի հմ. 443-Ն որոշման հավելված ([https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2012/04/12\\_0443.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2012/04/12_0443.pdf)):
4. *Р. А. Белоус, Ю. Г. Сизов, А. Л. Скоков.* Некоторые особенности ПВО в условиях массового применения противником комплексов БЛА и ВТО. «Военная мысль», 2013, № 6.
5. *А. В. Зайцев, И. И. Назарчук, О. О. Красавцев, Д. А. Кичулкин.* Особенности борьбы с тактическими беспилотными летательными аппаратами. «Военная мысль», 2013, № 5.
6. *В. А. Зотов.* Научно-исследовательский центр эксплуатации и ремонта авиационной техники в системе инженерно-авиационного обеспечения авиации Вооруженных сил. «Военная мысль», 2013, № 1.

## ВКЛАД ВПК РА В РАЗВИТИЕ ПВО И ВОЕННОЙ АВИАЦИИ

*Մ. Ր. ԻՍԱԽԱՆՅԱՆ, государственный советник 2-ого класса СГС, начальник Военно-промышленного управления МО РА, А. К. МИРЗАБЕКЯՆ, подполковник, старший офицер военно-технической службы МО РА, А. А. ԵՍԱՅԱՆ, советник 3-его класса СГС, главный специалист ВТС МО РА, Б. В. ВОՏԿԱՆՅԱՆ, ведущий служащий 2-ого класса СГС, ведущий специалист ВПУ МО РА*

### РЕЗЮМЕ

Военно-политическое руководство РА осуществляет военно-техническую и военно-промышленную политику, нацеленную на обеспечение собственными силами восстановления, ремонта и модернизации находящихся на вооружении ВС РА ВВТ. При этом учитывается передовой международный опыт.

В области модернизации средств ПВО военная промышленность РА освоила работы по проектированию и производству нового оборудования, кроме того, на предприятиях ВПК РА осуществляется полная или частичная модернизация систем ПВО, отдельных узлов и комплектующих, которые после войсковых испытаний были поставлены на массовое производство и в течение длительного времени безотказно работают в составе средств ПВО, осуществляющих боевое дежурство. На основе современной электронной базы осуществлены следующие работы: модернизированы и производятся цифровые системы селекции движущихся целей радиолокационных станций П-14, П-15, П-18, П-19 и ЗРК «Круг», «Оса-АК»; модернизированы и производятся телевизионно-оптические визиры и входные усилители приемных трактов ЗРК «Круг», «Оса-АК» и С-125; разработаны и выпускаются приборы для снятия диаграмм направленности антенн радиолокационных станций П-15, П-18 и П-19; разработаны и выпускаются высокочастотные токосъемники радиолокационных станций П-14 и П-18; запущена в серийное производство система привода вращения антенны с применением асинхронного двигателя для радиолокационной станции П-18 и т. д.

На соответствующих предприятиях ВПК РА ведутся работы по усовершенствованию разработанного в Армении БПЛА с целью повышения эффективности выполнения им полетных заданий.

В 2012 году Указом Президента РА была утверждена «Концепция реформ и развития системы военной промышленности Республики Армения». Осуществление этой программы создает объективные предпосылки для расширения номенклатуры отечественного производства комплектующих агрегатов, узлов и блоков для средств ПВО и военной авиации.



THE CONTRIBUTION OF THE RA MILITARY-INDUSTRIAL COMPLEX TO THE DEVELOPMENT OF AIR DEFENSE AND MILITARY AVIATION

*M. R. ISAKHANYAN, 2<sup>nd</sup> Class State Advisor of the Special Civil Service, Head of the Military-Industry Department, MOD, RA, A. K. MIRZABEKYAN, Lieutenant-Colonel, Senior Officer of the Military-Technical Service, MOD, RA, A. H. YESAYAN, 3<sup>rd</sup> Class Advisor of the Special Civil Service, Chief Specialist of the Military-Technical Service, MOD, RA, B. V. VOSKANYAN, 2<sup>nd</sup> Class Leading Officer of the Special Civil Service, Leading Specialist in the Military-Industry Department, MOD, RA*

SUMMARY

The military-political leadership of the Republic of Armenia pursues military-technical and military-industrial policy aimed at ensuring in-house restoration, maintenance and modernization of the Weapons and Military Equipment of the Armed Forces of the Republic of Armenia. In addition, the best international practices are considered.

The RA military industry in the field of upgrading the means of Air Defense has mastered the art of designing and producing new hardware, besides, complete or partial updating of the systems of Air Defense, separate and component units is implemented at the enterprises of the RA Military-Industrial Complex. These units were put on mass production after military testing and operate failproof over a long period of time in the structure of means of Air Defense, implementing combat duty. Based on the up-to-date electronic database the following work has been completed: digital systems of the selection of moving targets of radar stations P-14, P-15, P-18, P-19 and Anti-Aircraft Guided Missile Complex «Krug» («Circle»), «Osa-AK» («Wasp-AK») are modernized and being produced; television and optical viewfinders and input amplifiers of reception paths of Anti-Aircraft Guided Missile Complex «Krug» («Circle»), «Osa-AK» («Wasp-AK») and S-125 are modernized and being produced; devices for making diagrams of directivity of the aeriels of radar stations P-15, P-18 and P-19 are developed and being produced; high-frequency current collectors of radar stations P-14 and P-18 are designed and being produced; the system of rotary aerial drive using asynchronous engine for radar station P-18 is launched into mass production, etc.

Activities on upgrading the UAV, elaborated in Armenia, are implemented at relevant enterprises of the RA Military-Industrial Complex for increasing the efficiency of its flying mission performance.

The «Concept of reforms and development of the System of Military Industry of the Republic of Armenia» was approved by the Decree of the RA President in 2012. The implementation of this project creates objective premises for expanding the range of domestic production of component units, points and cells for the means of Air Defense and military aviation.

ՎՐԱԳԵՏՆՅԱ ԱՆՇԱՐԺ ՆՇԱՆԱԿԵՏԻ ՈՒՂԵԿՑՈՒՄԸ  
ԹՈՉՈՂ ԱՊԱՐԱՏՆԵՐԻՑ

Ա. Հ. ԲԱՂԻՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանիերյանցի անվան  
ռազմական ավիացիոն ինստիտուտի ավագ դասախոս, ՀՊՃՀ հայցորդ,  
Ս. Ա. ԲՈՉԱՐՅԱՆ, ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանիերյանցի անվան ռազմական  
ավիացիոն ինստիտուտի կուրսանք



Ժամանակակից թռչող ա-  
պարատների (ԹԱ) դիտման  
և նշանառման համակար-  
գերի (ԴՆՀ) առաջնային  
խնդիրներից է նշանակետի  
ավտոմատ ուղեկցումը, այ-  
սինքն՝ ԹԱ-ի նշանոցային  
գծի անընդհատ ուղղումը նշա-  
նակետի վրա, ինչն իրակա-  
նացվում է դրա օպտիկական,



ինֆրակարմիր կամ ռադիոտեղորոշումային պատկերի հիման վրա: Անշարժ  
վրագետնյա նշանակետերին հետևելու համար կիրառվում են լուծումներ նաև  
ուղեվարական տեղեկույթի հիման վրա: Նշված լուծումներն ունեն իրենց առա-  
վելությունները և թերությունները: Նշանակետի պատկերի հիման վրա ստեղծ-  
ված լուծումներն ունեն մեծ ճշգրտություն, բայց զգայուն են խանգարումների  
նկատմամբ և չեն ապահովում նշանակետի ուղեկցում ազդանշան չլինելու դեպ-  
քում: Ռիդեվարական տեղեկույթի հիման վրա ստեղծված լուծումները խանգա-  
րումակայուն են, քանի որ աշխատում են ինքնավար բանեկարգով և կախված  
չեն նշանակետից ստացվող ազդանշանի առկայությունից, բայց ճշգրտությամբ  
զիջում են պատկերի հիման վրա ստեղծված լուծումներին: Այդ պատճառով  
ժամանակակից ԹԱ-ի ԴՆՀ-ում նշված լուծումները հիմնականում համակցված  
են: Սույն աշխատությունում առաջարկվում է անշարժ վրագետնյա նշանակետի  
(ՎՆ) ուղեկցման համար մի լուծում ըստ ուղեվարական տեղեկույթի և այդ  
նշանակետի հայտնի կոորդինատների, որը կարող է լրացնել գոյություն ունեցող  
պատկերի հիման վրա տրված լուծումները և հարստացնել ԹԱ-ի ժամանակա-  
կից ԴՆՀ ավգորիթմական շտեմարանը:

Դիցուք տեղագրական քարտեզի վրա հաշվարկման «Կոորդինատային  
համակարգ 1942 թ.» (ԿՀ-42, *Система координат 1942 г.*) համակարգում տըր-  
ված են վրագետնյա նշանակետի կոորդինատները՝  $\lambda_{CK}$  տեղագրական եր-  
կայնությունը,  $\phi_{CK}$  լայնությունը և ծովի մակերևույթից  $h_{CK}$  բարձրությունը:  
Այդ տվյալները կարելի է մուտքագրել ԴՆՀ հիշող սարքի (ՀՍ) մեջ՝ թռիչքի  
ընթացքում նշանակետին ուղեկցելու համար: Զանի որ ԹԱ-ի ժամանակակից  
ուղեվարական համակարգերը հիմնականում աշխատում են WGS84 (*World*

Geodetic Sistem 1984) կոորդինատային համակարգում<sup>1</sup>, անհրաժեշտ է  $\lambda_{CK}$ ,  $\phi_{CK}$  և  $h_{CK}$  մեծությունները ձևափոխել նշված հաշվարկման համակարգի համապատասխան  $\lambda_T$ ,  $\phi_T$ ,  $h_T$  կոորդինատների<sup>2</sup>:  $\lambda_{CK}$ ,  $\phi_{CK}$ ,  $h_{CK}$  մեծությունների՝ WGS84 համակարգին համապատասխան ձևափոխման համար կիրառվում է հետևյալ համակարգը<sup>3</sup>.

$$\left\{ \begin{array}{l} a = (a_{WGS} + a_{CK})/2, \\ e^2 = (e_{WGS}^2 + e_{CK}^2)/2, \\ \delta a = a_{WGS} - a_{CK}, \\ \delta e^2 = e_{WGS}^2 - e_{CK}^2, \\ R = \frac{a}{\sqrt{1 - e^2 \sin^2 \phi_{CK}}}, \\ \Delta_0 = \delta z \cos \phi_{CK} - \sin \phi_{CK} (\delta x \cos \lambda_{CK} + \delta y \sin \lambda_{CK}), \\ \Delta_1 = R \cos \phi_{CK} \sin \phi_{CK}, \\ \Delta_2 = \delta z \sin \phi_{CK} - \cos \phi_{CK} (\delta x \cos \lambda_{CK} + \delta y \sin \lambda_{CK}), \\ \delta \lambda = \frac{\delta y \cos \lambda_{CK} - \delta x \sin \lambda_{CK}}{\cos \phi_{CK} (h_{CK} + R)}, \\ \delta \phi = \frac{a^2}{a^2 h_{CK} - R^3 (e^2 - 1)} \left( \Delta_0 + \frac{\Delta_1 e^2 \delta a}{a} + \frac{\Delta_1 \delta e^2 (a^2 + R^2)}{2a^2} \right), \\ \delta h = \Delta_2 + \frac{a \delta a}{R} - \frac{R \delta e^2 \sin^2 \phi_{CK}}{2}, \\ \lambda_T = \lambda_{CK} + \delta \lambda, \\ \phi_T = \phi_{CK} + \delta \phi, \\ h_T = h_{CK} + \delta h, \end{array} \right. \quad (1)$$

որտեղ՝  $a_{CK}=6378245$  մ,  $f_{CK}=1/298,3$ ,  $e_{CK}^2=2f_{CK}-f_{CK}^2$ ,  $a_{WGS}=6378137$  մ,  $f_{WGS}=1/298,257223563$ ,  $e_{WGS}^2=2f_{WGS}-f_{WGS}^2$ ,  $\delta_x=23,92$  մ,  $\delta_y=-141,27$  մ,  $\delta_z=-80,9$  մ:

Ստացված  $\lambda_T$ ,  $\phi_T$ ,  $h_T$  մեծությունների հիման վրա կարելի է գտնել ՎՆ  $X_T$ ,  $Y_T$ ,  $Z_T$  կոորդինատները հաշվարկման՝ Երկրի կենտրոնի հետ կապված ECEF (Earth-Centered Earth-Fixed) համակարգում<sup>4</sup>.

<sup>1</sup> Stu M. S. Grewal, L. R. Weill, A. P. Andrews. Global Positioning Systems, Inertial Navigation and Integration. New York, 2007, PP. 360–362:

<sup>2</sup> CK-42 և WGS84 ԿՀ-երի փոխադարձ կապի մասին տես «ГОСТ Р 51794-2008». М., 2009, сс. 11–14 ([http://www.complexdoc.ru/pdf/%D0%93%D0%9E%D0%A1%D0%A2%20%D0%A0%2051794-2008/gost\\_r\\_51794-2008.pdf](http://www.complexdoc.ru/pdf/%D0%93%D0%9E%D0%A1%D0%A2%20%D0%A0%2051794-2008/gost_r_51794-2008.pdf)); «Формулы пересчета координат из WGS-84 в CK-42 и обратно» (<http://gis-lab.info/qa/wgs84-sk42-wgs84-formula.html>):

<sup>3</sup> Stu «Формулы пересчета координат из WGS-84 в CK-42 и обратно»; «Department of Defense World Geodetic System 1984. Its Definition and Relationships with Local Geodetic Systems». National Imagery and Mapping Agency, 2000 (<http://earth-info.nga.mil/GandG/publications/tr8350.2/wgs84fin.pdf>):

<sup>4</sup> Stu G. Cai, B. M. Chen, T. H. Lee. Unmanned Rotorcraft Systems. New York, London,

$$\begin{cases} X_T = (R_T + h_T) \cos \phi_T \cos \lambda_T, \\ Y_T = (R_T + h_T) \cos \phi_T \sin \lambda_T, \\ Z_T = (R_T (1 - e_{WGS}^2) + h_T) \sin \phi_T, \end{cases} \quad (2)$$

որտեղ  $R_T$  մեծությունը որոշվում է հետևյալ արտահայտությունից<sup>5</sup>.

$$R_T = \frac{a_{WGS}}{\sqrt{1 - e_{WGS}^2 \sin^2 \phi_T}}: \quad (3)$$

Թռիչքի ընթացքում ուղեվարական համակարգը հաշվում է ԹԱ-ի  $\lambda$  երկայնությունը,  $\phi$  լայնությունը և ծովի մակերևույթից  $h$  բարձրությունը WGS84 համաշխարհային երկրաբաշխական համակարգում: Այդ մեծությունները ձևափոխվում են ECEF հաշվարկման համակարգի համապատասխան կոորդինատների հետևյալ արտահայտության միջոցով.

$$\begin{cases} X_0 = (R_{WGS} + h) \cos \phi \cos \lambda, \\ Y_0 = (R_{WGS} + h) \cos \phi \sin \lambda, \\ Z_0 = (R_{WGS} (1 - e_{WGS}^2) + h) \sin \phi, \end{cases} \quad (4)$$

որտեղ  $R_{WGS}$  մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևից<sup>6</sup>.

$$R_{WGS} = \frac{a_{WGS}}{\sqrt{1 - e_{WGS}^2 \sin^2 \phi}}: \quad (5)$$

Կոորդինատների տարբերությունների միջոցով կարելի է գտնել ԹԱ-ից նշանակետի հեռավորության  $\bar{D}$  վեկտորի մեծությունը և այդ վեկտորի  $D_x$ ,  $D_y$ ,  $D_z$  բաղադրիչները հաշվարկման ECEF համակարգում.

$$D = \sqrt{(X_T - X_0)^2 + (Y_T - Y_0)^2 + (Z_T - Z_0)^2}, \quad (6)$$

$$\begin{bmatrix} D_x \\ D_y \\ D_z \end{bmatrix} = \begin{bmatrix} X_T \\ Y_T \\ Z_T \end{bmatrix} - \begin{bmatrix} X_0 \\ Y_0 \\ Z_0 \end{bmatrix}:$$

Հաշվարկման ECEF համակարգից տեղային (ԹԱ-ի հետ կապված) հորիզոնացված NED (*North-East-Down*) համակարգի կոորդինատների ձևափոխության համար կիրառվում է  $C$  մատրիցը, որն արտահայտվում է ԹԱ-ի  $\lambda$  երկայնության և  $\phi$  լայնության միջոցով<sup>7</sup>.

2011, PP. 23–34; J. Zhu. Conversion of Earth-Centered Earth-Fixed Coordinates to Geodetic Coordinates. «IEEE Transactions on Aerospace and Electronic Systems», 1994, Vol. 30, Issue 3, PP. 957–962:

<sup>5</sup> Տես Գ. Քեյ, Բ. Մ. Չեմ, Տ. Հ. Լի, Նշ. աշխ., էջ 23–24:

<sup>6</sup> Տես նույն տեղում:

<sup>7</sup> Տես նույն տեղում:


$$C = \begin{bmatrix} -\sin \phi \cos \lambda & -\sin \phi \sin \lambda & \cos \phi \\ -\sin \lambda & \cos \lambda & 0 \\ -\cos \phi \cos \lambda & -\cos \phi \sin \lambda & -\sin \phi \end{bmatrix}; \quad (7)$$

Հետևաբար՝ հեռավորության վեկտորի բաղադրիչները  $NED$  ԿՀ-ում կարելի է գտնել հետևյալ եղանակով՝

$$\begin{bmatrix} D_{X_0} \\ D_{Y_0} \\ D_{Z_0} \end{bmatrix} = C \begin{bmatrix} X_T - X_0 \\ Y_T - Y_0 \\ Z_T - Z_0 \end{bmatrix}; \quad (8)$$

$NED (O)$  ԿՀ-ի նկատմամբ հեռավորության վեկտորի հիպերկոմպլեքսային արտապատկերումը որոշվում է  $D_0 = 0 + D_{X_0}i + D_{Y_0}j + D_{Z_0}k$  արտահայտությամբ: Թռիչքի ընթացքում ուղեվարական համակարգի միջոցով չափվում է տեղային հորիզոնացված  $NED$  կորդինատային համակարգի նկատմամբ ԹԱ-ի կողմնորոշման  $A = a_0 + a_1i + a_2j + a_3k$ . քվատերնիոնը (նկ. 1):

Եթե  $A$  քվատերնիոնը հնարավոր չէ ստանալ անմիջականորեն ուղեվարական համակարգից, ապա այն կարելի է որոշել ԹԱ-ի կողմնորոշման  $\psi$  ուղղույթի,  $\vartheta$  երկայնաճոճման և  $\gamma$  կողաթեքման անկյունների միջոցով<sup>8</sup>:



Նկ. 1. ԹԱ-ի կողմնորոշումը  $NED$  կորդինատային համակարգում

$$\begin{cases} a_0 = \cos \frac{\psi}{2} \cos \frac{\vartheta}{2} \cos \frac{\gamma}{2} + \sin \frac{\psi}{2} \sin \frac{\vartheta}{2} \sin \frac{\gamma}{2}, \\ a_1 = \cos \frac{\psi}{2} \cos \frac{\vartheta}{2} \sin \frac{\gamma}{2} - \sin \frac{\psi}{2} \sin \frac{\vartheta}{2} \cos \frac{\gamma}{2}, \\ a_2 = \cos \frac{\psi}{2} \sin \frac{\vartheta}{2} \cos \frac{\gamma}{2} + \sin \frac{\psi}{2} \cos \frac{\vartheta}{2} \sin \frac{\gamma}{2}, \\ a_3 = -\cos \frac{\psi}{2} \sin \frac{\vartheta}{2} \sin \frac{\gamma}{2} + \sin \frac{\psi}{2} \cos \frac{\vartheta}{2} \cos \frac{\gamma}{2}: \end{cases}$$

Հիպերկոմպլեքսային  $D_0$  արտապատկերման և  $A$  քվատերնիոնի միջոցով կարելի է ԹԱ-ի հետ կապված  $OX_1Y_1Z_1 (I)$  կորդինատային համակարգի նկատմամբ հեռավորության վեկտորի արտապատկերումը որոշել հետևյալ քանաձևով.

$$D_I = \bar{A} \circ D_0 \circ A,$$


որտեղ  $\bar{A} = a_0 - a_1i - a_2j - a_3k$ -ը  $A$  քվատերնիոնի համալուծ քվատերնիոնն է:

<sup>8</sup> Stu J. B. Kuipers. Quaternions and Rotation Sequences: A primer with applications to orbits, aerospace and virtual reality. Princeton, 1999, PP. 166–167:

Վերը նշված ձևափոխությամբ ստացվում են հեռավորության վեկտորի բաղադրիչները ( $I$ ) կորորդինատային համակարգում.

$$\begin{cases} D_{X_1} = D_{X_0} (1 - 2a_2^2 - 2a_3^2) + 2D_{Y_0} (a_1 a_2 + a_0 a_3) + 2D_{Z_0} (a_1 a_3 - a_0 a_2), \\ D_{Y_1} = 2D_{X_0} (a_1 a_2 - a_0 a_3) + D_{Y_0} (1 - 2a_1^2 - 2a_3^2) + 2D_{Z_0} (a_0 a_1 + a_2 a_3), \\ D_{Z_1} = 2D_{X_0} (a_0 a_2 + a_1 a_3) + 2D_{Y_0} (a_2 a_3 - a_0 a_1) + D_{Z_0} (1 - 2a_1^2 - 2a_2^2): \end{cases} \quad (9)$$

Նշանակետի ուղեկցման համար անհրաժեշտ է ԳՆՀ նշանոցային գիծը անընդհատ ուղղել ԹԱ-ից վրագետնյա նշանակետի հեռավորության վեկտորի ուղղությամբ: Հեռավորության  $\vec{D}$  վեկտորի հետ կապված ճառագայթային  $OX_L Y_L Z_L$  ( $L$ ) ԿՀ-ն որոշվում է ԹԱ-ի հետ կապված  $OX_1 Y_1 Z_1$  ( $I$ ) կորորդինատային համակարգի երկու պտույտով (նկ. 2). առաջինը՝  $\varphi_Z$  անկյունով  $OZ_1$  առանցքի նկատմամբ, երկրորդը՝  $\varphi_Y$  անկյունով առաջին պտույտով ստացված  $OY_L$  առանցքի նկատմամբ:




Նկ. 2. Հեռավորության վեկտորի հետ կապված ճառագայթային կորորդինատային համակարգը

Վրագետնյա նշանակետի ուղեկցման համար անհրաժեշտ անկյունային  $\varphi_Z$ ,  $\varphi_Y$  կորորդինատները որոշվում են  $D_{X_1}$ ,  $D_{Y_1}$ ,  $D_{Z_1}$ , և  $D$  մեծությունների միջոցով՝

$$\begin{cases} \varphi_Y = -\arcsin\left(\frac{D_{Z_1}}{D}\right), \quad \varphi_Y \in (-\pi; \pi/2), \\ \varphi_Z = \arctg\left(\frac{D_{Y_1}}{D_{X_1}}\right), \quad \varphi_Z \in (-\pi; \pi). \end{cases} \quad (10)$$

$\varphi_Z$ ,  $\varphi_Y$  անկյունները միարժեքորեն որոշվում են նշված (10) արտահայտություններով, բացի  $\varphi_Y = -\pi/2$  դեպքից, որի ժամանակ ԹԱ-ի ԳՆՀ-ում կիրառվում են էլեկտրամեխանիկական հավելյալ միջոցներ:

Այսպիսով՝ (10) արտահայտությամբ ստացվող  $\varphi_Z$ ,  $\varphi_Y$  անկյունների միջոցով նշանոցային գիծը ավտոմատ կերպով անընդհատ ուղղվում է վրագետնյա նշանակետի վրա, այսինքն՝ կատարվում է նրա ուղեկցում:



Նկ. 3. ԿՀ-42 համակարգում վրագետնյա անշարժ նշանակետի հայտնի կոորդինատներով ԹԱ-ից նրա ուղեկցման խնդրի լուծման սխեման

Առաջարկվող լուծման ճշգրտության գնահատման համար մոդելավորման միջոցով կատարվել է  $\lambda_T = 49^\circ 51' 20,34''$ ,  $\phi_T = 40^\circ 24' 26,49''$ ,  $h_T = 31$  մ կոորդինատներով վրագետնյա օբյեկտի ուղեկցման 300 փորձ՝ չափիչ սարքերի սխալների հաշվառմամբ<sup>9</sup>: Մոդելավորման ժամանակ որպես թռիչքի նախնական պարամետրներ ընդունվել են հետևյալ արժեքները՝  $\lambda = 49^\circ 21' 00''$ ,  $\phi = 40^\circ 00' 00''$ ,  $h = 5000$  մ և որպես հաստատուն մեծություններ՝ թռիչքի գծային ու անկյունային արագությունների  $V_{1XL} = 140$ ,  $V_{1YL} = 10$ ,  $V_{1ZL} = 15$  մ/վրկ և  $\omega_{1X1} = 0$ ,  $\omega_{1Y1} = 0,002$ ,  $\omega_{1Z1} = 0$  ռադ/վրկ բաղադրիչները:

Նշված վրագետնյա նշանակետի՝ քսան վայրկյան տևողությամբ ուղեկցման մոդելավորման արդյունքները՝  $\phi_Z, \phi_Y$  անկյունների միջին քառակուսային շեղումներով (ՄՔՇ) բերված են աղյուսակում:

Մոդելավորման արդյունքները ցույց են տալիս, որ վրագետնյա նշանակետի ուղեկցման սխալի արժեքը հաստատուն է ուղեկցման ամբողջ ընթացքում, և այդ սխալը բնութագրող  $\phi_Z, \phi_Y$  անկյունների միջին քառակուսային շեղումները կազմում են մի քանի անկյունային բույս (չեն գերազանցում 6-ը):

<sup>9</sup> Չափիչ սարքերի սխալների բնութագրերի մասին տես *J. Fraden. Handbook of Modern Sensors: Physics, Designs, and Applications. New York, 2004, PP. 289–322; B. A. Боднер. Системы управления летательными аппаратами. М., 1973, сс. 10–13, 60–65:*

$\varphi_z, \varphi_y$  ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՄՔՇ ԿԱԽՈՒՄԸ  $t$  ԺԱՄԱՆԱԿԻՑ

$t, \text{վ}$	$\sigma(\varphi_z)'$	$\sigma(\varphi_y)'$	$t, \text{վ}$	$\sigma(\varphi_z)'$	$\sigma(\varphi_y)'$
0	5,453160	4,826191	11	5,332080	4,675579
1	5,104419	5,122291	12	5,222760	5,095878
2	5,158399	5,013991	13	5,488254	5,207960
3	5,218164	5,127379	14	5,224762	4,666268
4	5,305154	5,400604	15	5,228852	5,148393
5	5,137766	4,781874	16	5,266160	5,097684
6	5,030193	5,093983	17	5,409030	4,671362
7	5,297449	4,827818	18	5,280588	5,179323
8	5,340870	5,035426	19	5,563478	5,229647
9	5,364047	5,138703	20	5,149706	5,194847
10	5,419584	4,558854			

Այսպիսով՝ մեծ քանակությամբ փորձերի մոդելավորումը MATLAB (*Matrix Laboratory*) ծրագրային միջավայրում հաստատում է առաջարկվող լուծման բարձր ճշգրտությունը:

Առաջարկվող լուծումը կարող է գործնական կիրառում ստանալ ժամանակակից թռչող ապարատների ԴՆՀ-ում՝ որպես անշարժ վրագետնյա նշանակետի ուղեկցման առանձին ալգորիթ, և նշանակետի պատկերի հիման վրա ստացված լուծումների հետ զուգադրման միջոցով բարձրացնել վերջիններիս հուսալիության աստիճանը:

### СОПРОВОЖДЕНИЕ НАЗЕМНОЙ НЕПОДВИЖНОЙ ЦЕЛИ С ЛЕТАТЕЛЬНЫХ АППАРАТОВ

*А. А. БАГИЯН, капитан, старший преподаватель Военного авиационного института им. маршала А. Ханфeryнца МО РА, соискатель ГИУА, С. А. КОЧАРЯН, курсант Военного авиационного института им. маршала А. Ханфeryнца МО РА*

#### РЕЗЮМЕ

Одной из основных задач обзорно-прицельных систем современных летательных аппаратов является автоматическое сопровождение целей, которое выполняется на основе их оптического, инфракрасного или радиолокационного изображения. Для сопровождения неподвижных наземных целей применяются решения на основе навигационной информации. Указанные решения имеют свои преимущества и недостатки. Так, решения, реализованные на основе изображения цели, обладают высокой точностью, но чувствительны к помехам и не выполняют сопровождения при отсутствии сигнала от нее. Решения, основанные на навигационной информации, помехоустойчивы, так как работают в автономном режиме и не зависят от



сигнала цели, но обладают меньшей точностью. Поэтому в обзорно-прицельных системах современных летательных аппаратов указанные решения обычно применяются комплексно.

В данной работе предлагается решение задачи сопровождения неподвижной наземной цели, основанное на навигационной информации и ее известных координатах. Эффективность предложенного решения подтверждена моделированием большого числа опытов в среде MATLAB.

Предлагаемое решение может применяться в комплексе с решениями, реализованными на основе изображения цели, и дополнит алгоритмическую базу обзорно-прицельных систем современных летательных аппаратов.

## GROUND STATIONARY TARGET TRACKING BY AIRCRAFT

*A. H. BAGHIYAN, Captain, Senior Lecturer, Marshal A. Khanperyants Military Aviation Institute, MOD, RA, Applicant, SEUA, S. A. KOCHARYAN, Cadet, Marshal A. Khanperyants Military Aviation Institute, MOD, RA*

### SUMMARY

One of the major tasks of the sighting and surveillance systems of up-to-date aircraft is automatic tracking of targets, which is implemented based on their optical, infrared or radar images. The solutions based on the navigation data are applied for tracking the stationary ground targets. The mentioned solutions have their advantages and disadvantages. Thus, the solutions implemented on the basis of target imaging have high accuracy, but they are sensitive to interference and do not track the target in case of signal failure. The solutions based on the navigation data are anti-interference, as they operate in the autonomous mode and do not depend on the target signal but are less accurate. Therefore, integrated application of these solutions is usual in the sighting and surveillance systems of up-to-date aircraft.

This paper offers a solution to the problem of tracking the stationary ground target, which is based on the navigation data and its given coordinates. The efficiency of the proposed solution is proved by modeling a great number of experiments in MATLAB.

The proposed solution can be applied in a complex with the solutions implemented on the basis of the target imaging, and will complement the algorithmic base of the sighting and surveillance systems of up-to-date aircraft.

«ԷՐԵՔՈՒՆԻ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ  
ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅՈՒՄԸ՝  
ԸՍՏ ԹՈՒՉՔՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ

Մ. Վ. ԵՓՐԵՄՅԱՆ, կապիտան, օդերևութաբանական ծառայության պետ,  
ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության  
ամբիոնի հայցորդ


Ամպամածությունը այն կարևոր գործոններից է, որը անմիջականորեն ազդում է ավիացիայի գործունեության վրա, հատկապես՝ Հայաստանի լեռնային բարդ պայմաններում և ցածր բարձրություններով կատարվող թռիչքների ժամանակ:

Ամպամածության հետ կապված են ավիացիայի համար վտանգավոր այնպիսի մթնոլորտային երևույթներ, ինչպիսիք են՝ ուժեղ վերընթաց ու վարընթաց հոսանքները, հորիզոնական տեսանելիության խիստ վատացումը, մինչև անգամ՝ վերացումը, քամիների հանկարծական պոռթկումները, թռչող տեխնիկայի թափահարումը, էլեկտրակահագումը, սառցակալումը և այլն<sup>1</sup>:

Ավիացիայի համար հատկապես վտանգավոր են ուղղաձիգ զարգացման կույտավոր (Cu), հզոր կույտավոր (TCu) և կույտաանձրևային (Cb) ամպերը՝ իրենց ուժեղ վերընթաց ու վարընթաց մրրկային (տուրբուլենտ) հոսանքներով, ինչպես նաև զարգացած կայծակ-ամպրոպային օջախներով<sup>2</sup>:

Համաձայն ավիացիայում (հատկապես՝ ռազմական ավիացիայում) ընդունված ստանդարտների՝ կախված օդերևութաբանական պայմաններից, մասնագետներն առանձնացնում են թռիչքների բարդության հետևյալ աստիճանները<sup>3</sup>.

1. «Աչ թռիչքային եղանակային պայմաններ» (եղանակային պայմանների գրանցման մատյանում ներկվում են կարմիր գույնով), երբ օդանավակայանի շրջանում\* դիտվում են ավիացիայի համար վտանգավոր մի շարք երևույթներ (օրինակ՝ կույտաանձրևային ամպեր և դրանցով պայմանավորված՝ կայծակ-ամպրոպ, հորդառատ տեղումներ և կարկուտ, մառախուղ, ցածր ամպամածություն, ուժեղ քամիներ, փոթորիկներ, օյի՝ ավիացիայի համար էքստրեմալ



<sup>1</sup> Տես Օ. Գ. Богодкин. Авиационная метеорология. Ленинград, 2005, сс. 146–147:

<sup>2</sup> Տես Մ. Վ. Եփրեմյան, «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ամպամածության դաշտի ազդեցությունը ռազմական ավիացիայի թռիչքների վրա: «ՀԲ», 2010, հմ. 1:

<sup>3</sup> Տես նույն տեղում, էջ 134–139:


\* Ավիացիայում «օդանավակայանի շրջանը» օդանավակայանի մերձակա օդային տարածքն է՝ 10–15 կմ շառավղով, «ցածր ամպամածությունը» գետնի մակերևույթից մինչև 200–300 մետր բարձրության վրա տարածվող ամպամածության ստորին սահմանն է, «հորիզոնական սահմանափակ տեսանելիությունը»՝ մինչև 2–2,5 կմ տեսանելիությունը (մշուշ): Ավելի բարդ ու վտանգավոր օդերևութաբանական երևույթ է մառախուղը, որի դեպքում հորիզոնական տեսանելիությունը չի գերազանցում 1 կմ-ը:

ջերմաստիճաններ ( $-30^{\circ}\text{C}$ -ից մինչև  $-35^{\circ}\text{C}$  և ավելի ցածր,  $+30^{\circ}\text{C}$ -ից մինչև  $+35^{\circ}\text{C}$  և ավելի բարձր), օդի մեծ հարաբերական խոնավություն ( $93-95\%$  և ավելի), հրաբխի ժայթքում և այլն), որոնց դեպքում թռիչքները արգելվում են:

2. «**Բարդ օդերևութաբանական պայմաններ**» (ԲՕՊ) (եղանակային պայմանների զրանցման մատյաններում ներկվում են կապույտ գույնով), երբ օդանավակայանի շրջանում դիտվում են ցածր ամպամածություն և հորիզոնական սահմանափակ տեսանելիություն, որոնց ժամանակ թռիչքները սահմանափակվում են և առանձին դեպքերում՝ դադարեցվում:

3. «**Թռիչքների համար այսպես կոչված «եղանակի նվազագույններ»**» (ներկվում են դեղին գույնով), երբ ցածր ամպամածության և հորիզոնական սահմանափակ տեսանելիության արժեքները գտնվում են թույլատրելի նվազագույն սահմանային տիրույթում, որոնց դեպքում կարող են կատարվել անվտանգ թռիչքներ: Եղանակի նվազագույն պայմանները նման են ԲՕՊ-ին, միայն այն տարբերությամբ, որ ունեն ցածր ամպամածության և հորիզոնական սահմանափակ տեսանելիության համար սահմանված հստակ արժեքներ:

Առանձնացվում են «եղանակի նվազագույնների» երեք հիմնական դասեր (օդանավակայանի, թռչող տեխնիկայի և օդաչու-հրամանատարի նվազագույններ), որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ըստ թռիչքի բնութագրի (տես *գծապատկեր 1*):



Գծապատկեր 1. Ավիացիայի համար եղանակի նվազագույն պայմանները

4. «**Թռիչքների համար պարզ օդերևութաբանական պայմաններ**» (ՊՕՊ) (եղանակի զրանցման մատյաններում ներկվում են կանաչ գույնով), որոնք բարենպաստ են թռիչքների համար, և որոնց դեպքում չեն դիտվում ավիացիայի համար օդերևութաբանական վտանգավոր երևույթներ, չկան կույտաանձրևային և ստորին սահմանի 1500 մետր ու ավելի բարձրությամբ ամպեր, հորիզոնական տեսանելիությունը սահմանված նվազագույնից ավելի է:

Ըստ թռիչքների բարդության աստիճանի որոշման վերոհիշյալ չորս հիմնական կետերի՝ կատարվել է «Էրեբունի» օդանավակայանի շրջանի համար եղանակային պայմանների ընդհանուր շրջանացում<sup>5</sup>: ՌԽումնասիրվել են «Էրեբունի» օդանավակայանի շրջանում վերջին 7 տարիներին (2006–2012 թթ.) դիտված օրական ուղղաձիգ, այսինքն՝ ամպամածության ստորին սահմանների բարձրությունների, հորիզոնական տեսանելիության, ինչպես նաև ավիացիայի համար եղանակի վտանգավոր երևույթների (կայծակ-ամպրոպ, ուժեղ քամիներ, քամիների հանկարծական պոռթկում, հորդառատ տեղումներ, կարկուտ և այլն) դիտարկումների փաստացի տվյալները: Ընդ որում, օրը բաժանվել է ցերեկային ու գիշերային ժամերի, քանի որ ավիացիայում ցերեկային և գիշերային ժամերին կատարված թռիչքներն ունեն առանձին բնութագրեր՝ կախված դրանց բարդության աստիճանից<sup>6</sup>: Օրվա ցերեկային և գիշերային ժամանակահատվածների առանձնացման համար օգտագործվել են յուրաքանչյուր օրվա արևածագի և մայրամուտի ժամերը:

Օդանավակայանի շրջանում ապրիլից մինչև հոկտեմբեր ամիսների համար ցերեկային ժամեր են համարվում առավոտյան 07<sup>00</sup>-ից մինչև երեկոյան 20<sup>00</sup>-ն, նոյեմբեր–մարտ ամիսների համար՝ առավոտյան 08<sup>00</sup>-ից մինչև 19<sup>00</sup>-ն:

Այսպիսով՝ օդանավակայանի շրջանում կատարված եղանակային պայմանների ընդհանուր շրջանացման վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ գերակշռում են պարզ օդերևութաբանական պայմանները: ՌԽումնասիրված ժամանակահատվածի համար ՊՕՊ-ով եղանակների տարեկան միջինը կազմում է 250–280 օր, կամ 68–75 %, հատկապես՝ տարվա տաք ժամանակահատվածում (ապրիլ–հոկտեմբեր): Ոչ թռիչքային եղանակային պայմանները տևում են միջին հաշվով տարեկան 45–65 օր, կամ 12–17 %, և հիմնականում դիտվում են տարվա ցուրտ ժամանակահատվածում (նոյեմբեր–մարտ)՝ ցածր ամպամածության, հորիզոնական սահմանափակ տեսանելիության և մառախուղների տեսքով, ինչպես նաև տարվա տաք ժամանակահատվածում՝ կեսօրից հետո դիտվող կայծակ-ամպրոպի և լեռնահովտային քամիների տեսքով, հաճախ՝ միջին 15 մ/վրկ և ավելի արագությամբ: ԲՕՊ-ով եղանակները կազմում են 23–40 օր, կամ 6–10 %, եղանակային այս պայմանները առանձին օրերի կամ օրվա կեսի համար դիտվում են ամբողջ տարվա ընթացքում՝ ցուրտ ժամանակահատվածում ցածր ամպամածության և սահմանափակ հորիզոնական տեսանելիության և մառախուղների, տարվա տաք ժամանակահատվածում՝ ավիացիայի համար մի շարք վտանգավոր օդերևութաբանական երևույթների տեսքով: Եղանակի նվազագույն պայմաններով թռիչքային օրեր են գրանցվել զլխավորապես նոյեմբեր–փետրվար ամիսներին: Դրանք կազմում են 11–18 օր, կամ 3–5 %: Թեև ընդհանուր առմամբ հազվադեպ, այդուհանդերձ 2010 և 2012 թթ. նվազագույն պայմաններով թռիչքային օրեր են գրանցվել նաև հոկտեմբեր, մարտ և ապրիլ ամիսներին:

<sup>5</sup> Տես «Руководство по практическим работам метеорологических подразделений авиации Вооруженных сил СССР». М., 1981, сс. 292–297:

<sup>6</sup> Տես «Руководство по практическим работам метеоподразделений...», 1992, с. 82:

РАЙОНИРОВАНИЕ МЕТЕОРОЛОГИЧЕСКИХ УСЛОВИЙ  
В РАЙОНЕ АЭРОДРОМА «ЭРЕБУНИ»  
ПО СТЕПЕНИ СЛОЖНОСТИ ПОЛЕТОВ

*М. В. ЕПРЕМЯН, капитан, начальник Метеорологической службы,  
соискатель кафедры физической географии и гидрометеорологии ЕГУ*

РЕЗЮМЕ

Рассмотрено районирование метеорологических условий в районе аэродрома «Эребуни» (по фактическим данным за 2006–2012 гг.) по методике определения степени сложности полетов.

Исследования показали, что в районе аэродрома в общем наблюдаются простые метеоусловия (в среднем за год 250–280 суток, или 68–75 %), которые преобладают в теплый период года (апрель–октябрь). Нелетная погода в среднем за год составляет 46–65 суток (12–17 %), которые наблюдаются преимущественно с ноября по март. Сложные метеоусловия за год составляют в среднем 23–40 суток (6–10 %), а минимумы погоды – 11–18 суток (3–5 %), которые в основном наблюдаются в период с ноября по февраль.

Результаты анализа исследовательских данных позволяют с точки зрения надежности и безопасности полетов более эффективно организовывать полеты на низких высотах и в сложных горных условиях Армении.

THE ZONING OF METEOROLOGICAL CONDITIONS  
IN THE AREA OF «EREBUNI» AIRDROME BY THE DEGREE  
OF FLIGHTS COMPLEXITY

*M. V. YEPREMYAN, Captain, Head of Meteorological Service, Applicant at the Chair  
of Physical Geography and Hydrometeorology, YSU*

SUMMARY

The zoning of meteorological conditions in the area of «Erebuni» airdrome (based on the actual data for 2006–2012) by the method of determining the degree of complexity of flights has been examined.

The studies have shown that common weather conditions (250–280 days on average per year, or 68–75 %) are generally observed in the airdrome area. They prevail in warm season (April–October). Non-flying weather on average makes 46–65 days per year (12–17 %), which occur mainly from November up to March. Difficult weather conditions on average make 23–40 days per year (6–10 %), and the weather minimums make 11–18 days (3–5 %), which are mainly observed from November up to February.

In terms of flights' reliability and security the results of the analysis of research data allow to more effectively organize the flights at low heights and in Armenia's difficult mountainous conditions.

**«ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ» ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ՝  
ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ**

*Մ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ Պեդական կառավարման ակադեմիայի քաղաքական  
կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ*

Քաղաքական զարգացման ներկայիս գործընթացներում տեղի ունեցող արժեքային փոփոխությունները՝ ուղղված ժողովրդավարության որակի բարձրացմանը և համախմբվածությանը, ենթադրում են «լավ կառավարման» սկզբունքների արմատավորում: «Լավ կառավարումը» (*good governance*) արդիական հայեցակարգ է, որի ձևավորմանը նպաստեցին 1980–1990-ական թվականներին տեղի ունեցած քննարկումները, որոնք նախաձեռնել էր Համաշխարհային բանկը: Որպես արդյունք՝ ՄԱԿ-ի «Զարգացման ծրագրեր» փաստաթղթերի փաթեթում 1997 թ. ընդգրկվեցին կերպավորվող երկրների բարեփոխումների արդյունավետ կատարման համար մշակված «լավ կառավարման» հետևյալ ութ բնութագրիչները<sup>1</sup>: Դրանք են.



1. **մասնակցություն (Participation)**, այն է՝ բոլոր մարդիկ՝ անկախ սեռից և ֆիզիկական վիճակից, պետք է որոշումների ընդունման գործում ունենան ձայնի իրավունք կա՛մ անմիջականորեն, կա՛մ այն օրինական միջնորդ հաստատությունների միջոցով, որոնք ներկայացնում են նրանց շահերը: Կարևոր է նշել, որ ներկայացուցչական ժողովրդավարությունը պարտադիր չէ, որ որոշումների կայացման ժամանակ հաշվի առնի հասարակության առավել խոցելի խավերի մտահոգությունները,

2. **օրենքի գերակայություն (Rule of law)**, այն է՝ օրենքները, կանոնադրությունները, օրենսգրքերը պետք է արդար լինեն և գործադրվեն անաչառ կերպով, մասնավորապես՝ մարդու (հատկապես՝ փոքրամասնությունների) իրավունքների մասով,

3. **թափանցիկություն (Transparency)**, այն է՝ գործընթացները, հաստատությունները և տեղեկությունները պետք է անմիջականորեն հասանելի լինեն նրանց

<sup>1</sup> Տես «What is Good Governance?». «United Nations ESCAP» (<http://www.unescap.org/pdd/prs/ProjectActivities/Ongoing/gg/governance.asp>), նաև՝ «Towards Good Governance» ([http://reform.gov.bb/page/GOOD\\_GVERNANCE.pdf](http://reform.gov.bb/page/GOOD_GVERNANCE.pdf)):

համար, ովքեր հետաքրքրված են դրանցով, ընդամին նրանց պետք է տրվի բավարար չափով տեղեկությ<sup>2</sup>՝ դրանք հասկանալու և մշտագնելու համար: Դա հանրային հատվածի և բոլոր շահագրգիռ անձանց համար ապահովում է կառավարության գործունեության, որոշումների ընդունման և խորհրդատվությունների բացությունը,

4. **կարեկցողություն (Responsiveness)**, այն է՝ հաստատությունների և զարգացումների ծառայեցումը բոլոր շահագրգիռ անձանց՝ ընդունելի ժամկետներում,

5. **կողմնորոշվածություն դեպի համաչայնություն (Consensus orientation)**, այն է՝ «լավ կառավարումը» պահանջում է միմյանց հակասող շահերի պայմաններում միջնորդել այն հարցերում համաձայնություն ձեռք բերելու նպատակով, թե՛ որն է դրանցից լավագույնը, և ինչպես կարելի է դրան հասնել,

6. **հավասարություն և ներգրավվածություն (Equity and inclusiveness)**, այն է՝ հասարակության բարեկեցությունը կախված է այն բանի ապահովումից, որ հասարակության յուրաքանչյուր անդամ իրեն զգա ոչ թե հանրության ընդհանուր զանգվածից դուրս մղված, այլ որպես այդ բարեկեցության ապահովման գործում ներբերում կատարող անձ,

7. **արդյունավետություն և օպերատիվություն (Effectiveness and efficiency)**, այն է՝ գործընթացներն ու հաստատություններն ստեղծում են արգասիքներ, որոնք բավարարում են ռեսուրսների լավ օգտագործման պահանջումներին,

8. **հաշվեպովողականություն (Accountability)**, այն է՝ կառավարությունում որոշում ընդունողները, մասնավոր հատվածը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պատասխանատու են հանրության, ինչպես նաև հաստատութենական շահագրգիռ անձանց առջև:

Հետագայում՝ անվտանգային քաղաքականության զարգացումների հաշվառմամբ, գիտական գրականության մեջ ավելացվեց նաև 9-րդ կետը, որով «լավ կառավարման» հայեցակարգը ամբողջականացվեց.

9. **ռազմավարական տեսլական (Strategic Vision)**, այն է՝ դեկավարները և հանրությունը ունեն «լավ կառավարման» և մարդկային զարգացման երկարաժամկետ սպասումներ: Գոյություն ունեն նաև այն պատմականի, մշակութային, հասարակականի համալիրները, որոնց վրա խարսխվում են այդ սպասումները<sup>2</sup>:

Վերջիններս էլ, հանդես գալով որպես խաղաղության մշակույթի գործառնման երաշխավորներ, իրենց ոլորտում ընդգրկում են պետության հաստատությունը, մասնավոր հատվածը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կառույցները: Ներառելով հասարակական կարգուկանոնը, խաղաղաստեղծությունը, խաղաղապահ ուժերը, խաղաղություն պահպանող երկրները՝ խաղաղության մշակույթը ենթադրում է քաղաքական բախումների ռացիոնալ լուծում՝ բանակցությունների և փոխզիջումների եղանակով<sup>3</sup>:

<sup>2</sup> Տես նույն տեղում:

<sup>3</sup> Տես Ռ. Ֆիշեր, ՈՒ. ՈՒրի, Համաձայնության հասնելու ուղին: Բանակցություններ առանց պարտվողների: Ե., 2005:

Խաղաղության մշակույթը բազմաչափ հարաբերությունների համակարգ է, որը ներառում է քաղաքացիական համաձայնության, սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության և ազգային անվտանգության արդիականացման ապահովման գործընթացներ: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ խաղաղության մշակույթը «Արժեքների, դիրքորոշումների, ավանդույթների, վարքագծի տեսակների և կյանքի ուղիների այնպիսի ամբողջություն է, որն արտացոլում և ոգեշնչում է հարգանքը կյանքի, մարդկության և նրա իրավունքների նկատմամբ, բոլոր տեսակների բռնության մերժումը, տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև յուրաքանչյուրի խոսքի ազատության, կարծիքի և տեղեկատվության իրավունքի ճանաչում: Ժողովրդավարության, ազատության, արդարության, համերաշխության, հանդուրժողության, բազմակարծության սկզբունքների ամրապնդում, տարբերությունների ընդունում և ժողովուրդների էթնիկ, կրոնական, մշակութային և այլ խմբերի միջև փոխըմբռնում»<sup>4</sup>:

Վերոգրյալի հիման վրա կոպենհագենյան դպրոցի տեսաբաններն ընդլայնեցին անվտանգության մասին ժամանակակից պատկերացումները՝ այն ուսումնասիրելով «Ես»/«Մենք»/«Նրանք» դերակատարների գործառնական աշխարհագրական, քաղաքակրթական, գենդերային, մշակութային, հոգեբանական, էթնիկական, լեզվաբանական, ծագումնաբանական, արժեքաբանական տիրույթներում: Այս առումով խաղաղության մշակույթը հարաբերակցում է քաղաքացիական անվտանգություն (*civic* կամ *civilian security*) և համընդգրկուն անվտանգություն (*comprehensive* կամ *overall security*) հասկացությունները: Նման մոտեցումը իր արտահայտությունն ստացավ նաև ՄԱԿ-ի ընդունած Խաղաղության մանիֆեստում, որը երրորդ հազարամյակի առաջին տասը տարին պաշտոնապես հռչակեց խաղաղության մշակույթի և ամբողջ աշխարհի մանուկների նկատմամբ բռնության դեմ պայքարի միջազգային տասնամյակ (2000–2012 թթ.): Համաձայն մանիֆեստի՝ անվտանգությունը «ոճերի, արժեքների, հուզական ապրումների, մտավոր ձեռքբերումների ապահովման թագավորություն է, իսկ բռնությունը՝ մարդու զարգացման իրավունքի մերժում և՛ մարմնորեն, և՛ մտովի»<sup>5</sup>:

Յ. Գալթունգը «խաղաղության մշակույթը» բացատրում է՝ օգտագործելով երկու փոխաբերություն: Առաջինը առողջությունն է. խաղաղությունը բռնության համար այն է, ինչ առողջությունը հիվանդության համար՝ անձը կարող է լինել առողջ, ինչպես և անձը, խումբը, մահանգը, ազգը, մարզը, քաղաքակրթությունը կարող են լինել խաղաղ: Երկրորդ փոխաբերությունը սերն է, որը մարմնի, մտքի և հոգու ներդաշնակ միությունն է: Նշված մեխանիզմների համադրմամբ, Յ.

<sup>4</sup> Siby K. Joseph. Towards an Understanding of a Culture of Peace. 2005, P. 5 (<http://www.gvpwardha.in/documents/books/culture-of-peace/4.pdf>).

<sup>5</sup> Josef De Rivera. Assessing the Basis for a Culture of Peace in Contemporary Societies. «Journal of Peace Research», 2004, Vol. 41, N 5, PP. 531–548 ([http://web.pdx.edu/~abyron/peace\\_ed/Wk4/culture1.pdf](http://web.pdx.edu/~abyron/peace_ed/Wk4/culture1.pdf)).



Գալթունգի կարծիքով, մշակվում է խաղաղության մշակույթի գլխավոր արժեքը՝ կրթությունը. «Կրթության խնդիրն է՝ հաստատել տևական խաղաղություն: Առավելագույնը, ինչ կարող են անել քաղաքագետները, մեզ պատերազմներից հեռու պահելն է»<sup>6</sup>:

Ակնհայտ է, որ համապիտանի արժեքների հաստատման միջոցով բնության և բանականության էկոլոգիայի պահպանման համար խաղաղության մշակույթը կերպավորվող հասարակություններին հնարավորություն կտա ռացիոնալ պատասխան տալու ներքին և արտաքին սպառնալիքներին<sup>7</sup>: Այս առումով էլ խաղաղության մշակույթի հաստատման համար 1999 թ. ՄԱԿ-ի կողմից ընդունվեցին գործողության ծրագրի ութ հենասյուները՝ կարևորելով իշխանական հարաբերությունների մարդկայնացումը<sup>8</sup>: Այս համատեքստում նոր մարդասիրությունը կընդարձակի կայուն զարգացման և համագործակցության ապահովման սոցիալական տարածությունը: Այս հիմնային մոտեցումների տիրույթներում էլ իր արժեքային բազմաչափության մեջ ՄԱԿ-ը կարևորեց խաղաղության հայեցակարգումը ինչպես սոցիալական բոլոր տարածություններում, այնպես էլ հասարակության մակրո- (հանրային անվտանգություն՝ խաղաղության բաղադրիչ), միկրո- (անհատի անվտանգություն) մակարդակներում: Համաձայն այս փաստաթղթի՝ խաղաղությունն ունի երեք տարբեր սոցիալական մեծություններ. քաղաքական՝ ազատություն վախից, ռազմադիվանագիտական՝ ազատություն բռնությունից և հակամարտությունից, սոցիալական/տնտեսական՝ ազատություն չքավորությունից, կյանքի որակ, անվտանգություն, ապահովություն<sup>9</sup>:

Հայաստանի վերաբերյալ վկայակոչենք իրականացվող բարեփոխումների արդյունքների գնահատականը «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (Հայաստան 2011–2013 Ազգային ինդիկատիվ ծրագիր)» փաստաթուղթը, որտեղ արձանագրված է «լավ կառավարման» սկզբունքների հետևողական ներդրման անհրաժեշտությունը<sup>10</sup>:

ՀՀ-ում կարևորում ենք կառավարող ընտրանու կողմից կառավարման ծրագրային, գիտական ապահովման և արդյունավետության գնահատման համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը: Դրանց բնականոն գործունեությունն ունի ռազմավարական նշանակություն, որովհետև ձևավորվում է ազգային

<sup>6</sup> Յ. Գալթունգ, Խաղաղություն խաղաղ միջոցներով. խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն: Ե., 2005, էջ 48–49:

<sup>7</sup> Stu Tom Lombardo. The Future Evolution of the Ecology of Mind. «Center for Future Consciousness 2009» ([http://www.centerforfutureconsciousness.com/pdf\\_files/Readings/EvolEcolMindPaper.pdf](http://www.centerforfutureconsciousness.com/pdf_files/Readings/EvolEcolMindPaper.pdf)):

<sup>8</sup> Տես Ջոզեֆ Դե Ռիվերս, Նշ. աշխ., էջ 531–548:

<sup>9</sup> Տես Sang-Hyun Lee. World Peace Index. «The 3rd OECD WORLD FORUM», October 29, 2009. Busan, Korea (<http://www.oecd.org/site/progresskorea/44121754.pdf>):

<sup>10</sup> Տես «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (Հայաստան 2011–2013 Ազգային ինդիկատիվ ծրագիր)»: Ե., 2010, էջ 17–21 ([http://www.mineconomy.am/uploads/NIP\\_2011-2013.pdf](http://www.mineconomy.am/uploads/NIP_2011-2013.pdf)):

անվտանգության ապահովման ցանցային համակարգ (այսուհետև՝ ԱԱՍՅՀ): Վերջինս, հիմնվելով սոցիալական տարածության ցանցային ընդարձակման վրա, արդիականացնում է խաղաղության մշակույթի ընկալումները պետության, հասարակության և անձի կողմից: Այս նկատառումներով ԱԱՍՅՀ-ի օգնությամբ քաղաքական համակարգը անվտանգության քաղաքականություն է ապահովում «անցում–համախմբում» հարացույցների բնականոն գործառնան միջոցով: Նմանօրինակ մոտեցմամբ իրականացվում է համապիտանի արժեքների, վարքի, բարոյական նորմերի, սոցիալական գործունեության համակարգի ներդրում, որոնց հաշվառմամբ էլ տեղի է ունենում խաղաղության մշակույթի սուբյեկտիվ-զգայական ընկալումից անցում դեպի օբյեկտիվ-ռացիոնալացված ընկալում: Այս ամբողջությունն էլ, որպես ազգային անվտանգության զարգացման համակարգ, ունի հաստատութենական-նորմատիվային, տեղեկատվահաղորդակցական, քաղաքակրթական, բարոյավարքային ենթահամակարգեր: Դրանցից յուրաքանչյուրը, ունենալով արտաքին և ներքին սպառնալիքների կանխարգելման ուղղությամբ ռազմավարական գործողություններ կատարելու հստակ պարտականություններ, արդիականանում է՝ ընդարձակելով ազգային անվտանգության սոցիալ-քաղաքական տարածության արժեքաբանությունը:

Այս նկատառումներով կարևորենք նաև այն, որ ՀՀ-ում «լավ կառավարման» սկզբունքների ներդրումը վճռորոշ է պետության կերպարի նորամուծական փոխակերպման գործառույթի համար: Դա ենթադրում է «լավ կառավարման» սկզբունքների հաստատում գործառական մոտեցման միջոցով, համաձայն որի՝ հաստատութենական համակարգը «այնպիսի մեխանիզմների համախումբ է, որոնց միջոցով պատմականության դաշտը փոխակերպվում է սոցիալական կյանքի կանոնների համախմբի, որոնք էլ, իրենց հերթին, կանխորոշում են հաստատությունների գործառնությունները՝ ռացիոնալ ընտրության, մրցունակ մասնակցության և թափանցիկ վերահսկողության իրականացման տիրույթներում»<sup>11</sup>:

ՀՀ-ում որոշիչ է կառավարող վերնախավի, բիզնես վերնախավի և արհմիութենական ղեկավարների՝ որպես «լավ կառավարման» սկզբունքների ներդրումն իրականացնող դերակատարների համագործակցության մակարդակը: Միայն դրա բարձր արժեքների դեպքում հանրապետությունում ակտիվ կերպով կգործառի ոչ միայն մարդու իրավունքների և ազատությունների, այլև պարտականությունների մշակույթի համակարգը՝ ձևավորելով հասարակություն–մասնավոր հատված համագործակցության (*Public–Private Partnerships (PPP)*) բարենպաստ բանեւակարգ<sup>12</sup>: ՀՀ-ում այս համակարգերի բնականոն գործառնան պարագայում կմեծանա և՛ քաղաքացիների, և՛ պետական կառավարման

<sup>11</sup> A. Турен. Возвращение человека действующего. Очерк социологии. М., 1998, сс. 10–40 ([http://socioline.ru/files/5/39/alain\\_touraine.pdf](http://socioline.ru/files/5/39/alain_touraine.pdf)).

<sup>12</sup> Ssu Sochiko Morita and Durwood Zaelke. Rule of Law, Good Governance, and Sustainable Development. «Seventh International Conference on Environmental Compliance and Enforcement», USA, Washington, 2007. PP. 15–21 ([www.inece.org/conference/7/vol1/05\\_Sachiko\\_Zaelike.pdf](http://www.inece.org/conference/7/vol1/05_Sachiko_Zaelike.pdf)):

պատասխանատվությունը: Միևնույն ժամանակ, այն, ապահովելով կառավարման տարբեր հարթությունների միջև անարգել կապ, նպաստելու է պետական, հանրային և քաղաքական կառավարման համակարգում հավաքագրված կադրերի անձնական պատասխանատվության բարձրացմանը՝ «լավ կառավարման» տիրույթներում կարևորելով՝

- ներքին և արտաքին հրամայականներին համահունչ արդիականացման, հարմարվողականության և կերպավորության գործընթացների ծավալումը,
- մարդկային ռեսուրսների պատրաստումը (վերապատրաստումը), գլխավոր քաղաքական դերերի կատարմանը կոչված ընտրանու և լիդերների բաց առաջընթացումը,
- վերնախավի և զանգվածների գիտակցության ու վարքաբանության մեջ խաղաղության մշակույթի ներդրումը՝ քաղաքական սոցիալականացման միջոցով:

Փաստորեն՝ «լավ կառավարումը» ամբողջացվում է «համընդհանուր սոցիալական խաղաղության» և «կոլեկտիվ անվտանգության» գաղափարներով, որոնք էլ դրվում են «Ես»-ի և «Մենք»-ի կայուն զարգացման ռազմավարության հիմքում: Նման մոտեցումը հենվում է այն «նոր» (ոչ ավանդական) վտանգի աղբյուրների բացահայտման վրա, ինչպիսիք են զանգվածային համաճարակները, թմրամոլությունը, անօրինական շրջանառությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունները, նոր սերնդի զենքերի զանգվածային օգտագործումը, ահաբեկչությունը<sup>13</sup>:

Այսպիսով՝ խաղաղության մշակույթի ապահովումը կախված է ոչ միայն ազգային կառավարության գործունեության որակից, այլև վերպետական անվտանգություն (*transstate security*) ապահովող դերակատարների համագործակցության մակարդակից: Դրա հետևանքով Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Հարավարևելյան Ասիայի, ինչպես նաև հետխորհրդային երկրներում, պայմանավորված քաղաքական զարգացման բազմավեկտորությամբ ու ժողովրդավարության որակի անման անհրաժեշտությամբ, մեծացել է խաղաղության մշակույթի պահանջարկը: Մի կողմից՝ պատրանքային հեղափոխական գործընթացների հետևանքով «ներքևից» պարտադրվող ժողովրդավարական բարեփոխումների բազմաչափությունը, մյուս կողմից՝ կերպավորվող հասարակություններում քաղաքական տարածության տրոհվածությունը և քաղաքական ժամանակի վերաբերյալ աններդաշնակ պատկերացումների առկայությունը անվտանգության ապահովման համակարգում որակական նոր մակարդակի են բարձրացրել ազգային համագործակցային քաղաքիչի պահանջարկվածությունը: Այդ առումով ուշագրավ է գեներալ-մայոր Հ. Քոթանջյանի մոտեցումը, համաձայն որի՝ «Հարավային Կովկասի կայուն զարգացման համար բնական կլիմեր անվտանգության ու դրան առնչվող խնդիրների նկատմամբ բազմավեկտոր մոտեցում

<sup>13</sup> Stu Peter Hough. Understanding global security. 2nd ed. London and New York, 2008, PP. 165–190:

ցուցաբերել, ինչը կապ կստեղծի տարածաշրջանում բոլոր հիմնական դերակատարների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իրանի, ինչպես նաև ԵԱՀԿ, ԵԽ-ի, ԵՄ-ի, ՀԱՊԿ-ի, ՆԱՏՕ-ԵԱԳԽ և ՄՃՏՀ կազմակերպությունների միջև»<sup>14</sup>:

1994 թվականից ՀՀ-ն ներգրավված է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրում: Տվյալ ծրագրի շրջանակներում 2003 թ. հունիսին ՀՀ-ում առաջին անգամ անցկացվեց զորավարություն, որին մասնակցեց 400 հոգուց բաղկացած զորակազմ՝ ՆԱՏՕ-ի գործընկեր 19 երկրներից (ԱՄՆ, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա և այլն): 2004 թվականից մինչև այսօր Հայաստանը մասնակցում է ՆԱՏՕ-ի ղեկավարությամբ իրականացվող խաղաղապահական օպերացիաներին: Դրան զուգահեռաբար՝ Հայաստանը, լինելով ԱՊՀ անդամ և ՌԴ ռազմավարական դաշնակից, մասնակցեց «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» (ՀԱՊԿ) ստեղծման աշխատանքներին: Նմանօրինակ բազմակերպությունը համագործակցությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ապակենտրոնացում՝ հետևողականորեն հաստատելով բազմադերային կառավարման ցանցային դաշտ: Այդ դաշտը քաղաքական զարգացման դերակատարների (կառավարող ընտրանի, ճնշման խմբեր, առաջատարներ, ընտրազանգված, կուսակցություններ) գիտակցված փոխհամագործակցության միջոցով ապահովում է ռազմավարական մասնակցություն՝ միավորված խաղաղության մշակույթի կիրառմանը: Ռազմավարական մասնակցությունը, ներառելով քաղաքական, տնտեսական, մշակութային, մարդասիրական և բնապահպանական ոլորտներում հարաբերական անկախության մեջ գործառույթ ծրագրեր, ենթադրում է գիտատար ռեսուրսների առկայություն:

Այս ամենը խիստ արդիական է ՀՀ-Սփյուռք-ԼՂՀ խաղաղության մշակույթի համար. «Գիտակրթական համակարգի կառավարման անարդյունավետությունը, միջազգային ներգրավվածության ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև յուրաքանչյուրի համար մասնագիտական կրթության ոչ լիարժեք մատչելիությունը սպառնալիքներ են ազգային անվտանգության համար»<sup>15</sup>: Փաստորեն, գիտակրթական համակարգի արդյունավետության ցածր մակարդակը սպառնալիք է «լավ կառավարման» սկզբունքների գործարկման համար, քանի որ և՛ ՀՀ-ում, և՛ ԼՂՀ-ում, և՛ Սփյուռքում պետք է պատրաստ լինեն հավասարաբեռն պատասխանելու ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերներին: Այս եռամիասնության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Սփյուռքը, որը «փաստացի գոյություն ունի որպես համաշխարհային էթնոմշակութային-տեղեկատվական, գործարարական ցանց՝ բաղկացած մոտ տասը միլիոն քաղաքականապես ակտիվ, բարգավաճ, կիրթ և Ամերիկայի ու Եվրոպայի տնտեսական, ֆինանսական և քաղաքական կյանքին սերտորեն ինտեգրված մարդ-

<sup>14</sup> Հ. Մ. Քոթանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: Ե., 2008, էջ 62–63:

<sup>15</sup> «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 21:

կանցից»<sup>16</sup>: Այս համատեքստում հայ ազգային ինքնության արդիականացման գերխնդիրը մրցունակ սերնդի ձևավորումն է՝ խաղաղապահական արժեքների համաժամանակյա գործառնման մտահոգություններով հանդերձ:

Խաղաղապահականությունը՝ որպես համակարգային ամբողջություն, ներառում է համապատասխան գիտելիքներ, հմտություններ, արժանիքներ, նպատակադրում՝ հիմնված ինքնակարգապահության, ինքնաարդիականացման և ինքնաիրացման վրա: Խաղաղապահական կրթությունը ՀՀ ազգային անվտանգության հիմնարար արժեքներն ապահովող մի գործընթաց է, որում անձի սոցիալականացման արժեքայնությունը պայմանավորված է կառավարող վերնախավի՝ քաղաքական շուկան արդիականացնելու ընդունակությունից: Որպես արդյունք՝ հայ «Ես»-ը, որդեգրելով «խաղաղապահականությունը անվտանգության հիմքն է» սկզբունքը, հնարավորություն է ստանում համագործակցելու տարաբնույթ «Ես»-երի հետ՝ նպատակամետ կերպով պատասխանելով տարածաշրջանային և համընդհանուր մարտահրավերներին: Այս գործընթացում ազգային ինքնության արդիականացման հիմնախնդիրը և խաղաղապահականությունը հնարավոր չէ տարանջատել պետության քաղաքականությունից, պետություն, որի «հիմնական պարտականությունը իր քաղաքացիներին առաքինի դարձնելն է՝ մտավոր կրթությամբ և բարոյական կարգավարժությամբ, նրանց մտքերը լուսավորելով, սրտերը մաքրելով և նրանց՝ իրենց իրավունքներն ու պարտականություններն ուսուցանելով»<sup>17</sup>:

Ըստ այդմ՝ անհրաժեշտ է ազգային խաղաղապահականության կրթական համակարգի մեջ ներմուծել այնպիսի ժողովրդավարական արժեքներ, որոնք հային հնարավորություն կտան պատասխանելու ժամանակի մարտահրավերներին և իր քաղաքացիական դիրքորոշմամբ ապահովելու ազգային անվտանգությունը: Այս առումով անհրաժեշտ է պատմության հողվույթում ձևավորված հայ ազգային լավագույն ավանդույթները՝ արարչական էություն, աշխատասիրություն, հանդուրժողականություն և այլն, զուգամիտել Արևմուտքի գիտակրթական նորամուծություններին, որոնք, արդիականացնելով ազգային ինքնությունը, կորդեն նրան մրցունակ նորամուծական գիտելիքների իմացության:

Կարևորելով մարդկային ռեսուրսների ռացիոնալ կառավարումը՝ մրցունակ կրթությունը դարձել է համագործակցության և ինքնաիրացման այնպիսի ցանց, որը ռազմավարական նկատառումներով ներառում է հիմնախնդրի շարունակական, ազատ մտափոխանակումների, տարաբնույթ գաղափարների ծրագրված ուսուցում: Մրցունակ մասնագիտական և խաղաղապահական կրթության միջոցով ապահովելով իրենց ապագան՝ մարդիկ հնարավորություն են ստանում իրենց քաղաքացիական դիրքորոշմամբ երաշխավորելու տեղական, տարածաշրջանային և համընդհանուր խաղաղությունը: Նպատակամետ ռազմավարական մասնակցության արժեհամակարգը, ստեղծելով ուրույն քաղաքակրթական շփումների միջավայր, հայ մարդուն հնարավորություն է

<sup>16</sup> Հ. Ս. Քոթանջյան, Նշ. աշխ., էջ 49–50:

<sup>17</sup> ԅ. Գալթունգ, Նշ. աշխ., էջ 49:

տալիս խաղաղության մշակույթի օգնությամբ բնականոն կերպով արդիականացնելու ազգային ինքնությունը:

Այս առումով «Հայկական աշխարհ» նախագծի զարգացման համար հարկ է հիմնվել Ֆ. Չաքարիայի՝ մեր ժամանակների պատմությունը վերածնող «մնացյալի հզորությունը» քաղաքականության արժեհամակարգի վրա: Զննարկելով էթնիկական ցանցերի, համընդհանուր էթնիկական ձեռներեցության հիմնախնդիրները՝ Ֆ. Չաքարիան «մնացյալի հզորություն» հասկացությունն ընկալում է որպես ժողովրդավարական, հանդուրժողական, ազատական արժեքների հիմքի վրա բնականոն կերպով արդիականացող հասարակություններ<sup>18</sup>, որտեղ էթնիկ «Ես»-ը մեխանիկական արևմտականացման փոխարեն ստանում է իր ինքնությունը բնականոն եղանակով կերպափոխելու ռեալ հնարավորություն: Տվյալ միտումը, գիտավերլուծական հարացույցի շրջանակներում ՀՀ–Սփյուռք–ԼՂՀ հարաբերություններին հաղորդելով բազմավեկտոր բնույթ, մեծացնում է հայկական ցանցի ռեսուրսների ռեալ օգտագործման հնարավորությունը: Այստեղից հետևում է, որ «Հայկական աշխարհի» դերակատարները, ընդարձակելով համագործակցությունը, հնարավորություն են ստանում փոխգործության իրենց դրսևորումներով ազդեցություն գործելու ՀՀ վարչատարածքային միավորների համաչափ զարգացման և ժողովրդավարության որակի բարձրացման վրա: Դրա հետ մեկտեղ, ժամանակի հրամայականին համապատասխան, «Հայկական աշխարհի» համար ստեղծվում է տարբեր քաղաքակրթական չափումներում խաղաղության մշակույթի գործառնանը մրցունակ կերպով մասնակցելու և համաշխարհային հանրության հետ համագործակցելու հնարավորություն:

<sup>18</sup> Stu F. Zakaria. The Future of Freedom: Illiberal Democracy at Home and Abroad. New York, London, 2007, P. 286:

## ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ

### ВНЕДРЕНИЕ ПРИНЦИПОВ «НАДЛЕЖАЩЕГО УПРАВЛЕНИЯ» В КАЧЕСТВЕ ПРОЦЕССА УТВЕРЖДЕНИЯ КУЛЬТУРЫ МИРА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

*М. М. МАРГАРЯН, доктор политических наук, профессор, заведующая кафедрой  
политического управления и политического анализа Академии государственного  
управления РА*

#### РЕЗЮМЕ

Изменения в ценностной системе современных процессов политического развития подразумевают внедрение принципов «надлежащего управления» (**участие, верховенство закона, транспарентность, оперативность, ориентированность на консенсус, объективность и инклюзивность, эффективность и результативность, подотчетность**). Эти принципы яв-

ляются гарантиями внедрения культуры мира, являющейся, согласно ООН, системой многомерных отношений, включающих процессы гражданского согласия, общественного диалога, общности поколений и национальной безопасности. В этом контексте необходимо разработать стратегию управления национальной, региональной и всеобщей культурой мира в процессе «переход–объединение», что позволит обеспечить экономическое, общественное, стратегическое развитие посредством непрерывных реформ, в то же время обеспечивая управление временем, потребностью, стрессом, критической ситуацией.

Данное управление, при повышении сплоченности в Республике Армения, образует **сетевую систему обеспечения национальной безопасности (ССОНБ)**. С одной стороны, оно повышает подотчетность граждан, с другой–обеспечивает транспарентность системы государственного управления РА. Такой подход в результате наблюдений «надлежащего управления» в качестве политики модернизации национальной безопасности, стратегической комплексной деятельности, а также процесса принятия решений предоставляет возможность для всестороннего анализа разработки культуры мира.

## POLITICAL SCIENCE OF SECURITY

### THE IMPLEMENTATION OF THE PRINCIPLES OF «GOOD GOVERNANCE» AS A PROCESS OF SUSTAINING THE CULTURE OF PEACE IN THE REPUBLIC OF ARMENIA

*M. M. MARGARYAN, Doctor of Political Sciences, Professor,  
Head of the Chair of Political Administration and Political Analysis  
of the RA Public Administration Academy*

#### SUMMARY

Changes in the value system of contemporary processes of political development imply the implementation of «good governance» principles (**participation, rule of law, transparency, responsiveness, consensus orientedness, equity and inclusiveness, effectiveness and efficiency, accountability**). Those principles are the according guarantees of the performance of culture of peace, which, to the UN, the culture of peace is a system of multidimensional relations comprising the processes of civil conformity, social dialogue, solidarity of generations and national security. In this context, it is necessary to develop a strategy of national, regional and global peace culture management. in the process of transition–consolidation,

and that will give the opportunity to sustain economic, social and strategic development through continuous reforms in the meantime providing time, need, stress, critical situation.

The foresaid, whilst increasing cohesion in the RA, forms **a network system of sustaining national security (NSSNS)**. On one hand this increases the accountability of the citizens; on the other hand it ensures the transparency of the public administration system of the RA. Such an approach in the observations of «good governance» as a policy of modernization of national security, a strategic complex activity, as well as a decision-making process provides the possibility for comprehensive analysis of implementing the culture of peace.



**ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԶԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

*Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, ք/ծ գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետ,  
Հ. Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊԲՀ  
ռեկտորի խորհրդակալ, Ա. Վ. ՆԱԶԱՐՅԱՆ, ք/ծ մայոր, բժշկական  
գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետի  
տեղակալ, Գ. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, ք/ծ փոխգնդապետ, բժշկական  
գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ ՌԲՖ բուժծառայության կազմակերպման  
և մարտավարության ամբիոնի պետ, Ռ. Գ. ԿԻՐԱՎՈՍՅԱՆ, ք/ծ կապիտան,  
բժշկական գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ ՌԲՖ բուժծառայության  
կազմակերպման և մարտավարության ամբիոնի դասախոս*

Պատերազմների ժամանակ քաղաքացիական առողջապահության և ռազմական բժշկության համակարգերի գործունեության ինտեգրման վերաբերյալ մասնագիտական գրականության, այդ թվում՝ արխիվային փաստաթղթերի, ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ հիմնախնդիրը բավարար չափով վերլուծված չէ, հատկապես՝ փոքր պետությունների դեպքում: Մինևույն ժամանակ, դա կարևոր պրոբլեմ է, որի ճիշտ լուծումը հնարավորություն է տալիս օգտագործելու պետության ամբողջ առողջապահական ներուժը:

Ընդհանուր առմամբ, պատերազմների ժամանակ ռազմական բժշկության և քաղաքացիական առողջապահության գործունեության պատմությունը առանձնանում է ղեկավար սկզբունքների և մեթոդների զարգացման հետևողականությամբ: ՈՒՎտի նպատակահարմար է համառոտակի նշել դրանց զարգացման հիմնական փուլերը:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը ռազմական և քաղաքացիական բժիշկների միջև առանձնահատկություններ չեն եղել, քանի որ պատերազմող կողմերի բանակների թվաքանակը խիստ սահմանափակ էր, պատերազմի ելքը որոշվում էր մեկ կամ երկու ճակատամարտով:

Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ վիրավորներին և հիվանդներին ցուցաբերվող բուժօգնության ռազմավարությունը որոշակիացվեց, մասնավորապես, կատարվեց՝

- քաղաքացիական բուժանձնակազմի համընդհանուր զորահավաք,
- քաղաքացիական առողջապահության բուժօբյեկտների մասնակի (որոշ երկրներում՝ լրիվ) փոխադրում ռազմական ռելսերի վրա:

Չանգվածային ոչնչացման զենքի ստեղծումը պահանջեց նոր մոտեցումների մշակման անհրաժեշտություն: Հաշվարկների համաձայն՝ դրա կիրառումը

կարող է պատճառել հսկայական սանիտարական կորուստներ ոչ միայն գորքերում, այլև քաղաքացիական բնակչության շրջանում ինչպես մարտական գործողությունների վայրում, այնպես էլ թիկունքում:

Ֆ. Ի. Կոմարովը և Օ. Մ. Լոբաստովը, ուսումնասիրելով 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային բանակի բուժապահովման պրոբլեմները, նշում են, որ՝

- քաղաքացիական առողջապահությունում գոյություն ուներ բուժաշխատողների համակարգ, որը գործնականում չէր ապահովում պատերազմի ժամանակ բանակի համալրումը առավել պահանջված կադրերով: 1940 թ. վերջին ըստ ռազմահաշվառման մասնագիտությունների՝ 66,7 %-ը թերապևտներ, մանկաբույժներ, մանկաբարձներ ու գինեկոլոգներ էին, մինչդեռ բանակում պահանջվում էին ընդհանուր վիրաբույժներ, նյարդավիրաբույժներ, վնասվածքաբաններ, ակնաբույժներ, դիմաձնոտային վիրաբույժներ,

- պատերազմի սկզբնական շրջանում քաղաքացիական առողջապահության մարմինների և ռազմաբժշկական ծառայության գործունեությունները համաձայնեցված չէին, այն դեպքում, երբ պատերազմի առաջին ամիսներին բանակի բուժառայությունը կորցրել էր իր ուժերի և միջոցների մի զգալի մասը, քանի որ նրա հիմնական կազմավորումները տեղակայված էին հին սահմանի շրջանում, բժիշկների 39,9 %-ը և մահճակալների 35,8 %-ը, այսինքն՝ խորհրդային առողջապահության ընդհանուր ռեսուրսների 1/3-ը, գտնվում էր երկրի արևմտյան հատվածում,

- պատերազմի ընթացքում առողջապահության ոլորտում բուժաշխատողների համընդհանուր զորահավաքը և բուժհիմնարկների մոբիլիզացումը նպաստեցին վիրավորների 72,3 %-ի և հիվանդների 90,6 %-ի, կամ մոտ 17 միլիոն մարդու շարք վերադարձնելուն, ինչը գործնականում ոչ թե մարտավարական, այլ ռազմավարական գերխնդրի լուծում էր,

- պատերազմի երկրորդ շրջանում՝ հարձակողական գործողությունների ժամանակ, ազատագրված տարածքներում քաղաքացիական առողջապահության օբյեկտների ավերածության, բժշկական կադրերի պակասության հետևանքով որոշ վարակիչ հիվանդությունների զանգվածային բռնկումների ֆոնի վրա գորքերի բուժապահովման հարցում առաջացել էին լուրջ պրոբլեմներ: Այսպես. 1944 թ. Յասսի-Քիշնևյան օպերացիայի ժամանակ 2-րդ և 3-րդ ՌԲկրախնական ռազմաճակատներում միայն մալարիայով հիվանդացել էր 87602 մարդ, ինչի հետևանքով էապես նվազել էր գորքերի մարտունակությունը,

- պատերազմի տարիներին բավական հրատապ լուծում պահանջող խնդիրներից էր բուն բուժանձնակազմի կորուստների վերականգնումը: Այս ոլորտում կորուստների ընդհանուր թիվը կազմել է 210601 մարդ, որից 88,2 %-ը եղել է ոչ բժշկական կազմը (բուժակներ, սանհրահանգիչներ, սանիտարներ): Այն դեպքում, երբ պատերազմի տարիներին առաջին բուժօգնությունը ցուցաբերվել է հիմնականում սանիտարների ու սանհրահանգիչների կողմից (53 %), ինքնա- և փոխադարձ օգնության ձևով (38,2 %), բուժակների կողմից (2,6 %), իսկ բժիշկների կողմից՝ միայն 6,2 % դեպքերում:

Ե. Ի. Սմիռնովը, ներկայացնելով 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին բժշկական կադրերի պատրաստման հիմնախնդիրը, նշում է սանիտարական կորուստների նվազեցման գործում կազմակերպական միջոցառումների կարևորությունը: Ըստ նրա՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում անհրաժեշտ էր պատրաստել ոչ միայն գնդերի բժիշկների, այլև ռազմական բժշկության կազմակերպիչների՝ բուժժառայության ղեկավարների. «Վատ է, եթե բուժժառայությունը չունի գնդերի գրագետ բժիշկներ, բայց դժբախտությամբ է, երբ ռազմական բժշկությունը, ունենալով լավ բժիշկներ, չունի պատրաստված ղեկավարներ»:

Սմիռնովը նշում է նաև, որ կարևոր նշանակություն ունի բուժանձնակազմի գորահավաքային պատրաստությունը:

Յու. Ա. Շևչենկոն նույնպես փաստացի հիմնավորում է, որ քաղաքացիական առողջապահության գործունեությունը պետք է պլանավորվի կազմգորահավաքային պատրաստության ենթատեքստում: Նա մասնավորապես նշում է, որ.

- 1941–1945 թթ. Կարմիր բանակի սանիտարական ծառայության կազմակերպման խնդիրների լուծման գործում կարևոր է եղել քաղաքացիական առողջապահության դերը,

- պատերազմի պայմաններում կարևորվել են առողջապահության համակարգի կազմգորահավաքային պատրաստությունը, ինչպես նաև կադրերի պատրաստումը,

- էական նշանակություն է ունեցել բանակում ռազմաբժշկական գիտական ներուժի առկայությունը. պատերազմի տարիներին Կարմիր բանակի բուժժառայության համակարգում ծառայում էին 5 ակադեմիկոս, 275 պրոֆեսոր, գիտությունների 308 դոկտոր և մոտ 2000 թեկնածու:

Բավական ուշագրավ տվյալներ են ներկայացված «40-րդ բանակի բժշկական ապահովումը (թվեր և փաստեր)» հոդվածում: Մասնավորապես՝ բերվում են մի շարք վիճակագրական տվյալներ սանիտարական կորուստների վերաբերյալ: Այսպես. Աֆղանական պատերազմում Խորհրդային Միության կորուստները կազմել են 64 118 մարդ, որոնցից 13 833-ը զոհված, 49 985-ը վիրավոր և 330-ը անհայտ կորածներ են: Ընդ որում, եթե 1980 թ. գնդակային և բեկորային վնասվածքների հարաբերակցությունը եղել է 2:1, ապա 1988 թ. այն կազմել է 1:2,5: Այստեղ կարևորն այն է, որ եթե պատերազմի սկզբնական շրջանում ծանր վիրավորների 16,0 %-ը և ծայրահեղ ծանր վիրավորումների 23,1 %-ը ունեին համակցված և բազմակի վնասվածքներ, ապա պատերազմի ավարտական փուլում դրանք համապատասխանաբար կազմում էին 59,4 % և 45,2 %: Տվյալ ժամանակահատվածում բազմակի և համակցված վնասվածքների թիվը աճել է 4, իսկ ծանր և ծայրահեղ ծանր վիրավորների թիվը՝ 2 անգամ: Պատերազմի տարիներին վիրավոր/սպանված հարաբերակցությունը եղել է 3,6:1, ավիացիոն տրանսպորտով տեղափոխվել է մոտ 152 հազար վիրավոր և հիվանդ: Ընդ որում, մարտի դաշտից մման ձևով հեռացվել է վիրավորների ավելի քան 68 %-ը, երբեմն էլ՝ մինչև 90-95 %-ը: Այս առումով կարևոր է, որ վիրավորների մոտ 92 %-ը

բազային բուժհիմնարկներ է տեղափոխվել առաջին 6 ժամվա ընթացքում (նրանց 65,9 %-ը եղել է ծանր կամ միջին ծանրության աստիճանի):

Հատուկ նշվում է, որ զինծառայողները, շատ քիչ բացառությամբ, իրենց բուժումն ստացել են զինվորական բուժհիմնարկներում, իսկ քաղաքացիական առողջապահության դերը Աֆղանական պատերազմի տարիներին եղել է չնչին:

Այս տեսակետից էապես տարբերվում է Աֆղանստանի բանակի բուժապահովումը: Քանի որ նրա բժշկական ծառայությունը զարգացած չէր, բավարար չափով հագեցված չէր սարքավորանքով, բուժանձնակազմի պատրաստության մակարդակը ցածր էր, ապա գերազանցապես օգտագործվում էին տեղի առողջապահության համակարգի շատ սուղ հնարավորությունները (Քաբուլից դուրս):

Հայրենական գրականության մեջ ևս ուսումնասիրվել է վերջին 300 տարվա որոշ պատերազմների ժամանակ մարդկային կորուստների պորբլեմը և այն եզրակացությունն է արվել, որ ռազմական բժշկության և քաղաքացիական առողջապահության գործունեության ինտեգրումը անհրաժեշտ է դիտարկել մի քանի տեսանկյունից, մասնավորապես՝

- մեծ թվով երկրներ ռազմական ընդհարումների ժամանակ, բացի ռազմաբժշկական ծառայության ուժերից, մեծ չափով օգտագործում են նաև քաղաքացիական առողջապահության բուժմիավորումների ներուժը. զինվորական բժշկական անձնակազմով ուժեղացված բուժհիմնարկներում ծավալվում են բժշկական տեսակավորման, վերակենդանացման, անհետաձգելի բուժօգնության, վիրաբուժական և արյան բանկի բաժանմունքներ,

- ԱՄՆ-ի բանակի ռազմաբժշկական ծառայության մշակած ծրագրի համաձայն՝ նախատեսվում է վիրավորների և հիվանդների տարահանում ինչպես ռազմաբժշկական կենտրոններ, այնպես էլ քաղաքացիական բուժհիմնարկներ ու պատերազմի վետերանների հոսպիտալներ: Ներկայումս ԱՄՆ-ը Մեծ Բրիտանիայում ստեղծել է 15 ռազմական հոսպիտալ: Բացի այդ, անգլիական կողմն անհրաժեշտության դեպքում պետք է իր քաղաքացիական բուժհիմնարկներից տրամադրի 40000 մահճակալ,

- մի շարք երկրներում՝ գոյություն ունեցող միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով առաջարկվում է ռազմական ընդհարումների ժամանակ կազմակերպել սերտ համագործակցություն քաղաքացիական առողջապահության և ռազմական բժշկության ուժերի միջև: Նման համակարգային մոտեցումներ են կիրառվում նաև ՌԴ-ում:

Ներկայացված վերլուծությունը կարևոր է ՀՀ-ի համար, քանի որ մեզանում առկա են մի շարք գործոններ.

- մարդկային և նյութական ռեսուրսների խիստ սահմանափակություն,
- տարածաշրջանում ընթացող պատերազմներն ու ռազմական գործողությունները կարող են ընդունել տևական ու ձգձգվող բնույթ,
- հանրապետությունը դեռ գտնվում է անցումային փուլում,
- առողջապահության համակարգի բարեփոխումները դեռ ավարտված չեն, կուտակային հնարավորությունները սուղ են, կադրային ներուժը ռազմաբժշկա-

կան կրթության տեսակետից սահմանափակ է՝ պետական և ոչ պետական բժշկական բուհերի գործունեության նկատմամբ հակասական և ոչ համակարգված մոտեցումների հաշվառմամբ, պահանջվում է որոշակի օրենսդրական դաշտի և իրավական նորմատիվ ակտերի ստեղծում:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ մեր առջև դրված խնդիրներն իրենց մասշտաբներով, նպատակներով ու կիրառված մեթոդներով էապես տարբերվում են այլ պետությունների պայմաններից, այսինքն՝ չի կարելի կատարել պարզ համադրում՝ տարբեր երկրների փորձի արտածմամբ:

Պետք է նշել, որ ՀՀ-ի համար ռազմական բժշկության և քաղաքացիական առողջապահության ինտեգրումն ունի ոչ թե մարտավարական, այլ ռազմավարական նշանակություն, ընդ որում, տվյալ պրոբլեմի նկատմամբ մոտեցումը պետք է լինի համապարփակ, պարտադիր կարգով ընդգրկի Ձինված ուժերի սանիտարական կորուստների նվազեցման խնդիրը:

Մեկ կարևոր հանգամանք ևս. մեր տարածաշրջանը հիմնականում գտնվում է բարձր լեռնային գոտում, առկա են մի շարք վարակիչ հիվանդությունների բնական օջախներ, չեն բացառվում բնական, տեխնածին և մարդածին աղետների զուգադիպումներ (ինչպես եղավ, օրինակ, Սպիտակի ավերիչ երկրաշարժի ժամանակ):

ՌԻստի ՁՈՒ-ի անձնակազմի բուժապահովման գործում ոչ համակարգված մոտեցման ցուցաբերումը կարող է մարդկային կորուստների կառուցվածքի տեսակետից հանգեցնել հարաբերական դինամիկ անկայունության և, ի վերջո, բացասական որակական տեղաշարժերի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Մ. *Դարբինյան*, Ռ-ազմական բժշկությունը հանրապետության առողջապահական համակարգում: «ՀԲ», 2011, հմ. 4:
2. Բ. Ն. *Հարությունյան*, Ռ-ազմաբժշկական կրթության համակարգի կատարելագործումը՝ որպես հայկական բանակի բժշկական ապահովման արդիականացման հիմք: «ՀԲ», 2012, հմ. 3:
3. Մ. Է. *Միրզյան*, Լ. Մ. *Ժամազործյան*, Ս. Ս. *Անիրյան*, Ռ. Վ. *Նիկողոսյան*, Ս. Գ. *Գալստյան*, Որոշ հարցեր մարդկային կորուստների վերաբերյալ մի շարք պատերազմների ու բնական աղետների ժամանակ: Ե., 2000:
4. Փ. Ի. *Комаров*, Օ. Ս. *Лобастов*. Основные итоги и уроки медицинского обеспечения Советской Армии в годы Великой Отечественной войны. «Военно-медицинский журнал» («ВМЖ»), 1990, № 5.
5. «Медицинское обеспечение 40-й армии (цифры и факты)». «ВМЖ», 1991, № 8.
6. Ե. Ի. *Смирнов*. Война и военная медицина 1939–1945 гг. Изд. 2. М., 1979.
7. Ю. Л. *Шевченко*. Роль военного и гражданского здравоохранения в период Великой Отечественной войны 1941–1945 гг. «Бюллетень Научно-исследовательского института социальной гигиены, экономики и управления здравоохранением им. Н. А. Семашко». М., 2000.

ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ռ. Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու,  
ՀՀ առողջապահության նախարարի խորհրդական

Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի անբաժան ու կարևորագույն բաղկացուցիչ՝ ռազմական բժշկության հիմնական խնդիրը միշտ էլ եղել և մնում է ՋՈՒ-ի բուժապահովումը, որը Ձինված ուժերի անձնակազմի առողջության պահպանման, ամրապնդման, վիրավորներին և հիվանդներին պատեհաժամ բուժօգնության ցուցաբերման, նրանց մարտունակության (աշխատունակության) վերականգնման միջոցառումների համալիր է<sup>1</sup>: Ռազմաբժշկական ծառայությունը կարևոր դեր է կատարում զինվորական ծառայության անվտանգության ապահովման գործում՝ իրականացնելով այնպիսի միջոցառումներ, որոնք առնչվում են հետևյալ ենթադրատների հետ՝ մարտական պատրաստման ժամանակ բժշկական ապահովում, սպառազինության ու ռազմական տեխնիկայի շահագործման ժամանակ զինծառայողների աշխատանքային պայմանների բժշկական վերահսկողություն, անհատական աշխատանք վարքագծում նյարդահոգեկան անկայունության նախանշաններ դրսևորող զինծառայողների հետ, բուժկանխարգելիչ ու սանիտարահակահամաճարակային միջոցառումներ, զինծառայողներին առաջին բուժօգնության վերաբերյալ գիտելիքների ուսուցում, առողջ ապրելակերպի քարոզում և այլն:



Ձինված ուժերի բարձր մակարդակի մարտունակության պահպանման, հիվանդությունների կանխարգելման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն սանիտարահակահամաճարակային միջոցառումները և կանխարգելիչ լաբորատոր բուժհետազոտությունները: Ձինծառայողի առողջական վիճակը շատ հարցերում կախված է զինվորական կոլեկտիվներում ժամանակին և հետևողականորեն անցկացվող նպատակային կանխարգելիչ ու հետազոտական միջոցառումներից: Այսպես, Ի. Բիկովը 2005 թվականին ամեն շաբաթ անցկացրել է զինծառայողների շնչառական ուղիների սուր հիվանդությունների և թոքաբորբի մշտագնում: Օպերատիվ կերպով անցկացվել են արդյունավետ միջոցառումներ՝ այդ հիվանդությունների կանխարգելման նպատակով: Որպես արդյունք՝ հիվանդությունների թիվը նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել է 1,5-ից 2 անգամ<sup>2</sup>:

<sup>1</sup> *Տես Գ. Միքայելյան, Բուժանձնակազմը միշտ զինվորի կողքին է: ԼՂՀ Կենտրոնական զինվորական հոսպիտալը 20 տարեկան է: «Հայաստանի Հանրապետություն», 2012 թ. հոկտեմբերի 23:*

<sup>2</sup> *Տես Ի. Յու. Быков, Ի. Գ. Корнюшко, А. М. Шелепов, И. Т. Русев. Пути совершенство-*

Ջարգացած, մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի երկրներում կանխարգելիչ ռազմաբժշկական ծառայությունների առջև դրվում են հետևյալ խնդիրները. խստիվ վերահսկել որակյալ սննդամթերքով ու խմելու ջրով անձնակազմի ապահովման պայմանները, արգելել զինվորական ստորաբաժանումների տեղաբաշխման վայրերի սահմաններից դուրս սնվելը և ջրխումը, վերահսկել ստացիոնար ճաշարաններում և դաշտային պայմաններում հիգիենայի կանոնների պահպանումը, անձնակազմին ապահովել պաշտպանիչ անհատական ցանցերով, ռեպելենտներով (հատուկ վանիչ նյութեր), պերմետրիններով տոզոքլաժ համազգեստով՝ արյունածուծ միջատներից պաշտպանվելու համար, մալարիայի կանխարգելիչ բուժում, անձնակազմի նախնական հարմարում կլիմայական պայմաններին և այլն: Բացի այդ, նախքան գորքի տեղափոխումը նոր վայր, այնտեղ է ուղարկվում գորային բժիշկների ախտորոշիչ խումբ (առաջավոր ախտորոշիչ լաբորատորիա)՝ վարակիչ հիվանդությունների արագ ախտորոշման համար անհրաժեշտ սարքավորանքով: Նման քայլերը հնարավորություն են տալիս ոչ միայն անհապաղ արձագանքելու հիվանդությունների բռնկմանը, այլև կանխարգելելու դրանք<sup>3</sup>:

Ռազմաբժշկական համակարգում կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային հետևողական միջոցառումների վերաբերյալ կան ռուսական և արտասահմանյան բժիշկ-մասնագետների (Լ. Յանշին<sup>4</sup>, Վ. Ֆեսենկո<sup>5</sup>, Կ. Հանսեն<sup>6</sup>, Տ. Բրաուն<sup>7</sup>, Դ. Հարմս<sup>8</sup> և ուրիշներ) բազմաթիվ ուսումնասիրություններ: Առաջարկվում է գորային օդակի ղեկավարության հետ սերտ համագործակցությամբ կիրառել հիվանդությունների կանխարգելման և հիգիենայի կանոնների ուսուցման տարբեր ձևեր՝ կարևորելով իրազեկման ու քարոզչության լայնամասշտաբ համալիր միջոցառումների անցկացումը:

Ձինված ուժերում սանիտարահակահամաճարակային վերահսկողությունը հիմնականում ներառում է.

– զինված ուժերում սանիտարահակահամաճարակային ընդհանուր վիճակի, սանիտարական օրենսդրության, սանիտարահակահամաճարակային (կանխարգելիչ) միջոցառումների և վերահսկողության վերաբերյալ համապատաս-

вания организационной структуры медицинской службы Вооруженных сил в соответствии с характером современных военных конфликтов. «Военно-медицинский журнал» («ВМЖ»), 2007, № 5:

<sup>3</sup> Stu П. Мельниченко, Н. Эсауленко. Организация медицинских профилактических мероприятий в армиях зарубежных государств. «Зарубежное военное обозрение», 2001, № 7:

<sup>4</sup> Stu Л. А. Яньшин. Гигиенические аспекты обеспечения безопасности военной службы (Сообщение второе). («ВМЖ»), 2006, № 2:

<sup>5</sup> Stu В. В. Фесенко. Профилактическая медицина и здоровый образ жизни в Вооруженных силах (Сообщение второе). («ВМЖ»), 2007, № 7:

<sup>6</sup> Stu К. Hansen. Injuries by stags and physical exertions in cold weather. The diseases pattern on a military exercise. «Revue internationale des services de santé des forces armées». 1991, Vol. 64, № 10–12:

<sup>7</sup> Stu Т. L. Brown. Dressings for burn injury in a military conflict – change of practice based on current evidence. «Journal of the Royal Army Medical Corps», 2002, Vol. 148, № 3:

<sup>8</sup> Stu D. Harms. German military medicine missions and innovations. «Military Medicine», 1999, Vol. 164, № 5:

խան հրահանգների ու որոշումների պահանջների կատարման վերահսկումը,  
 – վարակիչ հիվանդությունների, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման պատճառների և տարածման պայմանների հետազոտություններ, սանիտարահակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների մշակում,

– տեղեկատվական ռեսուրսների ձևավորման նպատակով ՀՀ ՁՈՒ-ի անձնակազմի սանիտարահակահամաճարակային ապահովման ոլորտում վարակիչ, բժշկման չենթարկված հիվանդությունների, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և շրջակա միջավայրի գործոններով պայմանավորված վնասակար ազդեցությունների հետևանքների վերլուծությունների ամփոփում ու տվյալների վիճակագրական վերլուծություն:

Այս համատեքստում կարևորվում է զինված ուժերի անձնակազմի կենսապայմանների նկատմամբ բժշկական հսկողության կազմակերպումը՝ նպատակաուղղված անձնակազմի սանիտարահակահամաճարակային ապահովման ոլորտում խախտումների կանխմանը:

Հայաստանի Չինված ուժերում սանիտարահակահամաճարակային վերահսկողությունը կատարվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքին<sup>9</sup>, ՀՀ Կառավարության որոշումներին և այլ իրավական ակտերի, ՀՀ պաշտպանության և առողջապահության նախարարությունների նորմատիվային ակտերի համապատասխան: ՀՀ Չինված ուժերի սանիտարահակահամաճարակային հսկողությունը կազմակերպում է ՀՀ ՁՈՒ-ի ռազմաբժշկական վարչության հիգիենիկ համաճարակային անվտանգության ծառայությունը (ՀՀԱԾ), որը պատասխանատու է համաճարակային հսկողության համար:

Սանիտարահակահամաճարակային ապահովման շրջանակներում կարևոր նշանակություն ունեն Չինված ուժերի անձնակազմի կենսապայմանների նկատմամբ բժշկական հսկողության միջոցառումները: Չինծառայողների տեղաբաշխման վայրի նկատմամբ բժշկական հսկողության ուղղությամբ միջոցառումների շրջանակում կատարվում են անձնակազմի առողջական վիճակի գնահատում և կանխատեսում, զինծառայողների տեղաբաշխման վայրի այն առանձնահատկությունների պարզում, որոնք կարող են հանգեցնել վարակիչ ու զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման, ինչպես նաև զորամասերի, ռազմասուսումնական և այլ հաստատությունների համար կոմունալ ծառայությունների նորմատիվների պահպանման վերահսկում:

Վերջին շրջանում ակտիվորեն քննարկվում են զինծառայողների սննդի կազմակերպման բժշկական ապահովման խնդիրները, ընդ որում, կարևորվում է զինծառայողների առողջական վիճակի վրա սննդային գործոնի հնարավոր անբարենպաստ ազդեցությունների պատեհաժամ հայտնաբերման նպատակով իրականացվող հսկողությունը:

<sup>9</sup> Տես «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ 1992 թ. դեկտեմբերի 12-ի հմ. ՀՕ-43 օրենքը («ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1992, հմ. 23):



Պարենային ծառայության օբյեկտների նկատմամբ բժշկական հսկողության ժամանակ ստուգվում են սննդամթերքի (հատկապես՝ արագ փչացող) ստացման, պահման և առաքման, ինչպես նաև մթերքի խոհարարական մշակման, կերակրի պատրաստման, պահման և առաքման ընթացքում սանիտարական նորմերի պահպանումը, պարենային պահեստների, ճաշարանների, տեխնոլոգիական սարքավորանքի, ճաշարանի և խոհանոցային սպասքի վիճակը:

Զինված ուժերի ամենօրյա գործունեության մեջ հնարավոր սննդային թունավորումների դեպքում կարևոր է նաև ռազմաբժշկական ծառայության և համակարգի մյուս ենթակառուցվածքների կողմից իրականացվող միջոցառումների վերլուծության համադասավածությունը: Ընդհանրապես, սննդային թունավորումների հետաքննությունը նախատեսում է սննդային թունավորման յուրաքանչյուր դեպքի պարտադիր հաշվառում, պատճառների պարզում և դրանց վերացման նպատակով համապատասխան միջոցառումների ձեռնարկում, ինչպես նաև սանիտարահակահամաճարակային (կանխարգելիչ) միջոցառումների մշակում: Սննդային թունավորումների հետաքննությունը կատարվում է գորամասի անձնակազմի շրջանում՝ գորամասի (կայագորի) բժշկական ծառայության պետի, ինչպես նաև բուժկանխարգելիչ հաստատություններում բուժման մեջ գտնվող հիվանդների շրջանում՝ հերթապահ բժշկի, հաստատության բուժմասի պետի, բժիշկ-դիետոլոգի, համաճարակաբանի և ՀՀԱԾ-ի համապատասխան մասնագետների կողմից:

Սննդային թունավորման դեպքի հետաքննություն կատարելու համար սննդային թունավորում կասկածող և առաջին բուժօգնություն ցույց տվող բուժաշխատողը պարտավոր է (նեղ մասնագիտական (բժշկական) միջոցառումներից բացի) սննդային թունավորման մասին զեկուցել գորամասի հրամանատարին, բուժկանխարգելիչ հիմնարկության պետին, բժշկական ծառայության ավագ պետին և հիգիենիկ համաճարակային անվտանգության ծառայությանը, օգտագործումից հանել սննդի մնացած քանակությունները, որոնք կասկածելի են և կարող էին թունավորման պատճառ դառնալ, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ դրանք լաբորատոր հետազոտման ուղարկելու համար, դեռ մինչև ՀՀԱԾ-ի համապատասխան մասնագետների ժամանելն սկսել հետաքննությունը և կազմակերպել սննդային թունավորման վերացման համար անհրաժեշտ միջոցառումներ:

Պարենային ծառայության օբյեկտների հետազոտության ընթացքում գորամասի բժշկական ծառայության պետը պարտավոր է լաբորատոր հետազոտության համար նմուշ վերցնել այն սննդամթերքից, որը կարող էր լինել սննդային թունավորման պատճառ, եթե ավելի վաղ դա չի արվել: Բոլոր դեպքերում սննդային թունավորումների հետաքննությանը մասնակցում է գորամասի պարենային ծառայության պետը:

Մեր կողմից անցկացվել է անանուն հարցում՝ հոսպիտալային և գորային օղակներում կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման վերաբերյալ\*:

\* 2012 թվականին ՀՀ ՋՈՒ-ի ռազմաբժշկական համակարգում հոսպիտալային և գորային օղակներում զինվորական բժիշկ-մասնագետների, հոսպիտալային օղակում բուժում ստացող

Հարցման տվյալների վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակում:

*Աղյուսակ*

ՈԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՈՍՊԻՏԱԼԱՅԻՆ ԵՎ ՋՈՐԱՅԻՆ  
ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ\*

Հ/Հ	ՀԱՐՑԱԴՐՈՒՄ	ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	
		M±m	σ
	Բուժկանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների նկատմամբ ղեկավարության վերահսկողություն կամ ղեկավար փաստաթղթերով սահմանված կարգի համապատասխանեցում արդի պահանջներին	4,3±0,2	0,8
	Զինծառայողների համար անհրաժեշտ կենցաղային, մշտական սանիտարահակահամաճարակային պայմանների ապահովում	4,3±0,2	0,6
<b>ՀՈՍՊԻՏԱԼՆԵՐՈՒՄ ԾԱՎԱԼՎՈՂ ԲՈՒԺԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ</b>			
1.	Բուժկանխարգելիչ գործունեություն	4,7±0,1	0,6
2.	Ախտորոշիչ գործունեություն	4,8±0,1	0,7
3.	Բուժական գործունեություն	5,0±0	0
4.	Կրթական-դաստիարակչական գործունեություն	4,9±0,1	0,7
5.	Մարտական գործողությունների (դաշտային) պայմաններում բուժապասարկում	4,7±0,1	0,6
6.	Կազմակերպական-կառավարային գործունեություն	4,9±0,1	0,6
7.	Վիրաբուժական գործունեություն	4,9±0,1	0,7
8.	Սանիտարական և հակահամաճարակային կանոնների ապահովում	4,7±0,1	0,6
9.	Մասնագիտական գիտելիքների կատարելագործում	4,8±0,1	0,6
10.	Գիտահետազոտական աշխատանք	4,9±0,1	0,6

Հարցման արդյունքները վկայում են, որ հոսպիտալային օղակում բուժում ստացող զինծառայողները բարձր են գնահատում բուժկանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների նշանակությունը զինվորական ծառայության անվտանգության ապահովման գործում, և որ դրանք կարևոր նախապայ-

զինծառայողների, ինչպես նաև ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի դասախոսների ու կուրսանտների շրջանում անցկացվել են ամանուն սոցիոլոգիական հարցումներ:

\* Հարցման արդյունքների ամփոփման և գնահատականների ձևավորման ժամանակ բացարձակ թվերը դարձրել ենք միջին թվաբանական (M±m), իսկ հարցման հատկանիշների ցրվածությունը գնահատվել է ստանդարտ շեղման՝ սիզմայի (σ) միջոցով:

մաններ են հիվանդությունների կանխարգելման, ինչպես նաև բժշկական ծառայությունների հետագա ծախսերի ու ժամկետների կրճատման հարցերում:

Եվ այսպես, վերը շարադրվածից, մեր հետազոտությունների արդյունքներից և համաշխարհային առաջավոր փորձի վերլուծության հիման վրա կարող ենք հանգել հետևյալ եզրակացությունների: Հայաստանի Հանրապետության Չինված ուժերում անձնակազմի բուժապահովումը պահանջում է անվերապահորեն հաշվի առնել զինծառայողների և զորակոչիկների հետազոտման ու բուժման հավասար իրավունքը և հետևողականությունը՝ անկախ զինվորական կոչումից և զբաղեցրած պաշտոնից: Չինված ուժերի մարտունակության ամրապնդման, հիվանդությունների կանխարգելման գործում կարևոր են սանիտարահակահամաճարակային հսկողության նոր մեթոդների ներդրումը, նյութատեխնիկական պարագաների թարմացումը և հատկապես զորային օդակի առաջին գծում սանիտարական պայմանների արդիականացումը, առաջին անհրաժեշտության հիգիենայի պարագաների պարտադիր օգտագործումը (խմելու շշալցված ջուր, ձեռքի, մարմնի խնամքի միջոցներ, բերանի խոռոչի ողողման միջոցներ և այլն): Արդիական խնդիրներ են լաբորատոր հետազոտության մեթոդների համախմբի վերանայումը և համապատասխանեցումը միջազգային հիմնական ստանդարտներին՝ շարժական լաբորատորիաների և սննդի վերահսկողության միջոցների կիրառմամբ:

## ВОЕННАЯ МЕДИЦИНА

### НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ИНТЕГРАЦИИ ВОЕННОЙ МЕДИЦИНЫ И ГРАЖДАНСКОГО ЗДРАВООХРАНЕНИЯ ВО ВРЕМЯ ВОЙН

*С. Г. ГАЛСТЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор, начальник военно-медицинского факультета ЕГМУ, А. М. ДАРБИНЯН, кандидат медицинских наук, доцент, советник ректора ЕГМУ, А. В. НАЗАРЯН, майор м/с, кандидат медицинских наук, заместитель начальника военно-медицинского факультета ЕГМУ, Г. Р. ВАРДАНЯН, подполковник м/с, кандидат медицинских наук, начальник кафедры Организации медицинской службы и тактики военно-медицинского факультета ЕГМУ, Р. Г. КИРАКОСЯН, капитан м/с, кандидат медицинских наук, преподаватель кафедры Организации медицинской службы и тактики военно-медицинского факультета ЕГМУ*

#### РЕЗЮМЕ

В статье проанализированы насущные проблемы взаимной интеграции военной медицины и гражданского здравоохранения. Анализ проведен как на основе данных, опубликованных в зарубежной научной литературе (Первая и Вторая мировые войны, ВОВ, Афганская война), так и по результатам Арцахской войны и сегодняшних реалий.

Подчеркивается, что для достижения успеха в медицинском обеспечении будущих возможных войн, навязанных РА, необходима интеграция военного и гражданского секторов системы здравоохранения РА с учетом и обязательным приспособлением международного опыта и тенденций развития к местным условиям.

ЗНАЧИМОСТЬ ПРОФИЛАКТИЧЕСКИХ  
И САНИТАРНО-ПРОТИВОЭПИДЕМИЧЕСКИХ МЕРОПРИЯТИЙ  
В СИСТЕМЕ ВОЕННО-МЕДИЦИНСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ

*Р. Г. ХАЧАТРЯН, кандидат медицинских наук, советник Министра  
здравоохранения РА*

РЕЗЮМЕ

На основе анализа литературных данных и опыта ведущих стран, а также результатов научных исследований автора обосновывается решающее значение санитарно-противоэпидемических (профилактических) мероприятий по устранению или уменьшению вредного воздействия на военнослужащих факторов среды обитания, предотвращению возникновения и распространения инфекционных и массовых неинфекционных заболеваний (отравлений) и их ликвидации.

Рассматривая лечебно-профилактические мероприятия как совокупность мер по сохранению и укреплению здоровья военнослужащих, предупреждению и снижению заболеваемости, увольняемости с военной службы по болезни, смертности личного состава, а также своевременному выявлению и лечению заболевших, быстрейшему восстановлению их здоровья, а следовательно и обеспечению их высокой боеспособности, подчеркивается важность санитарно-противоэпидемических и профилактических мероприятий, организация которых должна базироваться на системе последовательных действий не только руководителей войскового звена, но и надзорных органов с применением новейших методов и методик надзора, в том числе – лабораторных исследований.

**MILITARY MEDICINE**

SOME PROBLEMS OF THE INTEGRATION OF MILITARY MEDICINE  
AND CIVILIAN HEALTH CARE IN TIMES OF WAR

*S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences, Professor, Head of the Faculty of Military Medicine of YSMU, H. M. DARBINYAN, PhD in Medicine, Assistant Professor, Advisor to the Rector of YSMU, A. V. NAZARYAN, Major of Medical Service, PhD in Medicine, Deputy Head of the Faculty of Military Medicine of YSMU, G. R. VARDANYAN, Lieutenant-Colonel of Medical Service, PhD in Medicine, Head of the Chair of Medical Service Organization and Tactics of the Faculty of Military Medicine of YSMU, R. G. KIRAKOSYAN, Captain of Medical Service, PhD in Medicine, Lecturer at the Chair of Medical Service Organization and Tactics of the Faculty of Military Medicine of YSMU*

SUMMARY

Urgent problems of mutual integration of military medicine and civilian health care are analyzed in this article. The analysis has been carried out both based on the data published in the foreign academic literature (World Wars I

and II, Great Patriotic War, Afghan War), and on the results of the Artsakh War and today's realities.

It is emphasized that for achieving success in medical support of future possible wars imposed on the RA integration of military and civilian sectors of the RA health care system is necessary. It should be done taking into account the international experience and development trends and adapting them to the local conditions.

THE SIGNIFICANCE OF PREVENTIVE  
AND SANITARY-ANTIEPIDEMIC MEASURES  
IN THE SYSTEM OF MILITARY MEDICAL SUPPORT

*R. G. KHACHATRYAN, PhD in Medicine, Advisor to the Minister  
of the RA Healthcare*

SUMMARY

The great significance of sanitary and antiepidemic (preventive) measures in eliminating or reducing deleterious effects of environmental factors on servicemen, averting the emergence and spread of infectious and mass non-infectious diseases (intoxications) and their eradication is grounded on the analysis of literary data and experience of the leading countries, as well as on the results of the author's scientific research.

Considering medical and prophylactic actions as a set of measures for preserving and promoting servicemen's health, preventing and reducing morbidity, discharge from the military service for sickness, and death-rate of the personnel, as well as for timely detecting and treating the sick, rapidly recovering their health, and thus ensuring their high fighting efficiency, the importance of sanitary-antiepidemic and preventive measures is highlighted. Their organization should be based on the system of consistent activities not only of army officers, but supervisory bodies as well, with the application of new methods and technique of control, including laboratory research.

**ԱՊՀ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (1995–1997 ԹԹ.)**

*Լ. Լ. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ, ԵՊՀ Հայոց պատմության  
ամբիոնի դասախոս*



Ներկա փուլում ԱՊՀ շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համագործակցությունը կարևոր նշանակություն ունի այդ պետությունների առջև ծառայած քաղաքական, ռազմական, տնտեսական խնդիրների լուծման համար: 21-րդ դարի սկզբին առաջ եկած նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով երկու պետությունները խորացնում և ընդլայնում են փոխգործությունը տարբեր ոլորտներում, կատարելագործում երկկողմ և բազմակողմ ձևաչափերով համագործակցության մեխանիզմները: Դա հատկապես նկատելի է ռազմաքաղաքական ոլորտում, որը նորանկախ Հայաստանի և Ռուսաստանի միջպետական հարաբերությունների ամբողջ ընթացքում եղել և մնում է առավել արդյունավետ զարգացող ոլորտը:

ԱՊՀ շրջանակներում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև համագործակցության հիմքերը դրվել են 1990-ական թթ. կեսերին, երբ հետխորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը, քաղաքական ուղեգծի որոշ տատանումներից հետո, առաջնահերթ համարեց հետխորհրդային տարածքում Ռուսաստանի ազդեցության վերականգնումը:

1994–1995 թթ. Ռուսաստանի Դաշնությունը վերանայեց իր արտաքին քաղաքական առաջնահերթությունները՝ կարևորելով հարաբերությունները ԱՊՀ երկրների հետ: Կոզիրևյան արևմտամետ քաղաքականությունն իրեն արդեն սպառել էր: Արևմուտքը Ռուսաստանին չէր ընդունում որպես իրավահավասար գործընկեր: ԱՄՆ-ը ձգտում էր միաբևեռ աշխարհի կառուցմանը, իսկ Ռուսաստանի Դաշնությունը աշխարհի բազմաբևեռ կառուցվածքի կողմնակից էր և չէր ցանկանում կորցնել ԽՍՀՄ-ից ժառանգված գերտերության կարգավիճակը: Այդ բևեռներից մեկը դառնալու, գերտերության կարգավիճակը վերականգնելու հնարավորությունները վերջնականապես չկորցնելու համար Մոսկվան պետք է արմատական փոփոխություններ կատարեր իր արտաքին քաղաքականության մեջ: Բազմաբևեռ աշխարհում ՌԴ-ն պետք է ունենար իր ազդեցության գոտիները, և այդ առումով ամենահարմարը հետխորհրդային տարածքն էր:

ԱՊՀ անդամների նկատմամբ ՌԴ քաղաքականության փոփոխությունն իր

արտացոլումն ստացավ «ԱՊՀ անդամ պետությունների նկատմամբ Ռուսաստանի ռազմավարական ուղեգիծը» փաստաթղթում, որը հաստատվեց ՌԴ Նախագահ Բորիս Ելցինի 1995 թ. սեպտեմբերի 14-ի հրամանագրով<sup>1</sup>: Այդ փաստաթղթով Համագործակցության անդամ պետությունների հետ Ռուսաստանի հարաբերությունների առաջնահերթությունը պայմանավորված էր այն բանով, որ ԱՊՀ տարածքում էին կենտրոնացած ՌԴ գլխավոր կենսական շահերը տնտեսության, պաշտպանության, անվտանգության, ռուսաստանցիների իրավունքների պաշտպանության ոլորտներում, որոնց ապահովումը կազմում էր երկրի ազգային անվտանգության հիմքը: Ռազմավարական ուղեգծում նշված է նաև, որ ԱՊՀ պետությունների հետ արդյունավետ համագործակցությունն այն գործոնն է, որը դիմագրավում է Ռուսաստանում առկա կենտրոնախույս միտումներին: Նման մոտեցում կա նաև 1997 թ. ընդունված ՌԴ ազգային անվտանգության հայեցակարգում<sup>2</sup>: Հարկ է նշել, որ ռուսաստանյան արտաքին քաղաքական ուղեգծի վերանայմանը գլխավորապես հանգեցրին Չեչնիայի անջատողական ձգտումները և 1994 թ. սկսված Առաջին չեչենական ռազմարշավը, Արևմուտքի հետ Ռուսաստանի հարաբերությունների սրումը:

ՀՀ ղեկավարությունը նույնպես, անկախության առաջին տարիներին անցնելով արտաքին քաղաքական առաջնահերթությունների որոնումների բարդ շրջան, 1990-ական թթ. կեսերին հանգեց ԱՊՀ անդամ պետությունների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցությունն ակտիվացնելու քաղաքականությանը:

Ռուսաստանի և Հայաստանի արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխությունը կարճ ժամանակահատվածում երկկողմ հարաբերություններում տվեց շոշափելի արդյունք: Սակայն ԱՊՀ շրջանակներում իրագործվող համագործակցության ոլորտում պահանջվեց բավական երկար ժամանակ միջպետական հարաբերություններին նոր որակ հաղորդելու համար, քանի որ այստեղ տարաբնույթ հակասություններն ու տարածայնություններն անհամեմատ ավելի շատ էին: Այնուհանդերձ, ՌԴ և ՀՀ արտաքին քաղաքականության փոփոխությունները ժամանակի ընթացքում անդրադառնալու էին նաև ԱՊՀ շրջանակներում տեղի ունեցող գործընթացների վրա:

ԱՊՀ-ում մեծ դերակատարություն ունեցող Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական ուղեգծի վերոնշյալ փոփոխություններից հետո, ինչպես և նախորդ տարիներին, ԱՊՀ շրջանակներում համագործակցությունն առավել արդյունավետ կերպով զարգանում էր ռազմաքաղաքական ոլորտում: 1993 թ. նոյեմբերին ընդունված ՌԴ ռազմական դոկտրինի համաձայն՝ Ռուսաստանի համար առաջնահերթություն էր ռազմաքաղաքական ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների հետ համագործակցությունը<sup>3</sup>:

<sup>1</sup> Ств «Стратегический курс России с государствами-участниками СНГ». «Дипломатический вестник», 1995, № 10:

<sup>2</sup> Ств «Концепция национальной безопасности РФ (1997 г.)». «Внешняя политика и безопасность современной России (1991–1998 гг.)», т. 2. М., 1999, с. 87:

<sup>3</sup> Ств «Основные положения военной доктрины РФ». «Россия: в поисках стратегии безопасности». М., 1996, с. 332:

Ռուսաստանի և Հայաստանի ղեկավարները, Համագործակցության այլ պետությունների ղեկավարների հետ, 1995 թ. փետրվարի 10-ին Ալմա Աթայում ստորագրեցին ԱՊՀ անդամ պետությունների «Հակաօդային պաշտպանության միացյալ համակարգի ստեղծման մասին համաձայնագիրը», իսկ 1996 թ. հունվարի 19-ին Մոսկվայում ընդունեցին «ԱՊՀ անդամ պետությունների օդային տարածքի պահպանության հայեցակարգը»<sup>4</sup>: Այս փաստաթղթերի անհրաժեշտությունը և կարևորությունը պայմանավորված էին այն բանով, որ հակաօդային պաշտպանությունը Հայաստանի և նորանկախ մյուս պետությունների պաշտպանական համակարգերի ամենաթույլ օղակներից էր: Գեներալ-լեյտենանտ Լ. Իվաշովի պնդմամբ՝ «Անկախ պետությունների համագործակցության համար ՀՕՊ-ի միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ ձեռնարկվող գործնական միջոցառումների իրականացումը ցույց տվեց, որ մասնակից երկրներից ոչ մեկն ի վիճակի չէ ապահովելու գեթ իր օդային սահմանների անվտանգությունը, քանի որ ռադիոտեղորոշումային դաշտը քայքայված է, ՀՕՊ-ի միջոցներն ու համակարգը տարաբաժանված են, իսկ դրանց տեխնիկական ապահովումը լուրջ մտահոգության տեղիք է տալիս»<sup>5</sup>: ՀՕՊ-ի միացյալ համակարգի ստեղծման մասին 1995 թ. համաձայնագիրն<sup>6</sup> ավելի սերտ համագործակցություն էր նախատեսում 1992 թ. հուլիսի 6-ի համանման համաձայնագրի<sup>7</sup> համեմատությամբ, որը, ըստ այդմ ուժը կորցրած էր ճանաչվում:

ԱՊՀ շրջանակներում Ռուսաստանը և Հայաստանը զարգացնում էին համագործակցությունը նաև իրենց արտաքին սահմանների պահպանության ոլորտում: Խորհրդային Միությանը շրջապատող «երկաթյա վարագույրի» վերացումից հետո բացվեցին նախկին խորհրդային հանրապետությունների արտաքին սահմանները, ինչը դրական երևույթների հետ մեկտեղ առաջ բերեց բազմաթիվ խնդիրներ: Այս ոլորտում փորձի պակաս ունեցող Հայաստանը և նորանկախ մյուս հանրապետությունները փոխգործության միջոցով կարող էին կարգավորել առաջացած խնդիրները: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախկին խորհրդային հանրապետությունների միջև սահմանները հստակ կերպով գծված չէին, թափանցիկ էին, անհրաժեշտ էր կատարել դրանց նոր սահմանագծում և սարքավորել միջպետական սահմանների մակարդակով, ինչը բավական ժամանակ և միջոցներ կպահանջեր: Մինչև այդ միջոցառումների իրականացումը նշված սահմանները խցելի էին անօրինական գաղթի, ահաբեկչության, թմրա-

<sup>4</sup> Տես «Соглашение о создании объединенной системы противовоздушной обороны государств-участников СНГ». «Бюллетень международных договоров» («БМД»), 1995, № 8; «Концепция охраны воздушного пространства государств-участников СНГ». «БМД», 1996, № 7:

<sup>5</sup> Լ. Գ. Իվաշով, Համագործակցության անվտանգությունը. հիմնահարցեր և հեռանկարներ: «ՀԲ», 1996, հմ. 3-4:

<sup>6</sup> Տես «Соглашение о создании объединенной системы противовоздушной обороны государств-участников Содружества Независимых Государств» от 10 февраля 1995 г. (<http://pravo.levonevsky.org/bazaby/mdogov/megd3864.htm>):

<sup>7</sup> Տես «Соглашение о системе противовоздушной обороны». «Содружество», 1992, № 6:



քիզնեսի, զենքի, զինամթերքի, ռադիոակտիվ և արգելված այլ նյութերի տեղափոխման տեսանկյունից: Հետևաբար, նշված հանրապետություններից մեկի տարածք այդ վտանգավոր երևույթների թափանցումը սպառնում էր նաև մյուս հետխորհրդային պետությունների անվտանգությանը: Նման իրավիճակում սահմանների պահպանության ոլորտում համագործակցությունը դառնում էր կենսական անհրաժեշտություն:

Դա հատկապես կարևոր էր Հայաստանի Հանրապետության համար՝ Թուրքիայի նման հարևանի առկայության պայմաններում, քանի որ վերջինս ձգտում էր ապակայունացնելու դրությունը Հայաստանում և կործանելու նորաստեղծ հայկական պետականությունը:

1992–1997 թթ. թուրքական կողմը պարբերաբար հրաձգության է ենթարկել Հայաստանի սահմանապահների դիրքերը, մասնավորապես՝ ՌԴ սահմանապահ զորքերի «Հայաստան» հատուկ խմբի սահմանապահ ուղեկալները, սահմանի մոտ անցկացրել է լայնածավալ զորավարժություններ: Ավելին. 1993 թ. հայկական ուժերի կողմից Քարվաճառի (Քելրաջար) և Ակնայի (Ադդամ) ազատագրումից հետո Թուրքիայի ղեկավարությունը հանդես եկավ Հայաստանի դեմ ուղղված ագրեսիվ հայտարարություններով, հայ-թուրքական սահմանին կենտրոնացրեց բարձր աստիճանի մարտական պատրաստության բերված զորամիավորումներ: 1994 թ. թուրքական հետախուզական ինքնաթիռներն սկսեցին ցուցադրական թռիչքներ կատարել Հայաստանի հետ սահմանի մոտ<sup>8</sup>:

Արտաքին սահմանների պահպանության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության հարցերում կարևոր դերակատարություն ուներ Ռուսաստանի Դաշնությունը, որը սահմանակից էր մի շարք հետխորհրդային պետությունների, և այդ առումով նրա հսկայական տարածքն ավելի խոցելի էր: Բացի այդ, Ռուսաստանը տվյալ բնագավառում ուներ համապատասխան փորձ, ծառայություններ, մասնագետներ, որոնք տիրապետում էին այդ ոլորտի ժամանակակից տեխնիկային ու գիտելիքներին:

ԱՊՀ կազմի մեջ չմտնող պետությունների հետ այդ կազմակերպության անդամ պետությունների սահմանների պահպանության ոլորտում համագործակցության մասին պայմանագիրը ստորագրվեց 1995 թ. մայիսի 26-ին Մյնսկում Ռուսաստանի, Հայաստանի և ԱՊՀ մյուս պետությունների ղեկավարների կողմից<sup>9</sup>: Պայմանագրի առանձին կետով նախատեսվում էր համագործակցություն սահմանապահ զորքերի տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացման, համապատասխան գիտական մշակումների, ինչպես նաև այդ զորքերին հատուկ տեխնիկայի և նյութական միջոցների արտոնյալ մատակարարման բնագավառներում: 20-րդ դարի վերջին՝ գիտատեխնիկական աննա-

<sup>8</sup> Տես *В. Ступишин*. Карабахский конфликт, 1992–1994 гг. М., 1998, сс. 37, 85; *С. Шакарян*. Политика постсоветской России на Кавказе и ее перспективы. Е., 2001, сс. 170–171; *Г. Демоян*. Турция и Карабахский конфликт в конце XX–начале XXI вв. Е., 2006, сс. 74–75, 119–123:

<sup>9</sup> Տես «Договор о сотрудничестве в охране границ государств-участников СНГ с государствами, не входящими в Содружество». «Дипломатический вестник», 1995, № 7:

խաղեպ առաջընթացի պայմաններում, դա չափազանց կարևոր էր, հասկապես, եթե հաշվի առնենք, որ կատարելագործվում էին նաև զենքի ապօրինի առքուվաճառքի և քմրանյութերի տարածման ու տարանցման միջոցները:

1996 թ. հունվարին ՌԳ արտաքին գործերի նախարար նշանակվեց Ե. Պրիմակովը: Նոր նախարարի առաջին մամլո ասուլիսից պարզ դարձավ, որ նա ԱՊՀ երկրների հետ հարաբերությունները համարում է Ռուսաստանի Դաշնության համար առաջնահերթություն<sup>10</sup>:

Ե. Պրիմակովը որպես ՌԳ արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրներից մեկն էր դիտում ԱՊՀ-ում ինտեգրման գործընթացի զարգացման համար պայմանների ստեղծումը<sup>11</sup>: Այդ խնդրի լուծումը չէր ենթադրում Խորհրդային Միության վերստեղծում այն տեսքով, որ գոյություն ուներ նախկինում, այլ նախատեսում էր հասնել ԱՊՀ շրջանակներում իրական ինտեգրման, առաջին հերթին՝ տնտեսության ոլորտում:

Այդ ոլորտում արմատական փոփոխությունների անհրաժեշտության օգտին էին խոսում տնտեսական ցուցանիշները: Չնայած ստորագրված բազմաթիվ երկկողմ և բազմակողմ պայմանագրերի առկայությանը՝ ԱՊՀ երկրների միջև առևտրի ծավալները 1990-ական թթ. կեսերին կրճատվում էին: 1993–1997 թթ. Հայաստանից ԱՊՀ երկրներ արտադրանքի արտահանման ծավալները կրճատվել էին 41 %-ով, իսկ այլ երկրներ արտահանման ծավալներն աճել էին 48 %-ով<sup>12</sup>:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի համակարգում ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման բնագավառում առաջին տեղում էին ԱՊՀ երկրները: 1995 թ. ՀՀ-ից արտահանված 270,94 մլն դոլարի արժողությամբ արտադրանքի ընդհանուր ծավալից 169,65 մլն դոլարը բաժին էր ընկնում Համագործակցության երկրներին: ԱՊՀ-ում Հայաստանի հիմնական առևտրական գործընկերը, ինչպես և խորհրդային տարիներին, շարունակում էր մնալ Ռուսաստանը: 1995 թ. ՀՀ-ից ԱՊՀ երկրներ արտահանված 169,65 մլն դոլարի արժողությամբ արտադրանքից ՌԳ բաժինը կազմել է 90,8 մլն դոլար: Այդպիսին է եղել պատկերը նաև 1996–1997 թթ.: Ներմուծման բնագավառում, 1995 թ. տվյալներով, պատկերը հետևյալն էր. ԱՊՀ երկրներից Հայաստան ներմուծված 334,04 մլն դոլարի արժողությամբ արտադրանքի ծավալից 135,11 մլն դոլարի արժողությամբ արտադրանք ներմուծվել է Ռուսաստանի Դաշնությունից<sup>13</sup>:

Մինչդեռ 1990-ական թթ. կեսերին ռուսաստանյան արտաքին առևտրում

<sup>10</sup> Տես «Ռուսաստանյան Դաշնության հարաբերությունները ԱՊՀ երկրների հետ» (ՀՀ արտաքին գործերի նախարարության արխիվ, ց. 1, գ. 122, թ. 1):

<sup>11</sup> Տես *Е. Примаков. Годы в большой политике.* М., 1999, сс. 218–219, 386–387:

<sup>12</sup> Տես *Э. Иванов. Экономическое сотрудничество Армении с Россией. «Армения: проблемы независимого развития».* М., 1998, с. 294:

<sup>13</sup> Տես *Ս. Մելքոնյան, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը:* Ե., 2002, էջ 213–214:

զգալիորեն կրճատվել էր Հայաստանի մասնաբաժինը: ԱՊՀ երկրների հետ ՌԴ-առևտրում ՀՀ տեսակարար կշիռը 1996 թ. արտահանման բնագավառում կազմել էր 0,7 %, իսկ ներմուծման բնագավառում՝ 0,4 %<sup>14</sup>:

Այդ տարիներին ձեռնարկվեցին նաև այլ քայլեր՝ ԱՊՀ շրջանակներում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ռազմական արդյունաբերության, ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցություն կազմակերպելու ուղղությամբ: 1997 թ. մարտի 27-ին ԱՊՀ անդամ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստում ընդունվեց այդ կազմակերպության երկրների ռազմատեխնիկական համագործակցության հայեցակարգը, ինչը պետք է հնարավորություն տար մշակելու ռազմատեխնիկական համագործակցության ծրագիր<sup>15</sup>: Դրա իրականացումը պետք է ապահովեր ԱՊՀ պետությունների զինված ուժերի, ինչպես նաև դաշնադրային զորքերի, հավաքական խաղաղարար ուժերի, ՀՕՊ-ի միացյալ համակարգի և պաշտպանության այլ համատեղ համակարգերի զինումը բարձրակարգ տեսակների սպառազինությամբ: Ենթադրվում էր նաև, որ ծրագրի իրականացումը կնպաստի Համագործակցության պետությունների պաշտպանական արդյունաբերության ճյուղերի կոոպերացիայի վերականգնմանն ու զարգացմանը և ռազմատեխնիկական բարձրակարգ կադրերի ու մասնագետների պատրաստման կազմակերպմանը:

Սակայն, անդրադառնալով ԱՊՀ շրջանակներում կոոպերացիայի վերականգնմանը, հարկ է նշել, որ դա կապված էր բազմաթիվ բարդությունների հետ, որոնք պայմանավորված էին Համագործակցության երկրներում շուկայական բարեփոխումների իրականացման խորության և արագության տարբերությամբ, մի շարք պետություններում անհրաժեշտ նորմատիվ-իրավական հիմքեր չլինելու հանգամանքով կամ դրանց ոչ բավարար մակարդակով:

Չնայած 1990-ական թթ. կեսերին Ռուսաստանում, Հայաստանում և ընդհանրապես ԱՊՀ երկրներում տիրող քաղաքական, տնտեսական, սոցիալական բարդ, ճգնաժամային իրավիճակին՝ 1995–1997 թթ. ՌԴ-ի և ՀՀ-ի կողմից ձեռնարկվեցին մի շարք քայլեր, որոնք ուղղված էին ԱՊՀ շրջանակներում պետությունների միջև համագործակցության ակտիվացմանը և հարաբերությունների սերտացմանը: Հաճախ այդ քայլերը լինում էին ոչ ճշգրիտ հաշվարկված և ցանկալի արդյունք չէին ապահովում: Սակայն կային ոլորտներ, որտեղ արձանագրվել են կարևոր ձեռքբերումներ: Խոսքը վերաբերում է ռազմաքաղաքական ոլորտին, մասնավորապես՝ հակաօդային պաշտպանությանը և ՀՀ պետական սահմանների պահպանությանը:

Այսպիսով՝ պաշտպանության բնագավառում հաջողությունները էական նշանակություն ունեին արտաքին քաղաքական բարդ իրավիճակում գտնվող նորանկախ Հայաստանի համար, որը չորս հարևաններից երկուսի հետ ուներ ոչ բարիդրացիական, լարված հարաբերություններ: Այդ ձեռքբերումները կարևոր

<sup>14</sup> Տես *Է. Բվանով*, Նշ. աշխ., էջ 295:

<sup>15</sup> Տես *Գ. Կուչենկո*. Вооруженные силы и военно-политический курс Армении. «Армения: проблемы независимого развития». М., 1998, с. 559:

Էին նաև Ռուսաստանի համար, քանի որ նա ձգտում էր պահպանելու գերտերության կարգավիճակը և գերակա դիրքը հետխորհրդային տարածքում: 1995–1997 թթ. ձեռնարկված քայլերը հիմք էին դառնալու հետագա տարիներին, հատկապես՝ 21-րդ դարի սկզբին, ԱՊՀ շրջանակներում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև համագործակցությունը բարձր մակարդակի հասցնելու համար:

Այսօր արդեն երկու պետությունների միջև առկա է համագործակցության բարձր մակարդակ: Մասնավորապես՝ 2013 թ. հունվարի 28-ին՝ ՀՀ Ձինված ուժերի կազմավորման 21-ամյակի առիթով, Հայաստան էին այցելել ՀԱՊԿ-ի և ՌԴ պաշտպանության մախարարության բարձրաստիճան պատվիրակություններ՝ Ն. Բորդյուժայի և Ս. Շոյգուի գլխավորությամբ<sup>16</sup>: Հանդիպումների ժամանակ նշվեց, որ նախկին պայմանավորվածությունները պատշաճ կերպով իրականացվել են, և ձեռք բերվեց նոր պայմանավորվածություն՝ ռազմական, ռազմատեխնիկական բնագավառներում ռազմավարական գործընկերությունը խորացնելու ուղղությամբ: Հունվարի 29-ին ստորագրվեց «Հայաստանում ՀԱՊԿ-ի ակադեմիա հիմնադրելու մասին» հուշագիրը<sup>17</sup>: Հայաստանը նաև ակտիվ կերպով մասնակցում է ՀԱՊԿ-ի հեռանկարային զարգացման գիտական ուղենիշների մշակմանը<sup>18</sup>:

Ներկա փուլում ստեղծվել և գործում են ՀԱՊԿ-ի արագ արձագանքման հավաքական ուժերը<sup>19</sup>, որոնց ստորաբաժանումները մի շարք գորավարժություններ են անցկացրել 2009–2012 թթ.: Առանձնահատուկ տեղ ունեն 2012 թ. սեպտեմբերին Հայաստանում անցկացված «Փոխգործակցություն–2012» համատեղ գորավարժությունները, որոնք զգալիորեն ամրապնդեցին կազմակերպության անդամ պետությունների համագործակցությունը:

<sup>16</sup> Տես «Երևան է ժամանել ՀԱՊԿ-ի պատվիրակությունը»: «Հայաստանի Հանրապետություն», 2013 թ. հունվարի 29, *նսև*՝ «ՌԴ ՊՆ պատվիրակությունը՝ ՀՀ ՊՆ վարչական համալիրում»: «Հայաստանի Հանրապետություն», 2013 թ. հունվարի 30:

<sup>17</sup> Տես «Հայաստանում կրգվի ՀԱՊԿ-ի ակադեմիա»: «Հայաստանի Հանրապետություն», 2013 թ. հունվարի 30:

<sup>18</sup> Տես Գ. Շ. Կոմանդյան. Стратегическая концепция развития коллективной безопасности ОДКБ. «Աշխատանքային տեսերթ», 2011, հմ. 1–2:

<sup>19</sup> Տես «Коллективные силы оперативного реагирования Организации Договора о коллективной безопасности». ПРЕСС-РЕЛИЗ 2010 (<http://www.dkb.gov.ru/ksor/ksor.pdf>):

# ԱՆԿԱՐԱՅՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ա. ԵՐԻՑՅԱՆ, ՀՀ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցչության  
քաղաքական բաժնի երրորդ քարտուղար



Քենալական Թուրքիայում Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցչության գործունեությունը քիչ ուսումնասիրված է: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ մի շարք խնդիրների, մասնավորապես՝ Անատոլիայում և Կովկասում պանթուրքականների գործունեության ծավալման հարցում ներկայացուցչության խաղացած դերին վերաբերող արխիվային փաստաթղթերի գաղտնագերծումն սկսվեց միայն 1990-ական թթ. երկրորդ կեսին: Վերջին տարիներին Թուրքիայում լույս են տեսել այս խնդրին նվիրված մի շարք մենագրություններ, որոնց հեղինակներն օգտվել են թուրքական արխիվների նյութերից: Դրանցում հիմնականում լուսաբանվում են Անկարայում Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցչության կապը Անատոլիա և Ստամբուլ տեղափոխված մուսավաթական վտարանդիության հետ և ներկայացուցչությունում աշխատող որոշ անձանց ներգրավվածությունը Ադրբեջանում ու Հյուսիսային Կովկասում խռովությունների կազմակերպման գործում<sup>1</sup>:

Քենալական կառավարությունը, հատկապես՝ մի շարք թուրք սպաներ, օրինակ՝ Հալիլ Քուրթը, կարևոր դեր խաղացին Ադրբեջանի խորհրդայնացման գործում՝ հանդգնելով մուսավաթական Ադրբեջանի կառավարության զինվորական նախարարի տեղակալ Ալի Շախտատինսկուն արձակել հրաման՝ 11-րդ Կարմիր բանակին դիմադրություն ցույց չտալու և հանձնվելու մասին<sup>2</sup>:

1920 թ. ապրիլին խորհրդային կարգերի հաստատումից հետո Բաքուն վերածվեց Ռուսաստանից Թուրքիա տեղափոխվող թուրք ռազմագերիների կենտրոնացման կայանի, և այս խնդրի վերաբերյալ Բաքվից Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին գրած նամակում Հալիլ փաշան (Քուրթ) նշում էր, որ Ադրբեջանում քենալական կառավարության պաշտոնական ներկայացուցչություն չլինելու հանգամանքը մեծ խնդիրների պատճառ է դառնում, և առաջարկում էր անհապաղ հարաբերություններ հաստատել Խորհրդային Ադրբեջանի կառավարության հետ<sup>3</sup>: Սակայն Անկարայի կառավարության համար այդ շրջանում խնդիրը հրատապ չէր, ավելի կարևոր էր բոլշևիկյան գործերի հետ ուղղակի շփում հաստատելու հարցը: Այդ իսկ պատ-

<sup>1</sup> Տես, օրինակ, *Betül Aslan. Türkiye-Azerbaycan İlişkileri ve İbrahim Ebilov (1920–1923)*. İstanbul, 2004; *Sebahattin Şimşir. Azerbaycan'ın İstiklâl Mücadelesi*. İstanbul, 2002, և այլն:

<sup>2</sup> Տես *Ա. Ալիազյան, Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920–1971 թթ.)*: Ե., 2011, էջ 78–79:

<sup>3</sup> Տես *Kâzım Karabekir. İstiklâl harbimiz*. İstanbul, 1995, ss. 811–812:

ճառով Հալիլ փաշային գրած նամակում Կարաբեքիրը նշում էր. «Չեր, Էնվեր և Նուրի փաշաների ներկայումս առաջնային պարտականությունը պետք է լինի խորհրդային իշխանությունը տարածել մինչև Թուրքիայի սահմանը»<sup>4</sup>:

Հետագայում քեմալական կառավարության համար Խորհրդային Ադրբեջանում ներկայացուցչություն բացելու հիմնական պատճառ եղավ ոչ այնքան թուրք գերիների վերադարձի կազմակերպման հարցը, որքան Ադրբեջանից օգնություն, առաջին հերթին՝ զենք, զինամթերք և նավթամթերք ստանալու անհրաժեշտությունը: Մ. Քեմալին 1920 թ. հուլիսի 21-ին հղած հեռագրում Ք. Կարաբեքիրը Բաքվում «պաշտոնական դեսպան» նշանակելու խնդիրը համարում էր «շատ անհրաժեշտ և անհետաձգելի»<sup>5</sup>:

1920 թ. օգոստոսի 12-ին քեմալական կառավարությունը Մեմդուհ Շևքեթին նշանակեց «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության ներկայացուցիչ Ադրբեջանում»<sup>6</sup>: ՌԻշագրավ է, որ Ք. Կարաբեքիրը, հաշվի առնելով Խորհրդային Ադրբեջանի կառավարությունում Հալիլ փաշայի ունեցած ազդեցությունը, Մեմդուհ Շևքեթի հետ «հրամանատար ընկեր Հալիլին» նամակ է ուղարկում՝ խնդրելով հնարավորինս աջակցել «ԹԱՄԺ-ի կառավարության ներկայացուցչին»՝ իր գործունեությունն արդյունավետ կերպով իրականացնելու համար<sup>7</sup>:

Սակայն, չնայած Բաքվում ԹԱՄԺ-ի կառավարության ներկայացուցչության բացմանը և Թուրքիայում ազգայնական շարժմանն աջակցելու Խորհրդային Ադրբեջանի կառավարության վճռականությանը, մինչև 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի ստորագրումը և Կարսի կոնֆերանսի նախապատրաստումը, Ադրբեջանը Անկարայում ներկայացուցչություն չբացեց: Միայն 1921 թ. հուլիսին Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը որոշում կայացրեց և Իբրահիմ Էբիլովին (Աբիլով) նշանակեց «Թուրքիայում ԱԽՍՀ լիազոր ներկայացուցիչ»: Իր որոշման մասին ԹԱՄԺ-ի կառավարությանը տեղեկացնող գրության մեջ Ադրբեջանի կառավարությունը նշում էր, որ վաղուց արդեն ցանկություն ուներ Թուրքիայում նշանակելու ներկայացուցիչ, սակայն ներքին իշխանական օղակների կազմավորման և կովկասյան հանրապետությունների հետ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը հնարավորություն չէին տալիս իրականացնելու այդ ցանկությունը<sup>8</sup>: ՌԻշագրավ է, որ Ադրբեջանը Թուրքիայում ներկայացուցիչ է նշանակում մինչև 1921 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրված Կարսի պայմանագիրը, որի համաձայն Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և քեմալական Թուրքիայի միջև պետք է ստորագրվեին հյուպատոսական համաձայնագրեր: Եվ նույնիսկ հետագայում Խորհրդային Ադրբեջանը միակ կովկասյան հանրապետությունն էր, որն Անկարայում ուներ ներկայացուցչություն, քանի որ Խորհրդային Հայաստանը ներկայացուցչություն էր

<sup>4</sup> Halil Paşa. İttihat ve Terakki'den Cumhuriyet'e Bitmeyen Savaş. İstanbul, 1997, s. 324.

<sup>5</sup> Թեթյով Ասլան, Նշ. աշխ., էջ 158:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 160:

<sup>7</sup> Տես նույն տեղում, էջ 163–164:

<sup>8</sup> Տես նույն տեղում, էջ 173:

բացել Կարսում, իսկ Վրաստանը՝ Արտվինում: Ադրբեջանը, Անկարայում ներկայացուցչությունից բացի, հյուպատոսություններ բացեց Կարսում, Տրապիզոնում ու Սամսունում: Հարաբերությունների բնույթի թելադրանքով՝ Անկարայում Ադրբեջանի ներկայացուցչությունը մյուս կողմայան հանրապետությունների ներկայացուցչությունների համեմատությամբ ամենամեծն էր՝ 28 հոգի:

Ներկայացուցչության բացման արարողությանը, որը տեղի ունեցավ 1921 թ. նոյեմբերի 18-ին, մասնակցում էր անձամբ Մուսթաֆա Զեմալը (Աթաթյուրք), որին և «հանձնվեց Խորհրդային Ադրբեջանի դրոշի բարձրացման պատիվը»<sup>9</sup>: Անկարայի կառավարության պաշտոնաթերթ «Հաքիմիյեթի Միլլիյեն» «Ադրբեջանի դրոշը մեր գլխավոր հրամանատարի ձեռքով վեր բարձրացավ» հոդվածում նշում էր, որ «աստղի ներսում գլուղացիներին և բանվորներին խորհրդանշող մուրճ ու մանգաղից բացի եղբայրական պետության դրոշը որևէ այլ բանով չի տարբերվում օսմանյան դրոշից»<sup>10</sup>: Իր ելույթում Աթաթյուրքը նշեց. «Տեսնել, թե ինչպես այսօր թուրքական օդում կողք կողքի պլեկոծվում են Ադրբեջանի և Թուրքիայի դրոշները՝ մեծ տոն է մեր ամբողջ ազգի համար»<sup>11</sup>:

Կարևոր հանգամանք է, որ Էբիլովը մինչև 1921 թ. հուլիսի 24-ին Անկարա իր ժամանելը Սամսուն քաղաքում հանդիպել է Ադրբեջանի մուսավաթական կառավարության անդամներին, այդ թվում՝ Ղարաբաղի «նահանգապետ» Խոսրովբեկ Սուլթանովին, որը վտարանդիական «Ադրբեջանալեռնական կոմիտեի» նախագահն էր<sup>12</sup>: Այս հանդիպումը նշանակալի էր այն առումով, որ հետագայում Անկարայում Ադրբեջանի ներկայացուցչությունը ոչ միայն կապ էր պահպանում ադրբեջանական քաղաքական վտարանդիության հետ, այլև ներգրավված էր Ադրբեջանում հակախորհրդային ապստամբությունների նախապատրաստման գործում՝ կապ պահովելով թուրք պանթուրքականների, մասնավորապես՝ Նուրի փաշայի և Ադրբեջանում գտնվող հակախորհրդային մուսավաթական ընդհատակի միջև: Խոսրովբեկ Սուլթանովի հետ Էբիլովի հանդիպման արդյունքը եղավ այն, որ Սուլթանովի եղբայրը՝ Մուսա Սուլթանովը, Ադրբեջանի ներկայացուցչությունում աշխատանքի ընդունվեց որպես առևտրային կցորդ, և եղբայրները հաստատեցին նամակագրական կապ<sup>13</sup>: Ինչպես նշում է հայ պատմաբան Արսեն Ավագյանը, «Այդ պատճառով Տրապիզոնում ռուսական հյուպատոս Գոլուրը 1921 թ. դեկտեմբերի 9-ին Անկարայում դեսպանություն ուղարկված նամակում առաջարկեց պարտադիր կերպով ստուգել ադրբեջանական ներկայացուցչության անդամների՝ Կովկաս ուղարկվող նամակները»<sup>14</sup>:

Անկարայում Ադրբեջանի ներկայացուցչությունը ոչ միայն Անատոլիա տեղափոխված մուսավաթական վտարանդիության միջոցով կապ էր պահպանում

<sup>9</sup> Hakimiyet-i Milliye, 20 Teşrin-i Sani, 1921.

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> *Кемаль Ататюрк. Избранные речи и выступления.* М., 1966, с. 170.

<sup>12</sup> Տես Ա. *Ավագյան*, Նշ. աշխ., էջ 107:

<sup>13</sup> Տես նույն տեղում, էջ 103:

<sup>14</sup> Նույն տեղում:

Աղբբեջանում, ինչպես նաև ամբողջ Կովկասում գործող ընդհատակի հետ, այլև ակտիվ քայլեր էր ձեռնարկում Աղբբեջան պանթյուրքական ու մուսավաթական վտարանդիների հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ: Այդ նպատակով նա թույլտվություններ էր տրամադրում մուսավաթականներին՝ նրանց ներկայացնելով որպես զոջացողների ու հայրենիք վերադառնալ ցանկացողների: Այսպես. Գիրեսուն քաղաքում Էբիլովը հանդիպում է ԱԳՀ գոյության ժամանակ Բաքվի ոստիկանապետ Մամեդովի և զնդապետ Հուսրև Քաչարի հետ և, Խորհրդային Աղբբեջանի արտաքին գործերի կոմիսար Հուսեյնովին գրած նամակում ներկայացնելով վերադառնալու նրանց ցանկությունը, հայցում է Հուսեյնովի համաձայնությունը<sup>15</sup>: Ներկայացուցչության միջոցով վերադարձածներից շատերն անմիջապես անցնում էին ընդհատակյա գործունեության:

Դժվար է ասել, թե Խորհրդային Աղբբեջանի իշխանությունները որքանով էին տեղյակ ներկայացուցչության այդ գործունեությանը, սակայն փաստ է, որ Ազեիդկոմի նախագահ Ն. Նարիմանովին համակուսակցականները մեղադրում էին ազգայնամոլության մեջ<sup>16</sup>: Կարելի է ենթադրել, որ Էբիլովն այս ասպարեզում ծավալած իր գործունեությունում վայելում էր Նարիմանովի վստահությունն ու օգտվում նրա աջակցությունից:

Աղբբեջանի ներկայացուցչության առջև դրված խնդիրների տեսակետից նրա գործունեությունը կարելի է բաժանել հետևյալ ուղղությունների.

1. Թուրքիային Աղբբեջանից ուղարկվող տնտեսական օգնություն, հիմնականում՝ նավթի ու նավթամթերքի մատակարարումների համակարգում,
2. տեղեկատվական գործունեություն ու քարոզչություն,
3. աղբբեջանական վտարանդիության վերահսկում:

Անշուշտ, ներկայացուցչության գործունեությունն ընթանում էր ՌԽԳՍՀ քաղաքականության համատեքստում, սակայն այն հանգամանքը, որ աղբբեջանական վտարանդիության հարցում ներկայացուցչությունը որդեգրել էր ուրույն գիծ, ցույց է տալիս, որ կոմունիստական գաղափարների հետ մեկտեղ շարունակում էր զարգանալ նաև համաթուրքական միասնական գաղափարախոսությունը: Այդ պատճառով հունական բանակի դեմ Անկարայի կառավարության ուժերի յուրաքանչյուր հաղթանակ անմիջապես արժանանում էր Աղբբեջանի ներկայացուցչության ջերմ արձագանքին, և Էբիլովն ընդունելություն էր կազմակերպում:

1922 թ. մարտի 6-ին Մուսթաֆա Քեմալը Խորհրդային Ռուսաստանի դեսպան Արալովին և Խորհրդային Աղբբեջանի ներկայացուցիչ Էբիլովին արևմտյան ռազմաճակատ իրեն ուղեկցելու հրավեր ուղարկեց: Ինչպես իր հուշերում նշում է Անկարայում Ռուսաստանի դեսպան Մեմյոն Արալովը, «Ինձ, Աբիլովին և ռազմական կցորդ Չվոնարևին ռազմաճակատ մեկնել հրավիրեց անձամբ Մուսթաֆա Քեմալը: Մենք ուղևորվեցինք ռազմաճակատի գծով, եղանք վեց հետևակային, երեք հեծելազորային դիվիզիաներում, մասնակցեցինք նոր բա-

<sup>15</sup> Տես *Քեթյուկ Ասլան*, Նշ. աշխ., էջ 183:

<sup>16</sup> Տես *Юрий Помпеев*. Кровавый омут Карабах. Баку, 1992, с. 202:



նակի տոնակատարությանը, այցելեցինք երկու բանակների շտաբներ, Կոնիա քաղաքում տեսանք բանակի թիկունքային կառույցները»<sup>17</sup>: 1922 թ. օգոստոսի 30-ին հունական բանակի դեմ թուրքերի տոնած հաղթանակի կապակցությամբ Բաքվում կազմակերպվեցին տոնակատարություններ, որոնց ժամանակ շենքերը զարդարվեցին Մուստաֆա Քեմալի դիմանկարներով<sup>18</sup>:

Ադրբեջանի հեղկոմ Ն. Նարիմանովին Էբիլովի ուղարկած նամակներից երևում է, որ ներկայացուցչությունը Անկարայի կառավարության շահերի արտահայտիչն էր, քանի որ մշտապես հանդես էր գալիս միջնորդություններով և առաջարկություններով՝ արագացնել կամ ավելացնել Ռուսաստանի և Ադրբեջանի կողմից քեմալականներին տրվող օգնությունը: Ընդ որում, հաճախ Էբիլովն առաջարկում էր այն աստիճանի մեծացնել քեմալականներին ցուցաբերվող օգնությունը, որ ոչ միայն Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը, այլև նույնիսկ Նարիմանովը նրա առաջարկները չափազանցված և անիրականանալի էին համարում:

1922 թ. մարտին Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմավորումից հետո, Ի. Էբիլովը ոչ միայն հետ չկանչվեց, այլև, թուրքական կառավարության անդամների և Մուստաֆա Քեմալի հետ նրա կապերի հաշվառմամբ, նշանակվեց Անկարայում Անդրկովկասյան ֆեդերացիայի ներկայացուցիչ: Հայաստանի և Վրաստանի կառավարությունները նրան տվեցին համապատասխան լիազորություններ՝ վստահելով Թուրքիայում իրենց ևս ներկայացնելու գործը: Համապատասխան հավատարմագրերը 1922 թ. նոյեմբերի 10-ին Թիֆլիսում ստորագրեցին Վրաստանի արտաքին գործերի կոմիսար Էլիավան և Հայաստանի արտաքին գործերի կոմիսար Մռավյանը<sup>19</sup>: Այսպիսով՝ Էբիլովը դարձավ Անդրկովկասյան ֆեդերացիայի ներկայացուցիչը Թուրքիայում:

Անկարայում Ադրբեջանի ներկայացուցչության գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն գործում էր ի շահ քեմալական կառավարության, որն անընդհատ ձգտում էր Խորհրդային Ռուսաստանից և Ադրբեջանից ստացվող օգնության ծավալների մեծացման, ինչպես նաև Էբիլովին օգտագործում էր որպես ԽՍՀՄ-ի վրա ազդեցության լրացուցիչ լծակ: Մյուս կողմից՝ քեմալական կառավարությունը Խորհրդային Ադրբեջանը դիտում էր որպես խորհրդային համակարգում իր դաշնակցի և թուրքական շահերը պաշտպանողի: 1920–1923 թթ. Խորհրդային Ադրբեջանը քեմալական Թուրքիայի հետ ավելի սերտ կապեր և համագործակցություն էր իրականացնում, քան մուսավաթական Ադրբեջանը, որն ստիպված էր հաշվի առնել Թուրքիայում ծավալվող ազգայնական շարժման նկատմամբ Անտանտի պետությունների դիրքորոշումը: Նույնիսկ Ադրբեջանի տարածքի ընդարձակումը, մասնավորապես՝ Նախիջևանի անջատումը Հայաստանից և միացումը Ադրբեջանին, հնարավոր դարձավ քեմալական Թուրքիայի շնորհիվ: Էբիլովի գործունեությունը ցույց է տալիս, որ

<sup>17</sup> С. И. Аралов. Воспоминания советского дипломата. М., 1960, с. 76.

<sup>18</sup> Տես *Թերյուկ Ասլան*, Նշ. աշխ., էջ 111:

<sup>19</sup> Տես նույն տեղում, էջ 269:

թե՛ նա, թե՛ Ադրբեջանի ներկայացուցչությունը վերածվել էին քեմալականների լոբբինգային կազմակերպության ոչ միայն Խորհրդային Ադրբեջանի, այլև Ռուսաստանի կառավարության առջև: Նույնիսկ «Բաքվի գավթիչ» Նուրի փաշան և նրա հետ կապված մուսավաթական քաղաքական վտարանդիությունը Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցչության կապուղին օգտագործում էին Կովկասում իրենց համախոհների հետ կապն ապահովելու համար:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ 1921–1923 թթ. Անկարայում Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցչության գործունեությունը նպաստեց թուրքական ազգայնական շարժմանը ցուցաբերվող խորհրդային օգնության մեծացմանը, ինչպես նաև հիմքեր դրեց Թուրքիայի հետ հարաբերություններում համացեղակից ադրբեջանցիների օգտագործման խորհրդային դիվանագիտության ավանդույթի ձևավորման համար:

## ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ

### СОТРУДНИЧЕСТВО МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИЕЙ В РАМКАХ СНГ (1995–1997 ГГ.)

*Л. Л. УЛУБАБЯН, лектор кафедры Армянской истории ЕГУ*

#### РЕЗЮМЕ

На современном этапе сотрудничество между Республикой Армения и Российской Федерацией в рамках СНГ развивается и расширяется во многих сферах межгосударственных отношений. Основы этого сотрудничества были заложены в середине 90-ых гг. XX века. Именно тогда политическое руководство обоих государств, после определенных колебаний внешнеполитического курса, пришло к выводу о необходимости установления тесного сотрудничества между постсоветскими государствами в различных форматах, в том числе и в рамках СНГ. Несмотря на множество проблем переходного периода, переживаемых и Арменией, и Россией, в 1995–1997 гг. им удалось вместе с другими странами Содружества достичь определенных результатов в сотрудничестве в военно-политической сфере, в частности, противовоздушной обороны и охраны государственных границ. Это имело существенное значение для Армении, находящейся в сложной внешнеполитической ситуации, в связи с напряженными отношениями с двумя соседними государствами – Азербайджаном и Турцией. Укрепление сотрудничества в рамках СНГ имело важное значение и для России, стремящейся к сохранению статуса сверхдержавы и своей доминирующей роли на постсоветском пространстве. Укрепление в 1995–1997 гг. в рамках СНГ российско-армянского сотрудничества послужило основой для его углубления и расширения в последующие годы, в том числе и в начале XXI века.

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПРЕДСТАВИТЕЛЬСТВА СОВЕТСКОГО  
АЗЕРБАЙДЖАНА В АНКАРЕ

*А. А. ЕРИЦЯН, третий секретарь политотдела Посредства НКР в РА*

РЕЗЮМЕ

Отношения Советского Азербайджана с Турцией в свете деятельности его представительства в Анкаре мало изучена. На основе архивных материалов и валидных научных источников в статье представлена деятельность представительства, заключающаяся в основном в установлении связей с эмигрантами, организации их возвращения в Азербайджан для организации подрывной деятельности. Освещена также роль турецких офицеров в советизации Азербайджана.

**MILITARY-POLITICAL HISTORY**

THE COOPERATION BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA  
AND THE RUSSIAN FEDERATION  
WITHIN THE CIS FRAMEWORK IN 1995–1997

*L. L. ULUBABYAN, Lecturer at the Chair of Armenian History, YSU*

SUMMARY

At present the cooperation between the Republic of Armenia and the Russian Federation within the framework of the CIS is being developed and expanded in many spheres of interstate relations. The foundation of this cooperation was laid in the middle of 90s of the 20th century. It was then that the political leadership of both countries after certain fluctuations in the foreign policy came to the conclusion that it was necessary to establish close cooperation among post-Soviet states in various formats, including that of the CIS. Despite the array of transition period problems experienced by both Armenia and Russia, they, together with other countries of the Commonwealth, managed to achieve certain results in cooperation in the military-political sphere in 1995–1997, particularly, in the spheres of air defense and protection of the state borders. It was essential for Armenia facing difficult foreign-policy constraints due to the tense relations with the two neighboring countries – Azerbaijan and Turkey. Strengthening the cooperation within the framework of the CIS was of great importance for Russia as well, seeking to maintain the status of a superpower and its dominant role in the post-Soviet space. The consolidation of the Russian–Armenian cooperation within the framework of the CIS in 1995–1997 served as a basis for its intensification in subsequent years, including the early 21st century.

THE ACTIVITY OF THE MISSION OF SOVIET AZERBAIJAN  
IN ANKARA

*A. A. YERITSYAN, 3<sup>rd</sup> Secretary of the Political Section of the Permanent Mission  
of the NKR to the RA*

SUMMARY

The relations of Soviet Azerbaijan with Turkey in the light of the activity of its mission in Ankara have been little studied. Based on the archival materials and valid scientific sources this article presents the activities of the Azerbaijani mission, consisting generally in liaising with emigrants, organizing their homecoming to Azerbaijan for performing subversive operations. The role of Turkish officers in the sovietization of Azerbaijan is covered as well.

ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌՈՒ ԳԱՎԱՌՈՒՄ  
(19-ԲԴ Դ. ԱՌԱՋԻՆ ԵՐԵՄՆԱՄՅԱԿ)

Հ. Հ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող



19-րդ դ. սկզբին ստեղծված նպաստավոր ռազմաքաղաքական իրադրությունում ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ծրագրի իրագործմանը: 1801 թ. սեպտեմբերի 12-ի հռչակագրով պաշտոնապես ամրագրվեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին, և այն դարձավ Ռուսական կայսրության վարչատարածքային միավորներից մեկը: Այդպիսով Ռուսաստանին միացան նաև Արևելյան Հայաստանի՝ Արևելյան Վրաստանի կազմի մեջ մտնող հյուսիսային շրջանները՝ Լոռին,

Փամբակը, ինչպես նաև Ղազախն ու Շամշադինը:

Այդ պահից սկսած Ռուսական կայսրությունը կարևորեց Լոռու գավառը բնակչությամբ համալրելու, Անդրկովկասն իր համար ամուր և հուսալի ռազմական, տնտեսական գոտու վերածելու խնդիրը: Կովկասի ռուսական պետական պաշտոնյաները, ռուսական բանակի զորապետները կայսրին և բարձրագույն հրամանատարությանն ուղղված իրենց զեկուցագրերում նշում էին Լոռու վերաբնակեցման կարևորությունն ու օգտակարությունը<sup>1</sup>: Պարսից Աղա Մահմադ խանի արշավանքներից հետո մասամբ ամայացած Լոռին վերաբնակեցնելը շահավետ էր մի քանի տեսանկյունից: Նախ. քանի որ տարածքը սահմանամերձ գոտի էր, առաջնային էին դառնում ռազմական անվտանգության ապահովման ռազմավարական խնդիրները և նկատառումները: Երկրորդ. տնտեսական առումով՝ բնակիչները հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու դեպքում մեծ շահույթ կբերեին պետությանը, իսկ մի քանի տարի անց նրանցից նաև հարկեր կգանձվեին:

<sup>1</sup> Տես «Акты, собранные Кавказской археографической комиссией» (այսուհետև՝ «ԱԿԱԿ»), տ. 2. Тифлис, 1868, док. 383, с. 204, док. 384, с. 205, док. 392, с. 211, док. 405, с. 216, док. 1229, с. 615 (<http://www.runivers.ru/bookreader/book9487/#page/205/mode/1up>); «ԱԿԱԿ», տ. 4. Тифлис, 1870, док. 252, с. 171 (<http://www.runivers.ru/bookreader/book9489/#page/175/mode/1up>); «ԱԿԱԿ», տ. 5. Тифлис, 1873, док. 145, с. 111 (<http://www.runivers.ru/bookreader/book9490/#page/1/mode/1up>); «Присоединение Восточной Армении к России». Сборник документов. Под ред. Ц. П. Агаяна, т. 1. Е., 1972, док. 169, сс. 197–198, док. 171, с. 202, док. 186, с. 240:

Այս ծրագրի իրականացման նպատակով գործի դրվեցին բոլոր հնարավոր միջոցները: Ծրագրվեց Լոռիում վերաբնակվողներին տալ մեծ արտոնություններ, այդ թվում՝ հինգ տարով ազատել հարկերից, պետական միջոցներով նրանց համար հացահատիկ գնել և այլն: Սակայն ցարական իշխանությունները բախվեցին լուրջ խոչընդոտների: Մեկն այն էր, որ Լոռու գյուղերի մի մասը վանքապատկան էր (պատկանում էր Օձունի, Սանահինի կամ Հաղպատի վանքերին), իսկ մյուս մասը՝ կալվածատիրական (պատկանում էր Լորիս-Մելիքյան, Քալանթարյան, Շահվերդյան, Արղության և այլ տոհմերին): Այդ պատճառով ինքնակալությունը որդեգրեց հողը պետականացնելու քաղաքականություն: Դրա անհրաժեշտությունն զգացվեց, հատկապես, երբ ռուսական իշխանություններն իրենց ձեռքն առան Ալավերդու, Ախթալայի և Շամլուղի պղնձահանքերի շահագործումը: Ռուսական կառավարությունն սկսեց հողերը գնել կալվածատերերից և Լոռու հողերի մի մասը վերածվեց պետականի: Հաջորդ քայլը պետք է լիներ այդ հողերի բնակեցումը ռուսահպատակ բնակչությամբ՝ հարկատու միայն պետությամբ<sup>2</sup>:

Դարասկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները նպաստավոր պայմաններ ստեղծեցին այդ ծրագրի իրականացման համար: Պատերազմներն ուղեկցվեցին հայ բնակչության տեղահանություններով: Ցարական արքունիքը ամեն կերպ խրախուսում էր քրիստոնյաների տեղափոխումն այդ տարածքներ, քանի որ նրանք հուսալի հենարան կլինեին մահմեդական Թուրքիայի և Պարսկաստանի դեմ հնարավոր պայքարում:

1801 թ. հազարավոր հայեր բնակվեցին Վրաստանում, այդ թվում՝ Լոռիում: 1801 թ. հունիսին ստանալով միացման լուրը՝ սահմանակից թուրքահպատակ ախալցխացիներից 17 ընտանիք (120 շունչ) գաղթեց Վրաստան: 1803 թ. ամռանը Կովկասում ռուսական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Պ. Յիցիանովը, օգտվելով Ախալցխայի փաշայությունում ստեղծված խառնաշփոթ իրավիճակից, քրիստոնյաների նոր ընտանիքներ տեղափոխեց Վրաստան<sup>3</sup>:

Կովկասի լեռնային վարչության պետ կոմս Ա. Մուսին-Պուշկինը կառավարությանն առաջարկեց նոր եկածներով բնակեցնել հատկապես Լոռու տարածքը, որովհետև պղնձի արտադրությունը հետզհետե ընդլայնվում էր, իսկ աշխատող ձեռքերի պահանջումը՝ մեծանում: Պ. Յիցիանովը 1804 թ. փետրվարին Ա. Մուսին-Պուշկինին խորհուրդ տվեց Լոռու շրջանը բնակեցնել Երևանից եկած հայերով: Մուսին-Պուշկինը 1804 թ. հունիսի 9-ին գրել է, որ Լոռու բնակեցման նպատակով Վրաստանին սահմանակից տարածքների բնակիչներին կոչ է արել տեղափոխվելու: Այդ կոչին արձագանքելով՝ շատ հայեր ցանկություն հայտնեցին տարբեր վայրերից գալու և բնակվելու Լոռիում:

<sup>2</sup> Ств В. А. Помто. Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях. Т. 3 «Персидская война 1826-1828 г.», выпуск 1-4. СПб., 1888, сс. 721-722 (<http://www.runivers.ru/bookreader/book58707/#page/529/mode/1up>):

<sup>3</sup> Ств У. У. Шенгунյան, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին: Ե., 2003, էջ 155:

1804 թ. հունիսին Ախուրյանի ավին՝ Փոքր Դարաքիլիսայի մոտ, տեղի ունեցած ճակատամարտում ռուսական զորքերի հաղթանակի շնորհիվ Երևանի խանի կողմից արտաքսված հայ ընտանիքների մի մասի համար հնարավորություն ստեղծվեց անցնելու Լոռի-Փամբակ և ապաստան գտնելու ռուսական հպատակության ներքո: Անհաջող Երևանյան արշավանքից հետո Երևանի խանությունից Փամբակ տեղափոխվեցին ևս բազմաթիվ ընտանիքներ<sup>4</sup>: Ցիցիանովն շտապեց օգտվել այդ հանգամանքից և Հովհաննես արքեպիսկոպոսին հանձնարարեց Երևանի խանությունից եկած հայ բնակիչներին ուղարկել Վրաստանի կազմում ընդգրկված հայկական տարածքներ<sup>5</sup>: Նպատակն այն էր, որ նրանք ընդմիջտ լինեն ռուսական հպատակներ: 1804 թ. հունիսի 13-ին Ցիցիանովը կոմս Մուսին-Պուշկինին գրում է. «Թիֆլիսից Փամբակ ուղարկեցի հայազգի արքեպիսկոպոս Յովհաննեսին (Հովհաննես Գեղարդակրին—Հ. Ա), որպեսզի նա յորդորէր նոցա մեր կողմն անցկենալու...»<sup>6</sup>: Ապա ավելացնում է, թե վերոհիշյալ ընտանիքներից մոտ 2000 տուն արդեն տեղավորել է Լոռի ամրոցի մոտակայքում: Արքեպիսկոպոսը, կատարելով հանձնարարությունը, փախստականներին խորհուրդ տվեց մնալ Լոռիում<sup>7</sup>:

Ցարական իշխանություններն ամեն գնով շարունակեցին վերաբնակեցման քաղաքականությունը՝ անգամ անտեսելով էթնիկական սկզբունքները, ինչի հետևանքով ի հայտ եկավ նաև տարածաշրջանի՝ թուրքական տարրով բնակեցվելու վտանգ: Այսպես. 1803–1805 թթ. ռուսները բանակցություններ վարեցին թուրքական տիրապետության տակ գտնվող տարածքներ անցած Փամբակի աղալարների և նրանց հպատակ թաթարների հետ՝ փորձելով համոզել, որ վերադառնան բնակության նախկին վայրերը և ընդունեն ռուսական հպատակություն: Որոշվեց նաև կարափափախներին\* և թաթարների մի մասին բնակության վայրեր հատկացնել Լոռիում:

1805 թ. Երևանի խանությունից Փամբակում ապաստան գտան ևս 200 հայ և 400 մահմեդական ընտանիքներ: Գեներալ Պ. Ցիցիանովը Ջաֆար Կուլի խանին 1805 թ. հոկտեմբերի 15-ի նամակով խոստացավ, որ իր հպատակներով Լոռիում բնակություն հաստատելու դեպքում նրանց այդտեղ կտրամադրվի տարածք՝ տներ կառուցելու, հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու համար<sup>8</sup>: Սակայն մահմեդականները շահագրգռված չէին սարելու քրիստոնեա-

<sup>4</sup> Տես Ծ. Պ. Աղայան, Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Ե., 1981, էջ 202:

<sup>5</sup> Տես «Утверждение русского владычества на Кавказе», т. 1. Тифлис, 1901, с. 136 (<http://www.runivers.ru/bookreader/book18681/#page/158/mode/1up>):

<sup>6</sup> Ա. Երիցիան, Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետությունների մէջ: «Փորձ» ամսագիր, Թիֆլիս, 1877–1878, հմ. 2, էջ 390:

<sup>7</sup> Տես Հ. Ոսկերչյան, Ցիցիատակարան ազգային արդեան պատմութեան համար: «Կոունկ հայոց աշխարհին» ամսագիր, 1862, ապրիլ, էջ 295:

\* Կարափափախները թուրքական ցեղեր էին, որոնք Ախալցխայի փաշայությունում հայտնվել էին 18-րդ դ. վերջերին՝ Բորչալուի և Շամշադինի շրջաններից:

<sup>8</sup> Տես «АКАК», т. 2, док. 1790, с. 867 (<http://www.runivers.ru/bookreader/book9487/#page/205/mode/1up>):

կան երկրի տիրապետության տակ: 1805 թ. հոկտեմբերի 17-ին գեներալ Պ. Նեսվետսկը Պ. Ցիցիանովին գեկուցում է, որ Ջաֆար Կուլի խանն իր հպատակներով նախընտրում է բնակություն հաստատել Թալիմում:

1805 թ. գեներալ Նեսվետսկը գրավեց Արթիկը, ապա շարժվեց Էջմիածին և Արարատյան դաշտով վերադարձավ Շիրակ, այնուհետև՝ Փամբակ: Նա իր հետ տարավ Արարատյան դաշտից իրեն միացած 12 գյուղերի հայ բնակչությանը, «որոց զոմանս թողեալ են ի Շիրակաւանն, զոմանս ի Բամբակաձոր ե զոմանս բերին ի քաղաքս (Թիֆլիս—Հ. Ա)»<sup>9</sup>: Մայիսի 12-ին Նեսվետսկը Ցիցիանովին գեկուցեց, որ ընդհանուր առմամբ Երևանի գյուղերից ռուսական տարածքներում բնակեցրել է 357 ընտանիք, որոնցից 200-ը՝ Փամբակում և Շորագյալում<sup>10</sup>:

1805 թ. ամռանը Երևանից տեղափոխվել ցանկացան նաև տեղում մնացած մյուս հայերը: Ցիցիանովը դարձյալ գրեց Հովհաննես արքեպիսկոպոսին՝ «խրաքանչիւր գերդաստանին կը հրամայեմ տալ պատրաստի տուն, այգի և արտ»<sup>11</sup>: Հրապտուրվելով այս խոստումներով՝ հայերը խմբերով Երևանի շրջակայքից շարժվեցին դեպի Փամբակ:

1806 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմի ընթացքում արևմտահայերից շատերը սպասում էին հարմար առիթի՝ կյանքի և գույքի ապահովություն խոստացող կայսերական տարածքներ տեղափոխվելու համար: Ցիցիանովը խրախուսում էր օսմանյան մահանգներից ներգաղթը՝ շարունակելով թուրքահպատակ քրիստոնյաներին տեղափոխել նոսր բնակչությամբ Վրաստան ու Լոռի: 1804–1807 թթ. Կարսի փաշայությունից տեղափոխված հայերի մի մասը ռուս հրամանատարների աջակցությամբ բնակություն հաստատեց Փամբակում: Ներսես Աշտարակեցին հորդորեց Կարսից Լոռիում ապաստանած հայերին՝ հետևել նոր երկրի պետական օրենքներին<sup>12</sup>:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս պատերազմի ընթացքում ռուսները, ելնելով ռազմավարական շահերից, խրախուսեցին ոչ միայն քրիստոնյաների ներգաղթը Արևելյան Հայաստան, այլև ձգտեցին վերադարձնելու մահմեդական այն ընտանիքներին, որոնք Լոռու, Փամբակի և Բորչալուի տարածքներից փախել էին թուրքական տիրապետության վայրեր: Սակայն մահմեդականները նախկինի պես խուսափում էին ռուսական հպատակություն ընդունելուց: ՌԻստի միայն 8 ընտանիք անցավ սահմանն ու բնակություն հաստատեց Փամբակում: Ռուսական իշխանությունները համառորեն շարունակեցին փորձերը՝ դիմելով զանազան միջոցների, ինչը թելադրված էր դեռևս անբնակ մնացած նվաճված տարածքները բնակեցնելու անհրաժեշտությամբ:

1809 թ. մայիսին ռուսները փորձեցին Կարսի, Բայազետի ու Ախալցխայի զավառներից բնակչության նոր խմբեր տեղափոխել Լոռի: Ախալցխայի փաշա-

<sup>9</sup> *Գիւր քսիանայ Աղանեսնց*, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ե.: Թիֆլիս, 1902, էջ 443:

<sup>10</sup> Տես «Присоединение Восточной Армении к России», т. 1, док. 234, с. 307:

<sup>11</sup> *Ա. Երիցեան*, Նշ. աշխ., էջ 391:

<sup>12</sup> Տես Մատենադարան, Ներսես Աշտարակեցու, թղթ. 165, վավ. 682, նույն տեղում, թղթ. 166ա, վավ. 78:



յությունից՝ Կոթելիա գյուղից եկած և Թիֆլիսի շրջակայքում հաստատված 57 ընտանիքների գեներալ Ա. Տորմասովը հորդորեց տեղափոխվել Լոռի<sup>13</sup>։ Նա անգամ կայսեր անունից պարզևատրում խոստացավ՝ Լոռիում նոր բնակիչներ տեղավորելու դիմաց։

1811 թ. մարտի 6-ի գրությամբ մայր Մաչաբելովին հանձնարարվեց ներգաղթողներին տալ հարկային արտոնություններ, ինչպես նաև «թույլատրել Լոռիում բնակվել բոլորին, ովքեր ձեր ջանքերով կգան սահմանի (թուրքական – Հ. Ա) այն կողմից»<sup>14</sup>։ 1811 թ. օգոստոսի 31-ին Տորմասովը գաղտնի խորհրդական Օ. Կոզոդավևին տեղեկացրեց, որ նախատեսել է Կոթելիա գյուղի բնակիչներից 500 հոգու հողեր տրամադրել Լոռիում։

Կարսի և Ախալցխայի փաշայություններից հայերի ներհոսքը Լոռի շարունակվեց նաև հաջորդ տարիներին։ Թուրքիայի սահմանային շրջանները ամայացնելու նպատակով ցարական կառավարությունը վերաբնակվողներին խոստացավ նոր արտոնություններ։

1811 թ. աշնանը Ախալցխայի ու Կարսի սահմանների ռուսական զորքերի հրամանատար գնդապետ Դ. Լիսանևիչը եռանդուն գործունեություն ծավալեց Լոռի նոր ներգաղթ կազմակերպելու ուղղությամբ։ Նոյեմբերի 7-ին նա Պաուլուչիին գրեց. «Լոռու տափաստանի վերաբնակեցումը միանգամայն օգտակար է...և ես այնտեղ բնակվել ցանկացողներին պատրաստ եմ տալու ցանկացած արտոնություն»<sup>15</sup>։ Փամբակից ու Շորագյալից փախած թաթարներին վերադարձնելու համար նրանց առաջարկվեց երեք տարով ազատել հարկային պարտավորություններից։ 1812 թ. հունվարին գեներալ Ֆ. Պաուլուչին առաջարկեց մինչև գարուն լուծել Լոռու բնակեցման հարցը՝ ի հաշիվ 57 ջավախքի ընտանիքների, Փամբակում գտնվող Կարսի թաթարների 100 ընտանիքի և Փամբակում ու Շորագյալում հաստատված 38 հայ կաթոլիկ ընտանիքների։

1812 թ. մարտի 27-ին Ֆ. Պաուլուչին խնդրագիր հղեց Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Պ. Ջավիլեյսկուն՝ առաջարկելով Կարսի փաշայությունից եկած բնակիչներին բնակեցնել Լոռիում։ Այդ ջանքերի շնորհիվ 85 մահմեդական և 15 հայ ընտանիքներ իրենց համայնքի առաջնորդ Աբդուլա աղայի գլխավորությամբ անցան ռուս-թուրքական սահմանը՝ Լոռիում բնակություն հաստատելու համար։ Գեներալ Պաուլուչին ձեռնարկեց շուտավույթ քայլեր՝ վերաբնակվողների համար Փամբակի բնակիչների օգնությամբ Լոռիում տներ կառուցելու, պետական գանձարանի միջոցով նրանց անհրաժեշտ սնունդով ապահովելու և հարկային արտոնություններ շնորհելու ուղղությամբ։

Որոշվեց ստեղծել գաղթականության ընդունման և տեղավորման հանձնաժողով, որը մինչև 1812 թ. գարուն պետք է զբաղվեր Վրաստանում և Փամբակում

<sup>13</sup> Տես Ա. Ա. Մեյրոնյան, Ժողովրդագրական տեղաշարժերը Ջավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին։ «Իրան-նամե», 1998, հմ. 1-2-3, էջ 14։

<sup>14</sup> «АКАК», т. 4, док. 50, с. 52 (<http://www.runivers.ru/bookreader/book9489/#page/175/mode/1up>).

<sup>15</sup> «АКАК», т. 5, док. 145, с. 111 (<http://www.runivers.ru/bookreader/book9490/#page/1/mode/1up>).

հաստատված ջավախեցիներին, ախալցխացիներին ու կարսեցիներին Բորչալուի գավառում տեղավորելու խնդիրներով:

1821–1822 թթ. բուրք-պարսկական պատերազմը Արևմտյան Հայաստանից նոր ներգաղթի պատճառ դարձավ: Ռուսական հրամանատարությունը շարունակեց վերահսկել այդ գործընթացը: 1821 թ. հուլիսի 29-ի հմ. 62 փաստաթղթից տեղեկանում ենք, որ գեդապետ Լ. Սևարամիձեին հանձնարարվեց Թուրքիայից ու Պարսկաստանից եկածներին բնակեցնել Լոռու տափաստանում<sup>16</sup>:

1822 թ., երբ 12 հազարանոց պարսկական բանակը պաշարեց Կարսը, նոր քափ ստացավ հայերի տեղաշարժը Կարսի փաշայությունից, Էրզրումից ու Բայազետից դեպի Փամբակ:

1828 թ. վերջերին վերաբնակեցման և գաղթականների վիճակի բարելավման համար հատկացվեց 90 հազար ոսկի, ինչը պետք է մեծացներ Ռուսական կայսրության ազդեցությունը նրանց վրա և, հանձինս նրանց՝ պետությունը կունենար հարկատու հպատակներ:

1829 թ. դեկտեմբերի 3-ին Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար Ի. Պասկևիչը Վրաստանի քաղաքացիական նահանգապետին տեղեկացրեց, որ զեներալ-լեյտենանտ Ն. Պանկրատևը Կարսի փաշայությունից 95 ընտանիքների անցագրեր է տվել Լոռիում բնակվելու համար<sup>17</sup>: Իսկ 1830 թ. հունվարի 22-ին ռուսական բանակի Գլխավոր շտաբի պետ Ա. Չերնիշևին ներկայացրած զեկուցագրում նշեց, որ իր կարգադրությամբ Կարսից և նրա շրջակայքից մոտ 2500 ընտանիք բնակեցվել է Փամբակի ուղեմասում (դիստանցիայում): Դեռ 1829 թ. հունվարի 5-ին կայսրին Պասկևիչի ներկայացրած նախագծի հիման վրա կարսեցիների մի մասը պետք է տեղավորվեր Փամբակ-Շորապալի ուղեմասում<sup>18</sup>: Նրանց մի մասը հաստատվեց Ղարաքիլիսայում. «Գիւմիշխանցի եօթանասուն տուն յոյներ, – գրում է Գիւտ քահանա Աղանեանցը, – ընտրեցին Փամբակի Ղարաքիլիսե աւանը՝ կարսեցիների հետ այնտեղ բնակուելու»<sup>19</sup>:

1830-ական թթ. ցարական Ռուսաստանը ծայրամասային գավառներում իր դիրքերն ամրապնդելու նպատակով գործարկեց Հայաստանում ռուս զինվորականների և աղանդավորների վերաբնակեցման ծրագիրը: Կառավարության նպատակն էր Երևանի և Թիֆլիսի նահանգներն իրար միացնող ուղեհանգույցներում ստեղծել ուժեղ հենակետեր: Լոռին Հայաստանի մյուս գավառներն ու Ռուսաստանը կապող օղակ էր, ուստի մեծ թվով ռուսներ բնակեցվեցին հենց Տաշիր-Լոռիում<sup>20</sup>: Հիմնվեցին ռուսաբնակ Նովոպոլկովկա

<sup>16</sup> Տես «Присоединение Восточной Армении к России», т. 2. Е., 1978, док. 62, с. 87:

<sup>17</sup> Տես Ա. Ս. Հայրապետյան, Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին: Գյումրի, 2005, էջ 79:

<sup>18</sup> Տես Հ. Ղ. Մուրադյան, Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին: Ե., 2006, էջ 165–181:

<sup>19</sup> Գիւտ քահանայ Աղանեանց, Կարնոյ գաղթը: Թիֆլիս, 1891, էջ 10–12:

<sup>20</sup> Տես Ա. Ս. Հայրապետյան, Հայաստանի ռուս վերաբնակիչները (1830–1920): 1989, էջ 34, նաև՝ Հ. Մարգարյան, Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում (1850–1900): «Բանբեր Երևանի հասարակական», 1990, հմ. 1, էջ 115:

(ՈՒրասար), Պրիվոլնոյե, Վորոնցովկա (Կալինինո, ներկայումս՝ Տաշիր) և այլ գյուղեր:

Այսպիսով՝ 19-րդ դարի 30-ական թթ. Ռուսական կայսրության որդեգրած ժողովրդագրական քաղաքականությունն առաջին հերթին պայմանավորված էր այդ տարածքներում իր իշխանությունն ամրապնդելու հեռամետ նպատակներով: Հետևաբար հայ ազգաբնակչության տեղաշարժերը պայմանավորված էին հիմնականում քաղաքական նկատառումներով: Անշուշտ, պետք չէ մոռանալ նաև տնտեսական դրդապատճառները, այն է՝ Անդրկովկասը դարձնել ցարական Ռուսաստանի հումքային «կցորդը»:

Մինևույն ժամանակ, Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ծրագրի կենսագործումը հիմնականում համապատասխանում էր հայ ժողովրդի՝ բուրքական և պարսկական լծից ազատագրվելու վաղեմի ձգտումներին: Արևելահայ և, հատկապես՝ արևմտահայ ստվար զանգվածներ՝ անձի ու գույքի ապահովություն ձեռք բերելու ակնկալիքով, ցանկություն հայտնեցին տեղափոխվելու ռուսական տիրապետության տակ անցած տարածքներ, այդ թվում՝ Լոռի:

Հարկ է նշել, որ, չնայած գործադրած ջանքերին, ռուսական իշխանությունների ծրագիրը իրագործվեց ոչ ամբողջովին: Պատճառն այն էր, որ Լոռին, մինչև 19-րդ դ. 30-ական թթ. լինելով պատերազմական վիճակում, բնակչության համար այնքան էլ ապահով չէր: Բացի այդ, նոր բնակավայրերում չկային ապրելու տարրական պայմաններ, կենսամակարդակը բավարար չէր:

Սակայն Անդրկովկասում ամրանալուց հետո ցարիզմը փոխեց տեղի բնակչության նկատմամբ իր քաղաքականությունը՝ որդեգրելով գաղութատիրական քաղաքականություն, մասնավորապես՝ վարչական տարածքների կամայական բաժանում, ազգամիջյան բախումների հրահրում և այլն: Այդ ամենի զագաթնակետը դարձավ հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12-ի օրենքը:

Այսպիսով՝ Անդրկովկասում ցարական կառավարության վարած ժողովրդագրական քաղաքականության նպատակը այդ տարածքներում իր իշխանությունը ամրապնդելն էր:

## ИСТОРИЯ

### ДЕМОГРАФИЧЕСКАЯ ПОЛИТИКА ЦАРСКОГО ПРАВИТЕЛЬСТВА В ЛОРИЙСКОЙ ОБЛАСТИ (ПЕРВАЯ ТРЕТЬ XIX ВЕКА)

*А. О. АМИРДЖАНИЯ, кандидат исторических наук,  
научный сотрудник Института истории НАН РА*

#### РЕЗЮМЕ

В начале XIX века северные области Восточной Армении, входившие в состав Восточной Грузии, в том числе Лори, были присоединены к Российской Империи.

К этому времени эти территории в результате разорительных походов

персидского шаха Ага-Мохаммеда-хана в значительной степени обезлюдели. Поэтому военные власти, стремясь заселить эти новые территории благонадежным для себя населением, начали осуществление иммиграционной политики, в результате которой за годы русско-персидской и русско-турецкой войн большое число армянских семей переселилось из других областей Восточной Армении и из Западной в Лори. Данная политика осуществлялась посредством предоставления мигрантам существенных льгот.

Однако после утверждения своего безусловного господства в Закавказье царизм изменил свою политику на колониальную, сопровождавшуюся этническими и конфессиональными притеснениями, инициированием межнациональной вражды и столкновений.

## HISTORY

### THE DEMOGRAPHIC POLICY OF THE TSARIST GOVERNMENT IN LORI REGION (THE FIRST THIRD OF THE 19th CENTURY)

*H. H. AMIRJANYAN, PhD in History, Researcher at the Institute of History, NAS, RA*

#### SUMMARY

The northern regions of Eastern Armenia, forming a part of Eastern Georgia, including Lori, were annexed to the Russian Empire in the early 19th century.

By that time those territories were considerably depopulated as a result of ravaging campaigns of the Persian Shah Agha Mohammad Khan. Therefore, the military authorities seeking to settle these new territories with population reliable for them began implementing immigration policy. It resulted in the resettlement of Lori with a great number of Armenian families from other regions of Eastern and Western Armenia during the Russian-Persian and Russian-Turkish Wars. This policy had been administered through granting considerable benefits to the migrants.

However, Tsarism changed its policy into colonial one accompanied with ethnic and confessional oppressions, initiation of interethnic animosity and conflicts after establishing its unchallenged supremacy in Transcaucasia.

**ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ**

*Դ. Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ, Ա. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,  
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Զ. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր*

**ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ**

անկայծման քանելակարգ – мерцающий режим; flashing regime, blinking regime	огонь; volley fire
ավիազորակայան – авиабаза; air force base	համալիր – комплекс; complex
ավիահանում – высадка; 1. debarkation, 2. landing	– ինքնավար զենիթահրթիռային համալիր – автономный зенитно-ракетный комплекс; autonomous air defense missile system
գոյունակություն – живучесть; survivability, viability	– մերձահար համալիր – комплекс ближнего действия; short-range complex
գատորոշում – распознавание; recognition	– վրագետնյա համալիր – наземный комплекс; ground complex
իրադրություն – обстановка; situation	հայեցակարգ – концепция; concept
– աշխարհատարածական իրադրություն – геопространственная обстановка; geospatial situation	– կայանքակենտրոն պատերազմի հայեցակարգ – концепция платформоцентричной войны; concept of platform-centric warfare
– ուղեվարածամանակային իրադրություն – навигационно-временная обстановка; navigation and temporal situation	– ցանցակենտրոն պատերազմի հայեցակարգ – концепция сетецентричной войны; concept of network-centric warfare
լավ կառավարում – надлежащее управление; good governance	հարված – удар; attack, strike
խանգարումաստեղծիչ – постановщик помех; jammer	– զանգվածեղ հարված – массированный удар; massive attack, concentrated blow
ծածկապաշտպանություն – прикрытие; cover, coverage	– կետային հարված – точечный удар; point attack
կապուղի – канал связи; communications channel, transmission link	հեռանդում – отражение, парирование; repulse, parrying
կործանիչ ավիացիա – истребительная авиация; fighters	ձևախախտում – деформация; deformation
հակաօդային պաշտպանություն – противовоздушная оборона; air defense	ձևարկված ձևաբերք – формализованный бланк; formalized blank, formalized form
համազարկային կրակ – залповый	

միասնականացում – унификация; unification	վերազինում – перевооружение; rearmament, reequipment
նորոգումն ապահովելու միջոցով – ремонт-пригодность; maintainability, repairability	տեղեկութային տարածություն – информационно-управляющее пространство; information-management space
շրջանացում – районирование; zoning	տեղեկութային միջավայր – информационно-моделирующая среда; information-design environment
չծածկապաշտպանված բև – неприкрытый фланг; undisguised flank	տեղեկութային շտեմարան – информационная база; informational background, infobase
ռադիոէլեկտրոնային – радиоэлектронный; radioelectronic	ցրման մակերևույթ – поверхность рассеяния; echoing area
– ռադիոէլեկտրոնային ճնշում – радиоэлектронное подавление; radioelectronic deception	նողաթիռակիր – вертолетоносец; helicopter carrier
– ռադիոէլեկտրոնային պայքար – радиоэлектронная борьба; radioelectronic warfare	փոփոխակ – модификация; modification
ռադիոտեղորոշումային դաշտ – радиолокационное поле; radar field	օպտիմալացում – оптимизация; optimization
սահմանային փոքր բարձրություն – предельно малая высота; par-of-the-earth	

## РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

авиабаза – ավիագորակայան	комплекс – համալիր
вертолетоносец – նողաթիռակիր	– автономный зенитно-ракетный комплекс – ինքնավար զենիթահրթիռային համալիր
высадка – ավիանուն	– комплекс ближнего действия – մերձահար համալիր
деформация – ձևախախտում	– наземный комплекс – վրագետնյա համալիր
живучесть – գոյունակություն	концепция – հայեցակարգ
залповый огонь – համազարկային կրակ	– концепция платформо-центричной войны – կայանքակենտրոն պատերազմի հայեցակարգ
информационная база – տեղեկութային շտեմարան	– концепция сетцентричной войны – ցանցակենտրոն պատերազմի հայեցակարգ
информационно-моделирующая среда – տեղեկութային միջավայր	мерцающий режим – առկայծման բանեկարգ
информационно-управляющее пространство – տեղեկութային տարածություն	модификация – փոփոխակ
истребительная авиация – կործանիչ ավիացիա	
канал связи – կապուղի	

надлежащее управление – լավ կառավարում	յուն
неприкрытый фланг – չծածկապաշտպանված թև	противовоздушная оборона – հակաօդային պաշտպանություն
обстановка – իրադրություն	радиоэлектронный – ռադիոէլեկտրոնային
– геопространственная обстановка – աշխարհատարածական իրադրություն	– радиоэлектронная борьба – ռադիոէլեկտրոնային պայքար
– навигационно-временная обстановка – ուղեվարժամանակային իրադրություն	– радиоэлектронное подавление – ռադիոէլեկտրոնային ճնշում
оптимизация – օպտիմալացում	радиолокационное поле – ռադիոտեղորոշումային դաշտ
отражение – հետմղում	районирование – շրջանացում
парирование – սմ. <i>отражение</i>	распознавание – զատորոշում
переворужение – վերազինում	ремонтпригодность – նորոգումայիտանիություն
поверхность рассеяния – ցրման մակերևույթ	удар – հարված
постановщик помех – խանգարումաստեղծիչ	– массиванный удар – զանգվածեղ հարված
предельно малая высота – սահմանային փոքր բարձրություն	– точечный удар – կետային հարված
прикрытие – ծածկապաշտպանություն	унификация – միասնականացում
	формализованный бланк – ձևարկված ձևաթերթ

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

air defense – հակաօդային պաշտպանություն	concentrated blow – see <i>massive attack</i>
air force base – ավիագորակայան	concept – հայեցակարգ
attack – հարված	– concept of network-centric warfare – ցանցակենտրոն պատերազմի հայեցակարգ
– massive attack – զանգվածեղ հարված	– concept of platform-centric warfare – կայանքակենտրոն պատերազմի հայեցակարգ
– point attack – կետային հարված	cover – ծածկապաշտպանություն
autonomous air defense missile system – ինքնավար զենիթահրթիռային համալիր	coverage – see <i>cover</i>
blinking regime – see <i>flashing regime</i>	debarkation – ավիանում
communications channel – կապուղի	deformation – ձևախախտում
complex – համալիր	echoing area – ցրման մակերևույթ
– ground complex – վրագետնյա համալիր	fighters – կործանիչ ավիացիա
– short-range complex – մերձահար համալիր	flashing regime – առկայծման բանեկարգ

formalized blank – ձևարկված ձևաթերթ	դաշտ
formalized form – see <i>formalized blank</i>	radioelectronic – ռադիոէլեկտրոնային
good governance – լավ կառավարում	– radioelectronic deception – ռադիոէլեկտրոնային ճնշում
helicopter carrier – ուղղաթիռակիր	– radioelectronic warfare – ռադիոէլեկտրոնային պայքար
infobase – see <i>informational background</i>	rearmament – վերազինում
information – 1. տեղեկույթ, 2. տեղեկատվական	recognition – գատորոշում
– information-design enviroment – տեղեկութամոդելավորող միջավայր	reequipment – see <i>rearmament</i>
– information-management space – տեղեկութակառավարող տարածություն	repairability – see <i>maintainability</i>
informational background – տեղեկութային շտեմարան	repulse – հետմղում
jammer – խանգարումաստեղծիչ	situation – իրադրություն
landing – ավիանում	– geospatial situation – աշխարհատարածական իրադրություն
maintainability – նորոգումապիտանիություն	– navigation and temporal situation – ուղեվարաժամանակային իրադրություն
modification – փոփոխակ	strike – see <i>attack</i>
nap-of-the-earth – սահմանային փոքր քարձրություն	survivability – գոյունակություն
optimization – օպտիմալացում	transmission link – see <i>communications channel</i>
parrying – see <i>repulse</i>	undisguised flank – չծածկապաշտպանված թև
radar field – ռադիոտեղորոշումային	unification – միասնականացում
	viability – see <i>survivability</i>
	volley fire – համազարկային կրակ
	zoning – շրջանացում



### **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և քեկնածուական առեմախոտությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և զաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները: Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

### **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

### **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ**

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անյրոնյան*  
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասպրրյան*  
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*  
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*  
Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Անգլերեն տեքստերի խմբագրում՝ *Ա. Հ. Հակոբյան, Ա. Մ. Մարտիրոսյան*  
Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի, Ա. Հ. Սարուխանյանի*  
Տեքստերի թարգմանությունը՝ *Ն. Ա. Մկրտչյանի, Ա. Մ. Մովսիսյանի, Լ. Հ. Պապիկյանի,*  
*Ք. Վ. Փիրոյանի*  
Համակարգչային ապահովումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի, Ա. Ա. Խաչատրյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի,*  
*Ա. Հ. Սարուխանյանի*  
Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՄՆԵՑՈՒ փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94  
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>  
Պաշտոնական բլոգ-կայք՝ <http://razmavaraget.wordpress.com>  
Էլ. փոստ՝ [haykakanbanak@mil.am](mailto:haykakanbanak@mil.am)

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների  
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2013 թ.

Ստորագրվել է տպագրության 12.11.2013: Թուղքը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:  
Տեքստը՝ 132 էջ+4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ: Տպաքանակը՝ 500:  
Տառատեսակները՝ «Արիալ», «Թայմս» և «Բարթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:  
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում



ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետ, ԲՀԾ երկրորդ դասի պետական խորհրդական  
Ա. Գրիգորյանը ներկայացնում է զինվորական ավանի գլխավոր հատակագիծը  
ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանին (աջից)  
և ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետի տեղակալ զեներալ-լեյտենանտ  
Հ. Բաղմանյանին (ձախից)

2013 թ. փետրվար



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ